ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

և դրա դեմ պայքարը 2016 թվականին

Զեկույց

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակության ցանկ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 3

ՆԱԽԱԲԱՆ 5

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 5

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ 9

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ 9

Փորձագիտական հանձնախումբ 11

ՀՀ կառավարության աշխատակազմ 12

ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով 13

ՀՀ վերահսկիչ պալատ 13

Իրավապահ մարմիններ 14

ՀՀ դատարաններ 15

ՀՀ արդարադատության նախարարություն 15

Ամփոփում 16

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 16

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա 16

ԳՐԵԿՈ 25

ՏԶՀԿ (OECD) 37

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 54

Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում 56

Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում 61

Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում 65

Մասնակցային կառավարման համակարգի ձևավորում 68

Կոռուպցիոն վարքագծի համարպատասխանատվության համարժեք միջոցների սահմանում 71

Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար գործուն միջոցների ձեռնարկում 73

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 75

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ 76

Շահերի բախում 76

Հանրային միջոցների անբարեխիղճ օգտագործում կամ չարաշահում 77

Ապրիլյան պատերազմի բացահայտումներ 78

Էթիկայի կանոնների խախտում 79

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 79

ՀԱՎԵԼՎԱԾ 80

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սույն զեկույցը ներկայացնում է կոռուպցիայի իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը 2016 թվականին: Այն հանդիսանում է Հայաստանում կոռուպցիայի իրավիճակի և դրա դեմ պայքարի վերաբերյալ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի երկրորդ տարեկան զեկույցը (նախորդը զեկույցը ներկայացնում էր 2015թ.-ի իրավիճակը): Ներկայացված է կոռուպցիոն իրավիճակն ըստ միջազգային հետազոտությունների, մասնավորապես, Թրանսփարենսի Ինթերնեշնլի, Համաշխարհային Բանկի, Ֆրիդոմ Հաուզի և Համաշխարհային տնտեսական ֆորումի համաթվերի վրա հիմնված: Զեկույցում նկարագրված են նաև Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական կառույցները: Այդ կառույցներն են Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդն իր փորձագիտական հանձնախմբով, ՀՀ կառավարության աշխատակազմը, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, ՀՀ վերահսկիչ պալատը, իրավապահ մարմինները, դատարանները և ՀՀ արդարադատության նախարարությունը:

Հայաստանի միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների մոնիտորինգը ներառում է Հայաստանի՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի և ԳՐԵԿՈ-ի կազմում, ինչպես նաև Տնտեսական համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ) Ստամբուլի գործողությունների ծրագրում ներգրավված լինելուց բխող պարտավորությունների մոնիտորինգը: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Հայաստանի առաջին փուլի (2010-2015թթ.) գնահատման զեկույցով սահմանվել էին 21 մարտահրավերներ (պարտավորություններ), որոնցից այնուհետև դիտարկվել են 17-ը: 2016թ.-ին դրանցից մասամբ իրականացվել էր միայն 5 պարտավորություն, իսկ մնացած 12-ը շարունակում են մնալ չիրականացված: Այսպիսի անբավարար կատարողականը զգալի չափով պայմանավորված է նաև նրանով, որ մինչև հիմա մշակված չեն պարտավորությունների կատարման մոնիտորինգի մեխանիզմները և ընթացակարգերը:

2015թ. գարնանից Հայաստանը գտնվում է ԳՐԵԿՈ-ի գնահատման չորրորդ փուլում, որը գնահատում է ԳՐԵԿՈ-ի անդամ երկրների օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, պատգամավորների, դատախազների և դատավորների դեպքում կոռուպցիայի կանխարգելումը, մասնավորապես, էթիկայի և վարքագծի կանոնները, շահերի բախումը, գույքի և եկամուտների հայտարարագրումը և այլն: Նույն թվականի հոկտեմբերին ԳՐԵԿՈ-ի պլենար նիստում ընդունվեց կազմակերպության փորձագետների կողմից պատրաստած՝ Հայաստանի գնահատման զեկույցը, որի հիման վրա սահմանվեցին 18 հանձնարարականներ (պարտավորություններ): Այդ հանձնարարականների իրականացման վերջնաժամկետ սահմանվեց 2017թ. ապրիլի 30-ը: Նշված թվից 4-ական հանձնարարականներ վերաբերում են պատգամավորներին և դատախազներին, 7-ը՝ դատավորներին, իսկ մնացած 3-ը վերաբերում են նշված բոլոր պաշտոնյաներին: Ինչպես ցույց է տալիս հանձնարարականների կատարման մոնիտորինգը, 2016թ. ընթացքում ոչ մի հանձնարարական լիովին չի իրականացվել, իսկ մասամբ իրականացվել են 11-ը: Չեն իրականացվել 7 հանձնարարականներ, ընդ որում, դրանց թվում են երեք խումբ պաշտոնյաներին վերաբերող բոլոր 3 հանձնարարականները:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլի գործողությունների ծրագրի մոնիտորինգի երրորդ փուլը Հայաստանի համար սկսվեց 2014թ. հոկտեմբերին, և այն պլանավորված է ավարտել 2018թ. գարնանը: Այս փուլում Հայաստանը պետք է կյանքի կոչի 23 հանձնարարական, որոնք դասակարգված են երեք խմբում: Այդ խմբերն են. ա/ հակակոռուպցիոն քաղաքականությունը և ինստիտուցիոնալ համակարգը (4 հանձնարարական), բ/ կոռուպցիայի քրեականացումը (5 հանձնարարական), գ/ կոռուպցիայի կանխարգելումը (14 հանձնարարական): 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ մի

հանձնարարական դեռևս լիովին իրականացված չէր, մասամբ իրականացված էր 14 հանձնարարական և չէր իրականացված 8 հանձնարարական: Մեկ հանձնարարականի իրականացումը չէր գնահատվել, քանի որ 2016թ. ընթացքում այն կիրառել/չկիրառելու առիթ չէր եղել:

Սույն ուսումնասիրության շրջանակներում մոնիտորինգի էին ենթարկվել նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի այն միջոցառումները, որոնց համար այդ ծրագրով սահմանված են եղել ակնկալվող արդյունքներ 2016թ. համար, ինչպես նաև այն միջոցառումները, որոնց համար 2015թ. համար սահմանված ակնկալվող արդյունքները, ելնելով այդ տարվա մոնիտորինգի արդյունքներից, կամ չեն ստացվել (իրականացվել) կամ էլ ստացվել են մասամբ: Ընդհանուր առմամբ, մոնիտորինգի է ենթարկվել ծրագրի 54 միջոցառումներից 46-ը, որից 36-ն այն միջոցառումներն էին, որոնց համար սահմանված էր ակնկալվող արդյունք միայն 2016թ. համար, 6-ի համար ակնկալվող արդյունքներ էին սահմանված և՝ 2015, և՝ 2016 թվականների համար, իսկ 4-ն այն միջոցառումներին էին, որոնց համար ակնկալվող արդյունքներ սահմանված էին միայն 2015թ. համար և այդ արդյունքները չէին ստացվել կամ մասամբ էին ստացվել: 42 միջոցառումների համար 2016թ. համար սահմանված ակնկալվող արդյունքներից (36-ի համար միայն 2016թ. համար, իսկ 6-ի համար և՝ 2016, և՝ 2015 թվականների համար) լիովին իրականացված են եղել 13-ը: Մասամբ իրականացվել է 19 ակնկալվող արդյունք, իսկ 9 արդյունք չի իրականացվել: Եվս մեկ ակնկալվող արդյունք սույն զեկույցը պատրաստելիս դարձել է ոչ կիրառելի: Ինչ վերաբերում է այն 10 միջոցառումներին, որոնց համար սահմանված էր ակնկալվող արդյունք 2015թ. համար (4-ի համար միայն 2015թ. համար, իսկ 6-ի համար և՝ 2016, և՝ 2015 թվականների համար), ապա դրանցից երկուսն ամբողջովին իրականացվեցին 2016թ.-ին, իսկ մնացած 8-ի դեպքում դրանց իրականացումը հնարավոր չէր գնահատել, քանի որ այդ ակնկալվող արդյունքները կատարված ուսումնասիրություններ էին, որոնց վերաբերյալ հնարավորություն չեղավ որևէ տեղեկատվություն գտնել համապատասխան պետական մարմինների պաշտոնական կայքերում:

ՆԱԽԱԲԱՆ

«Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը 2016 թվականին» տարեկան հետազոտությունն անդրադառնում է 2016թ. ընթացքում Հայաստանում կոռուպցիայի իրավիճակին՝ ելնելով միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հրապարակված կոռուպցիայի համաթվերից, Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերին ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային հանձնարարականների և պարտավորությունների, ինչպես նաև Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի իրականացումից[1]: Հետազոտության մեջ անդրադարձ է կատարված նաև կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրությանը, ինչպես նաև 2016թ. ընթացքում լրատվամիջոցների կողմից լուսաբանված հնչեղ կոռուպցիոն դեպքերին, որոնք վեր են հանվել լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության առանձին հարցերն ուսումնասիրվել են հետևյալ մեթոդաբանությամբ:

ԹԻՀԿ-ի կողմից գնահատվել է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի[2] ընթացքը՝ հիմք ընդունելով 2015և 2016 թվականներին նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատու մարմինների պաշտոնական կայքերում հասանելի տեղեկատվությունը, ինչպես նաև 2017թ. հունվարին այդ մարմիններին ուղղված հարցումների պաշտոնական պատասխանները: Գնահատվել են 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի միայն այն միջոցառումները, որոնց համար միջանկյալ կամ վերջնական ակնկալվող արդյունք նախատեսված է եղել 2016. և 2015 թվականների համար: Վերջիններից ուսումնասիրվել են միայն այն միջոցառումները, որոնց համար, ըստ միջոցառումների ծրագրի, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված էին ակնկալվող արդյունքներ, սակայն այդ արդյունքները կա՛մ մասամբ էին ստացվել, կա՛մ չէին ստացվել:

Պետական մարմինների պատասխաններում ներկայացված տեղեկատվությունը ոչ հստակ կամ թերի լինելու դեպքում այն լրացուցիչ ստուգվել է իրավասու մարմնի ներկայացուցչի հետ հարցազրույցի միջոցով: Որոշ պարտավորությունների և միջոցառումների կատարողականների գնահատման համար որպես լրացուցիչ տեղեկատվության աղբյուր դիտարկվել են նաև ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների համապատասխան զեկույցները:

Միջազգային պարտավորությունների իրականացման, ինչպես նաև պետական հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի

[1] Հայաստանում կոռուպցիոն իրավիճակի և դրա դեմ պայքարի վերաբերյալ ԹԻՀԿ-ի սույն զեկույցը թվով երկրորդն է: Նախորդ հետազոտությունն արվել է 2015 թվականի համար, https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf

[2] ՀՀ կառավարություն, 2015թ. սեպտեմբերի 25 Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը եվ դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին 1141-Ն որոշում:

գնահատման համար օգտագործվել են «**իրականացված**», «**մասամբ իրականացված**» և «**չիրականացված**» գնահատականները:

Կոռուպցիոն հանցագործությունների հետապնդման և դատապարտման պատկերը կազմելու համար հիմք են ընդունվել ՀՀ գլխավոր դատախազի 19.11.2008թ.-ի N82 հրամանով հաստատված[3] և 19.03.2013թ.-ի N3 հրամանով լրամշակված կոռուպցիոն հանցատեսակները[4] և ՀՀ գլխավոր դատախազության կայքում առկա այդ հանցատեսակների առնչությամբ իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունը: Որոշ բացակայող տվյալներ վերցվել են նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) հրապարակումներից: Իրավապահ մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի դինամիկան պարզելու նպատակով 2016թ. տվյալները համադրվել են նաև 2009-2016թթ.ժամանակահատվածի տվյալների հետ:

Շահերի բախման դեպքերը և կոռուպցիոն դրսևորումները վեր են հանվել առցանց լրատվամիջոցների լուսաբանումների ընթացիկ մոնիտորինգի արդյունքում՝ դիտարկելով կոռուպցիոն թեմաներին առավել հաճախ անդրադարձ կատարող լրատվամիջոցները՝ «Հետք»-ը, «Հայկական ժամանակ»-ը, «Հրապարակ»-ը և «Սիվիլնեթ»-ը:

[3] https://transparency.am/hy/corruption-in-armenia/crime-types
[4] http://www.prosecutor.am/myfiles/files/Hraman3.pdf և http://www.prosecutor.am/myfiles/files/Cank.pdf

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) տարին մեկ հրապարակվող Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿՀՀ) 2016թ. Հայաստանի արժեքը հավասար էր 33 միավորի, ընդ որում, Հայաստանը Վիետնամի և Բոլիվիայի հետ միասին ԿՀՀ դասակարգման աղյուսակում 176 երկրների շարքում կիսում էր 113-115-րդ հորիզոնականները[5]: Ըստ ԿՀՀ-ի, որքան ցածր է երկրի միավորը, այնքան այդ երկրում կոռուպցիան ընկալվում է ավելի մասշտաբային, և դրանով իսկ պայմանավորվում է երկրի զբաղեցրած դիրքը (ցածր հորիզոնականը): ԿՀՀ-ն հաշվարկվում է հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակի փորձագիտական գնահատականների հիման վրա՝ հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունները:

Սա հանդիսանում է 2015թ. համեմատությամբ Հայաստանի դիրքի վատթարացում, քանի որ 2015թ. տվյալներով Հայաստանի ԿՀՀ արժեքը 35 միավոր էր, և 168 երկրների շարքում Ֆիլիպինների և Մալիի հետ կիսում էր 95-97-րդ հորիզոնականները: Այնուամենայնիվ, 2015թ. արդյունքներով Հայաստանը հանդիսանում էր Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների շարքում բացարձակ առաջատարը[6]: Պետք է նկատել, որ Հայաստանը զիջել է իր առաջատարի դիրքերը նաև ԵԱՏՄ-ում, և այժմ առաջատարը Բելառուսն է, որը 2016թ. ԿՀՀ տվյալներով 40 միավորով կիսում է 79-82-րդ հորիզոնականները Չինաստանի, Հնդկաստանի և Բրազիլիայի հետ[7]:

Հայաստանի ցուցանիշները մտահոգիչ են ԹԻ-ի կողմից կազմվող մեկ այլ զեկույցի՝Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՀԲ) 2016թ.շրջանակներում[8]: ԿՀԲ-ն դեմ առ դեմ հարցազրույցների մեթոդի վրա հիմնված հետազոտություն է, որը ցույց է տալիս կոռուպցիայի նկատմամբ հանրության վերաբերմունքը և կոռուպցիոն երևույթների հետ շփման նրա փորձը: Ըստ 2016թ.-ին իրականացված քաղաքացիների հարցումների արդյունքների, որպես ամենից կոռումպացված կառույցներ ընկալվել են պետական պաշտոնյաները (45%), Հանրապետության Նախագահը և նրա աշխատակազմը (44%), հարկային մարմինների պաշտոնյաները (43%), պատգամավորները (42%) և դատավորները (41%): Ամենից մտահոգիչ արդյունքն այն է, որ Հայաստանում հարցվածների 63%-ը կարծում է, որ շարքային քաղաքացու ներգրավվումը կոռուպցիայի դեմ պայքարում ոչինչ չի փոխի: Սա հանդիսանում է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) տարածքում ամենից ցածր ցուցանիշը, իսկ ողջ տարածաշրջանում՝ երրորդ ամենից վատ ցուցանիշը՝ Չեխիայից և Հունգարիայից հետո (երկու երկրների դեպքում էլ՝ 64%): Ավելի մտահոգիչ պատկեր է նաև գրանցվել այն առումով, որ հարցվածների 67%-ը նշել է, որ չի բարձրաձայնի կոռուպցիոն դեպքերի մասին, ինչը հանդիսանում է ամենից վատ ցուցանիշը տարածաշրջանում: Նշված անձանց 41%-ը, որպես կոռուպցիոն դեպքերի մասին չհայտնելու պատճառ, նշել է վախը հնարավոր հետևանքներից:

Համաձայն «Ֆրիդոմ Հաուզ» անկախ կազմակերպության «Անցումային պետություններ» վարկանիշային տարեկան հետազոտության, 2016թ. «Կոռուպցիա» դասակարգման արժեքը Հայաստանի դեպքում հավասար էր 5.25 միավորի[9]: Պետք է նկատել, որ «Կոռուպցիա»

---

[5] https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016#regional
[6] Կոռուպցիոն իրավիճակը Հայաստանում և դրա դեմ պայքարը 2015թ., ԹԻՀԿ, Երևան, 2016թ., էջ 6: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf
[7] Նույն տեղում
[8] https://transparency.am/hy/gcb
[9] https://freedomhouse.org/report/nations-transit/2015/armenia

դասակարգման համար Հայաստանի միավորը «Ֆրիդոմ Հաուզ» կազմակերպությունը չի փոխել սկսած 2012թ.-ից[10]: Այս հետազոտությամբ հաշվարկվում է երկրների ժողովրդավարության աստիճանը,որը հավասար է 7 դասակարգումների միջին թվաբանականին: Հայաստանի 2016թ. ժողովրդավարության միավորը կրկին կազմել է 5.36, և այս միավորը անփոփոխ է սկսած 2013թ.-ից[11]: Այս միավորը, ըստ Ֆրիդոմ Հաուզի, հիմք է երկիրը կիսակոնսոլիդացված ավտորիտար ռեժիմ համարելու համար, որտեղ կոռուպցիան համատարած է և կոռուպցիայի դեմ պայքարելու ջանքերը սովորաբար պայմանավորված են քաղաքական դրդապատճառներով[12]:

Համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի «Մրցունակության 2016-2017թթ. Համաշխարհային զեկույցի», որը հրապարակվել է 2016թ. սեպտեմբերի 28-ին, Հայաստանում կոռուպցիան համարվում է բիզնեսով զբաղվելուն խոչընդոտող երկրորդ լրջագույն գործոնը (16 գործոնների շարքում)՝ ֆինանսների մատչելիությունից հետո, և 0-ից 16 սանդղակում այն կազմել է 11.3 միավոր[13]:

[10] https://freedomhouse.org/report/nations-transit/2016/armenia
[11] Նույն տեղում
[12] https://freedomhouse.org/report/nations-transit-methodology
[13] http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf, էջ100

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական կառույցներն են հանդիսանում՝

- Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը
    - Փորձագիտական հանձնախումբը
- ՀՀ կառավարության աշխատակազմը
- ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը[14]
- ՀՀ վերահսկիչ պալատը[15]
- ՀՀ իրավապահ մարմինները
- ՀՀ դատարանները
- ՀՀ արդարադատության նախարարությունը:

Վերոնշյալ կառույցների իրավասությունները սահմանված են հետևյալ կերպ.

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ի պաշտոնե ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից և ունի 12 անդամ, որից 5-ը գործադիր իշխանության ներկայացուցիչներ են[16], իսկ 7-ը՝ պետական այլ մարմինների ներկայացուցիչներ[17], ինչպես նաև Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի 1 ներկայացուցիչ և քաղաքացիական հասարակության 4 ներկայացուցիչներ, այդ թվում՝ մասնավոր հատվածի հասարակական կազմակերպությունների 2 ներկայացուցիչներ[18]:

Խորհրդի գործառույթները սահմանվում են ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N 165-Ն որոշման հավելված 2-ի 2-րդ կետով, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել 6 խմբի՝

- տեխնիկական բնույթի.
- հակակոռուպցիոն ռազմավարության և ոլորտային ծրագրերի վերաբերյալ կարծիքի հայտնում.
- հսկողություն հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ.
- հակակոռուպցիոն ռազմավարության, միջազգային պարտավորությունների և ոլորտային ծրագրերի իրականացման համակարգում.
- մոնիտորինգի արդյունքների քննարկում:
- Համագործակցություն

<u>Տեխնիկական բնույթի գործառույթներ</u> խմբին են դասվում Խորհրդի այն գործառույթները, որոնք կապված են խորհրդի աշխատակարգի հաստատման, փորձագետների հանձնախմբի

---

[14] 2017թ. հունիսի 9-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի համաձայն, այս հանձնաժողովի փոխարեն կազմավորվելու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

[15] Ելնելով 2015թ. սահմանադրական փոփոխություններից՝ Վերահսկիչ պալատը կվերափոխվի Հաշվեքննիչ պալատի:

[16] ՀՀ փոխվարչապետ-միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար, ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ ֆինանսների նախարար, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար:

[17] ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահը, ՀՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, ՀՀ ԱԺ ընդիմադիր խմբակցություններից մեկական ներկայացուցիչ, ՀՀ հանրային խորհրդի նախագահը և Հայաստանի համայնքների միության մեկ ներկայացուցիչ:

[18] ՀՀ կառավարության 29.12.2016թ.-ի N 1383-Ն որոշում:

աշխատակարգի հաստատման և ընտրության կարգի, ինչպես նաև նրանց ներկայացվող չափանիշների հետ:

Հակակոռուպցիոն ռազմավարության և ոլորտային ծրագրերի վերաբերյալ կարծիքի հայտնում, որի շրջանակներում Խորհուրդը՝

- քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարությանը.
- քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերին.
- ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.
- ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Հսկողություն հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ, որի շրջանակներում Խորհուրդը հսկողություն է իրականացնում հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնարարականներից բխող միջոցառումների կատարման, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի նկատմամբ: Այս գործառույթը Խորհուրդն իրականացնում է հետևյալ միջոցներով՝

- առաջարկություններ են ներկայացնում պատասխանատու մարմիններին.
- պահանջում է հաշվետվություններ և վերլուծություններ.
- կազմակերպում ու անցկացնում է քննարկումներ, հանդիպումներ, լսումներ:

Հակակոռուպցիոն ռազմավարության և միջազգային պարտավորությունների և ոլորտային ծրագրերի իրականացման համակարգում, որի ներքո Խորհուրդը համակարգում է հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնարարականներից բխող միջոցառումների իրականացումը, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը: Այս գործառույթի իրականացման նպատակով Խորհուրդը իրավասու է պետական մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ նյութեր ու տեղեկատվություն, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, լսումներ:

Մոնիտորինգի արդյունքների քննարկում, որի շրջանակներում Խորհուրդը քննարկում է հակակոռուպցիոն ծրագրերի գնահատման (մոնիտորինգի) արդյունքները և հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա առաջարկություններ ներկայացնում պատասխանատու մարմիններին:

Համագործակցություն, որով Խորհուրդը պետք է կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում համագործակցի միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ, այդ թվում՝ համակարգված հանդիպումների միջոցով: Ընդ որում, համակարգված հանդիպումների ժամանակ քննարկումներ են տեղի ունենում իրականացված միջոցառումների, խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ՝ միաժամանակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև

ապահովելով պատշաճ հաղորդակցություն և արդյունավետ համագործակցություն: Քննարկումների արդյունքում ներկայացված կարծիքները խորհուրդը կարող է ներառել իր նախապատրաստած առաջարկությունների մեջ:

Եվ վերջում պետք է նշել, որ Խորհրդի՝ Փորձագիտական հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա պատասխանատու մարմիններին ներկայացրած առաջարկությունները կենսագործվում են ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ վարչապետի կամ պատասխանատու մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերով: Խորհրդի առաջարկությունները կարող են հիմք ծառայել նաև ՀՀ Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի համար:

Փորձագիտական հանձնախումբ

Հանձնախմբի առաքելությունը կայանում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու մեջ: Նրա գործառույթները սահմանված են ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N 165-Ն որոշման հավելված 2-ի 17-րդ կետով: Այդ գործառույթները կարելի է բաժանել 3 խմբի՝

- Գիտահետազոտական բնույթի գործառույթներ.
- Քարոզչական բնույթի գործառույթներ.
- Խորհրդի գործունեությանը օժանդակող տեխնիկական բնույթի գործառույթներ:

Պետք է նշել նաև, որ Խորհուրդն իրավունք ունի հանձնախմբին տալու նաև այլ հանձնարարություններ:

Գիտահետազոտական բնույթի գործառույթներ

Այս գործառույթի շրջանակում Հանձնախումբը՝

- աջակցում է հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի նախագծերի մշակմանը.
- իրականացում է ծրագրերի մոնիտորինգ, գնահատում, ամփոփում է ծրագրերի իրականացման մասին հաշվետվությունները.
- խորհրդի կողմից նախանշված, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ոլորտներում իրականացնում է կոռուպցիայի դրսևորումների և պատճառների ուսումնասիրություն, վերլուծություն ու դրանց առավել արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.
- խորհրդի հանձնարարությամբ մշակում է ուղեցույցներ և ներկայացնում խորհրդի հավանությանը, պատասխանատու մարմիններին ցուցաբերում է մեթոդական և այլ աջակցություն.
- նախապատրաստում է հաշվետվություններ, զեկույցներ ծրագրերի կատարման վիճակի մասին և առաջարկություններ ներկայացնում խորհրդին.
- առաջարկություններ է ներկայացնում խորհրդին ռազմավարությունում և/կամ հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ:

Քարոզչական բնույթի գործառույթներ

Այս գործառույթը հիմնականում կայանում է նրանում, որ հանձնախումբը խորհրդի հանձնարարությամբ իրականացնում է միջոցառումներ կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնմանն ու տարածմանը նպաստելու համար՝

մասնակցելով տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստման աշխատանքներին, հանդես գալով զանգվածային լրատվության միջոցներով և այլն: Այս գործառույթի իրականացման համար հանձնախումբը համագործակցում է պետական մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հետ:

Խորհրդի գործունեությանը օժանդակող տեխնիկական բնույթի գործառույթներ

Այս գործառույթի առանձնացման հիմնական պատճառն այն է, որ այն իր բնույթով տարբերվում է վերոնշյալ երկու խումբ գործառույթներից: Հանձնախումբը ապահովում է Խորհրդի համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, տեղական գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ:

ՀՀ կառավարության աշխատակազմ

ՀՀ կառավարության աշխատակազմում գործում է հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժին, որն ապահովում է կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպահրավական գործառույթը: Բաժնի գործառույթները նույնպես սահմանվում են ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N 165-Ն որոշման հավելված 2-ում[19], ըստ որի, այն կազմակերպում է փորձագիտական հանձնախմբի աշխատանքները և ապահովում փորձագետների կապը ոլորտային պետական լիազոր մարմինների պատասխանատուների հետ: Բացի այդ, այն կատարում է նաև մոնիտորինգի, հսկման, քարոզչական և փորձագիտական գործառույթներ:

Մոնիտորինգային գործառույթը կայանում է նրանում, որ այն իրականացնում է հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների, ծրագրի, հաշվետվությունների և միջազգային պայմանագրերով կոռուպցիայի դեմ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցների մոնիտորինգ:

Հսկողության գործառույթը պայմանավորված է նրանով, որ այն իրականացնում է իր գործունեության ոլորտներին առնչվող ՀՀ կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն: Հսկողության մասին այն տեղեկատվություն է ներկայացնում Խորհրդին:

Փորձագիտական գործառույթի ներքո բաժինն իրականացնում է ՀՀ կառավարության և վարչապետի քննարկմանը և կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի մասնագիտական փորձաքննություն՝ կապված հակակոռուպցիոն ռազմավարության, հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի և այլ իրավական ակտերով հաստատված (սահմանված) հակակոռուպցիոն ծրագրերի հետ: Բացի այդ, բաժինը առանձին հարցերի առումով մասնագիտական փորձաքննություն է անում և տալիս համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ:

Քարոզչական գործառույթը կայանում է նրանում, որ բաժինը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տեղական և միջազգային ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպում և իրականացնում է

[19] Հավելված 2, կետ 21, ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N 165-Ն որոշում:

միջոցառումներ՝ քննարկումներ, կլոր սեղաններ, տարածում է տեղեկատվական նյութեր և ուղեցույցներ:

ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի դերակատարությունը և գործառույթները սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Հանձնաժողովի հիմնական գործառույթը կոռուպցիայի դեմ պայքարում գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստրի վարումը և դրանց ուսումնասիրությունն է, ինչպես նաև էթիկայի և շահերի բախման դեպքերի կանոնակարգումը բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում: Հանձնաժողովի գործունեության վերոհիշյալ ուղղություններն առավել մանրամասն սահմանված են օրենքի հոդված 43-ում, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբի.

Հայտարարագրեր. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց և փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ռեեստրի վարում, հայտարարագրերի վերլուծություն և հրապարակում, հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և ներկայացման կարգի սահմանում:

Շահերի բախում. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների շահերի բախման) շահերի բախման բացահայտումը և դրանց վերացման ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը ՀՀ Նախագահին, Ազգային ժողով և կառավարություն, ինչպես նաև բացահայտված շահերի բախման դեպքերի կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:

Էթիկայի կանոններ. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց (բացառությամբ սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների պաշտոնեական լիազորությունների իրականացմանն առնչվող, ինչպես նաև պատգամավորների կողմից էթիկայի կանոնների խախտումների) էթիկայի կանոնների խախտման բացահայտումը և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, կառավարություն: Բացի այդ, հանձնաժողովը պարտավոր է բացահայտել Սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների պաշտոնեական լիազորությունների իրականացման հետ չառնչվող էթիկայի կանոնների խախտումները և դրանց վերացմանն ու կանխարգելմանն ուղղված առաջարկությունները ներկայացնել Հանրապետության Նախագահին, Ազգային ժողով, Սահմանադրական դատարան և Գլխավոր դատախազին: Հանձնաժողովը պարտավոր է նաև հրապարակել իր իրավասության շրջանակում բացահայտված էթիկայի կանոնների խախտումների, դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ վերահսկիչ պալատ

Ըստ էության Վերահսկիչ պալատի դերակատարությունը կոռուպցիայի դեմ պայքարում կայանում է բյուջետային միջոցների, պետական և համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում: 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս կառույցը վերափոխվելու է և փոխվելու է նաև նրա անվանումը՝ դառնալով Հաշվեքննիչ պալատ: Համաձայն Սահմանադրության 220-րդ հոդվածի, Վերահսկիչ պալատի անդամները շարունակում են պաշտոնավարել որպես

Հաշվեքննիչ պալատի անդամներ: Սակայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցվելու է Սահմանադրությանը և ուժի մեջ է մտնելու Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը[20]: Այդ իսկ պատճառով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը շարունակում է մնալ ուժի մեջ: Սույն զեկույցում ներկայացվում է Վերահսկիչ պալատը՝ համաձայն 2016թ. գործող օրենքի կարգավորումների:

Վերահսկիչ պալատը բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ արտաքին պետական վերահսկողություն իրականացնող անկախ պետական մարմինն է[21]: Վերահսկիչ պալատի խնդիրներն ու գործառույթները սահմանվում են «Վերահսկիչ պալատի մասին» օրենքի հոդված 5-ով:

Վերահսկիչ պալատն իրականացնում է 4 բնույթի վերահսկողություն[22].

Ա. *Ֆինանսական վերահսկողություն*, որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման ընթացքում ֆինանսատնտեսական փաստաթղթերի վարման և արդյունքում ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը:

Բ. *Համապատասխանության վերահսկողություն*, որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունն իրավական ակտերով սահմանված պահանջներին:

Գ. *Արդյունավետության (կատարողական) վերահսկողություն*, որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման, ինչպես նաև առաջադրված նպատակին հասնելու արդյունավետությունը:

Դ. *Բնապահպանական վերահսկողություն*, որի միջոցով որոշվում է բյուջետային միջոցների և պետական սեփականության օգտագործման համապատասխանությունը բնապահպանության ոլորտի օրենսդրական ակտերի պահանջներին՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը գնահատելու նպատակով:

Իրավապահ մարմիններ

Կոռուպցիայի դեմ պայքարող իրավապահ մարմինները Հայաստանում նախաքննության մարմիններն են և դատախազությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ մարմինները քննում են քրեական օրենսդրության շրջանակում կոռուպցիոն դեպքերը, կասկածյալների նկատմամբ մեղադրանք են առաջադրում և մեղադրանքը ներկայացնում դատարանում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածը սահմանում է նախաքննության մարմինների քննչական ենթակայությունը: Ըստ այդ հոդվածի, կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում նախաքննություն իրականացնող մարմիններն են ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ մաքսային մարմինների քննիչները և ՀՀ քննչական կոմիտեն: Պետք է նշել նաև, որ ՀՀ գլխավոր դատախազն իր 19.01.2017թ.-ի N3 հրամանով ուժը կորցրած է ճանաչել 19.11.2008թ.-ի N82 հրամանը, որը վերաբերում էր կոռուպցիոն հանցագործությունների

[20] ՀՀ Սահմանադրություն, հոդված 210
[21] ՀՀ օրենքը «Վերահսկիչ պալատի մասին», հոդված 1, մաս 1
[22] Նույն տեղում, հոդված 4

ցանկին, և հաստատել նորը: Նոր ցանկը հանդիսանում է ավելի ծավալուն և ընդգրկում է շուրջ 84 հանցակազմեր[23]: Հարկ է նշել, որ ցանկի ծավալումը հակասում է ՏՀՁԿ փորձագետների առաջարկություններին[24]:

Ինչ վերաբերում է դատախազությանը, ապա այն հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ և դատարանում պաշտպանում է մեղադրանքը[25]: Բացի այդ, դատախազությունն ունի նաև լիազորություններ քննչական ենթակայության հարցը լուծելու հետ կապված: Այն սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 190-ի 6-րդ մասի 2-րդ պարբերության մեջ. *«Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել քրեական գործեր, որոնք առնչվում են սույն մասում թվարկված պաշտոնատար անձանց հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործություններին, կամ որոնցով այդ անձինք ճանաչված են որպես տուժող, ինչպես նաև ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն»:*

ՀՀ դատարաններ

Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը[26]: Կարող են ստեղծվել նաև մասնագիտացված դատարաններ: ՀՀ օրենսդրության համաձայն, դատարանը պետք է գործերը անկողմնակալ և օբյեկտիվ քննի և ընդունի դատական ակտեր:

Կոռուպցիոն գործերը քննվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում և բողոքարկվում են ըստ աստիճանակարգության: Հայաստանում չեն գործում մասնագիտացված հակակոռուպցիոն դատարաններ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 27.1-ի համաձայն, Արդարադատության նախարարությունն իրականացնում է իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատում կոռուպցիոն հարցերով, այսինքն՝ վերլուծում է իրավական ակտերի ընդունման արդյունքում հնարավոր փոփոխությունները կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից[27]: Հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 22.10.2009թ.N1205-ն որոշմամբ[28]:

Հարկ է նկատել նաև, որ նախարարությունը հանդիսանում է նաև պատասխանատու մարմին (focal point) հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների և

[23] Ցանկն ամբողջությամբ հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.prosecutor.am/myfiles/files/Cank.pdf
[24] https://www.oecd.org/daf/anti-bribery/Armenia-Round-3-Monitoring-Report-ENG.pdf, էջ 40
[25] ՀՀ Սահմանադրություն, հոդված 176, մաս 2
[26] ՀՀ Սահմանադրություն, հոդված 163
[27] «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված, մաս 27.1
[28] ՀՀ կառավարության 22.10.2009թ.N1205-ն որոշում, Հավելվածի 1, կետ 4

հանձնարարականների մասով, որը սահմանված է համապատասխան միջազգային և տարածաշրջանային մարմնի հետ հաղորդակցական բնույթի գրագրությամբ:

Ամփոփում

Վերոնշյալ կառույցների իրական գործունեությունը շատ դեպքերում էապես տարբերվում է այն գործառույթներից, որ նրանք տիրապետում են ըստ իրենց գործունեությունը կարգավորող իրավական ակտերի: Թերևս, բացառություն է կազմում միայն ՀՀ արդարադատության նախարարությունը և Վերահսկիչ պալատը: Այս երկու կառույցները կատարում են իրենց գործառույթները այս ոլորտում՝ հաշվի առնելով սեփական առաքելությունը և գործառույթները: Սակայն տարբեր է կատարողականի իրավիճակը այլ կառույցների դեպքում: Օրինակ՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը 2016թ. ընթացքում հարուցել է լոկ մեկ վարույթ և հետագայում վարույթը կարճել: Մինչդեռ, վարույթ հարուցելու առիթները բազմաթիվ են եղել, որի մասին նշված է սույն զեկույցի «Շահերի բախում և կոռուպցիոն դրսևորումներ» բաժնում:

Այստեղ պետք է հիշատակել նաև Փորձագիտական հանձնախմբին, որի ձևավորումը զգալիորեն ձգձգվել է և 2016թ. ընթացքում հասարակությանը հայտնի որևէ գործառույթ չի իրականացնել: Նույնը վերաբերում է ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժնին: Բացի այդ, նույնն է իրավիճակը նաև Խորհրդի դեպքում, որն օրինակ ոչ մի առաջարկություն չի ներկայացրել կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարությունում որևէ փոփոխություն կատարելու ուղղությամբ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք հանձնարարականներ և պարտավորություններ միջազգային տարբեր գործիքների ներքո: Դրանք են՝

- Միացյալ ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիային (ՄԱԿԿԴԿ) մասնակցությունը.
- Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետությունների հատուկ խմբին անդամակցությունը (ԳՐԵԿՈ).
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) շրջանակներում գործող Ստամբուլյան գործողությունների ծրագիրը:

Վերոգրյալ բոլոր երեք փաստաթղթերի դեպքում ՀՀ-ի կողմից որպես պատասխանատու կառույց (focal point) ներկայանում է ՀՀ արդարադատության նախարարությունը իր աշխատակազմի միջոցով: Ստորև ներկայացվում են այդ փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների իրականացման վերաբերյալ ԹԻՀԿ-ի կատարած մոնիտորինգի արդյունքները:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա

2005թ. Հայաստանը ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԿԴԿ), որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006թ., իսկ

2007թ. ապրիլի 7-ին երկիրը միացել է Կոնվենցիային: Կոռուպցիայի դեմ կոնվենցիան համապարտադիր համաձայնագիր է, և այն ստորագրած պետությունների միջև սահմանում է կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման, հետաքննման և պատժելիության չափանիշներ և պահանջներ: Կոնվենցիայի անդամ բոլոր պետությունները պարտավոր են համապատասխանեցնել իրենց օրենսդրությունը ՄԱԿԿԴԿ դրույթներին: Այդ նպատակով դեռևս 2010թ. ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը (ՄԱԿ ԹՀՊԳ) նախաձեռնեց համապատասխանության գնահատման գործընթաց: Որոշվեց, որ գործընթացը բաղկացած կլինի երկու փուլից: Առաջին փուլում (2010-2015թթ.) գնահատվեց Կոնվենցիայի անդամ երկրների օրենսդրությունների համապատասխանությունը ՄԱԿԿԴԿ Գլուխ III-ի (Կոռուպցիայի քրեականացում և հակակոռուպցիոն իրավապահ գործունեություն) և IV-ի (Միջազգային համագործակցություն) դրույթներին: Համապատասխանության գնահատման երկրորդ փուլը, որի սկիզբը դրվեց 2015թ. նոյեմբերին, տեղի կունենա 2016-2021թթ. ընթացքում[29]: Այդ փուլում կգնահատվի Կոնվենցիայի անդամ երկրների օրենսդրությունների համապատասխանությունը ՄԱԿԿԴԿ Գլուխ II-ի (Կոռուպցիայի կանխարգելում) և Գլուխ V-ի (Թալանված ակտիվների վերականգնում) դրույթներին: Յուրաքանչյուր փուլի ժամանակ Կոնվենցիայի անդամ յուրաքանչյուր երկրի համար որոշվում էր գնահատման անցկացման մեկամյա ժամանակաշրջան. Հայաստանի գնահատման առաջին փուլը տեղի ունեցավ 2012թ. հունիսից մինչև 2013թ. մայիս ամիսները: Երկրորդ փուլում Հայաստանի գնահատումը տեղի կունենա 2018-2019թթ. ընթացքում:

ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ գրասենյակի կայքում հրապարակված՝ Հայաստանի գնահատման առաջին փուլի զեկույցում[30] առաջարկվել է 21 հանձնարարական (մարտահրավեր), որոնց կատարմամբ Հայաստանի օրենսդրությունը պետք է համապատասխանեցվի ՄԱԿԿԴԿ-ի 3-րդ և 4-րդ գլուխների դրույթներին: 2015թ. ԹԻՀԿ զեկույցում վերոնշյալ 21 մարտահրավերներից 2-ը(մարտահրավերներ **13** և **14**) գնահատվել էին իրականացված,և այդ պատճառով սույն զեկույցում դրանց անդրադարձ չի կատարվի[31]:

Մարտահրավեր 1
ՀՀ քրեական օրենսգրքի 312 և 312.1 հոդվածների [պաշտոնատար անձանց կաշառք տալը] համապատասխանեցում Կոնվենցիայի հոդված 15 (ա)-ի հետ **Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեական իրավախախտում սահմանելու համար, երբ դրանք կատարվում են միտումնավոր.** **ա) պաշտոնատար անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անձամբ պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն խոստանալը, առաջարկելը կամ տրամադրելը նրա համար, որ այդ պաշտոնատար անձը կատարի որևէ գործողություն կամ չկատարի որևէ գործողություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս.**

[29] Այստեղ հարկ է նշել, որ մինչ այժմ չկա այդ մարտահրավերների կատարումը ստուգելու գործուն և արդյունավետ մեխանիզմ: Այդ ստուգումն առայժմ բավարարվում է միայն ՄԱԿԿԴԿ անդամ երկրների երկու տարին մեկ անցկացվող համաժողովների ժամանակ այդ երկրների ներկայացուցիչների ներկայացրած բանավոր հաշվետվություններով: Մի շարք երկրներ (օրինակ՝ Իրանը, Աֆղանստանը, Ֆրանսիան, Ավստրալիան, Ալժիրը, Ադրբեջանը և այլն) կամավոր հիմունքներով ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակին ներկայացրել են զեկույցներ իրենց մարտահրավերների կատարման վերաբերյալ: ՀՀ-ն բացակայում է նման երկրների ցանկից:

[30] https://www.unodc.org/unodc/treaties/CAC/country-profile/CountryProfile.html?code=ARM

[31] Մարտահրավեր 13 (Քաղաքական հանցագործությունները պետք է տեղ չունենան էքստրադիցիայի մասին պայմանագրերում) և մարտահրավեր 14 (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 16-ի համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածին):

ՀՀ քրեական օրենսգրքի 312 և 312.1 հոդվածները վերաբերում են պաշտոնատար անձին կաշառք տալուն և պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալուն:

Այս երկու հոդվածների կապակցությամբ դիտարկվող ժամանակահատվածում չի իրականացվել փոփոխություն կամ լրացում: Այդ իսկ պատճառով այս մարտահրավերը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 2
ՀՀ քրեական օրենսգրքի 311 և 311.1 հոդվածների [պաշտոնատար անձանց կաշառք ստանալը] համապատասխանեցում Կոնվենցիայի հոդված 15 (բ)-ի հետ **Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեական իրավախախտում սահմանելու համար, երբ դրանք կատարվում են միտումնավոր.** **բ) շորթումը կամ պաշտոնատար անձի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անձամբ պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն ընդունելը նրա համար, որ այդ պաշտոնատար անձը կատարի որևէ գործողություն կամ չկատարի որևէ գործողություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս:**

Վերնագրում նշված հոդվածները վերաբերում են պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալուն և պաշտոնատար անձ չհանդիսացող անձի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն: Դիտարկվող ժամանակահատվածում այս երկու հոդվածներում տեղի չի ունեցել որևէ փոփոխություն կամ լրացում, որի պատճառով այս մարտահրավերը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 3
ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի [Օտարերկրյա պաշտոնատար անձանց և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց կաշառելը] համապատասխանեցում Կոնվենցիայի հոդված 16 (2)-ի հետ **Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի շորթումը կամ օտարերկրյա պաշտոնատար անձի կողմից կամ միջազգային կազմակերպության պաշտոնատար անձի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անձամբ պաշտոնատար անձի կամ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար որևէ ոչ իրավաչափ առավելություն ստանալը, եթե դա կատարվել է դիտավորությամբ՝ այն բանի համար, որ այդ պաշտոնատար անձը կատարի որևէ գործողություն կամ չկատարի որևէ գործողություն իր պաշտոնական պարտականությունները կատարելիս:**

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը վերաբերում է պաշտոնական լիազորությունների չարաշահմանը: Սույն հանցակազմը չի ենթարկվել որևէ իրավական միջամտության (լրացում կամ փոփոխություն): Ուստի, այս մարտահրավերը ևս դիտարկվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 4

Փողերի լվացման մասին օրենքների փոխանցումը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին՝ ի կատարում Կոնվենցիայի հոդված 23-ի

1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտումներ ճանաչվեն հետևյալ արարքները, երբ դրանք կատարվում են դիտավորությամբ.

ա) i) գույքի փոխարկումը կամ փոխանցումը՝ գիտակցմամբ, որ այդպիսի գույքն իրենից ներկայացնում է հանցագործություններից ստացված եկամուտներ՝ այդպիսի գույքի հանցավոր աղբյուրը քողարկելու կամ թաքցնելու նպատակով կամ հիմնական իրավախախտման մեջ ներգրավված որևէ անձի օգնություն ցույց տալու նպատակով, որպեսզի նա կարողանա խուսափել իր արարքների համար պատասխանատվությունից.

ii) գույքի իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տիրապետման եղանակը, տեղափոխելը, գույքի նկատմամբ իրավունքները կամ նրա պատկանելությունը քողարկելը կամ թաքցնելը՝ գիտակցմամբ, որ այդպիսի գույքն իրենից ներկայացնում է հանցագործություններից ստացված եկամուտներ.

բ) իր իրավական հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝

i) գույք ձեռք բերելը, տիրապետելը կամ օգտագործելը՝ դրա ստացման պահին գիտակցելով, որ այդպիսի գույքն իրենից ներկայացնում է հանցագործություններից ստացված եկամուտներ.

ii) իրավախախտումներից որևէ մեկը կատարելու նպատակով մասնակցելը, առնչությունը կամ հանցակցության մեջ մտնելը, որոնք այդպիսին են ճանաչվել սույն հոդվածին համապատասխան, դրա կատարման փորձը, ինչպես նաև օժանդակելը, դրդելը, աջակցելը կամ դրա կատարման ժամանակ խորհուրդներ տալը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի իրականացման կամ կիրառման նպատակներով՝

ա) յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի սույն հոդվածի 1-ին կետը կիրառել հիմնական իրավախախտումների ամենալայն շրջանակի նկատմամբ.

բ) յուրաքանչյուր Մասնակից պետություն հիմնական իրավախախտումների շարքում որպես նվազագույնը պետք է ընդգրկի այն քրեական իրավախախտումների համապարփակ շրջանակը, որոնք այդպիսին են ճանաչված սույն Կոնվենցիայի համաձայն.

գ) վերը նշված «բ» ենթակետի նպատակներով հիմնական իրավախախտումները պետք է ներառեն այն իրավախախտումները, որոնք կատարվել են ինչպես շահագրգիռ Մասնակից պետության իրավասության շրջանակներում, այնպես էլ դրանից դուրս: Այնուամենայնիվ, որևէ Մասնակից պետության իրավասությունից դուրս կատարված իրավախախտումներն իրենցից հիմնական իրավախախտումներ են ներկայացնում միայն այն պայմանով, որ համապատասխան արարքը քրեական իրավախախտում է համարվում այն պետության ներքին օրենսդրության համաձայն, որտեղ դա կատարվել

է, և քրեական իրավախախտում կճանաչվեր այն Մասնակից պետության ներքին օրենսդրության համաձայն, որտեղ իրականացվում կամ կիրառվում է սույն հոդվածը, եթե այն կատարված լիներ այնտեղ.

դ) յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տրամադրի իր այն օրենքների տեքստերը, որոնք ապահովում են սույն հոդվածի դրույթների իրականացումը, ինչպես նաև այդպիսի օրենքների հետագա ցանկացած փոփոխությունների տեքստերը կամ դրանց նկարագրությունները.

ե) եթե պահանջվում է Մասնակից պետության ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներով, ապա կարելի է նախատեսել, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավախախտումները չեն կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք կատարել են հիմնական իրավախախտումը:

ԹԻՀԿ-ն ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված իր հարցման մեջ հստակ խնդրել էր անդրադառնալ նաև այս մարտահրավերին: ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանի մեջ այս առնչությամբ լռություն է պահպանվել, իսկ տեղեկությունը ստուգելու այլ աղբյուր չկա: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ այս մարտահրավերը առայժմ գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 5
Հայաստանը խրախուսվում է քրեականացնել ոչ մեծ ծանրության պարտակման դեպքերը

Հանցագործության պարտակումը Հայաստանում կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով (հանցագործությունը պարտակելը): Հանցագործության պարտակումը համարվում է հանցագործություն միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության պարտակելու դեպքում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ սույն մարտահրավերը դիտարկվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 6
Ներպետական օրենսդրության համապատասխանեցում Կոնվենցիայի հոդված 31-ի 1-ին մասի «բ» կետի հետ / գույքի, սարքավորման և այլ միջոցների բռնագրավում, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար/

Սառեցնելը, առգրավումը և բռնագրավումը

Յուրաքանչյուր Մասնակից պետություն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝

բ) գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

Այսպես, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» հոդված 31-ի 1-ին մասի «բ» կետով սահմանված է.*«Յուրաքանչյուր Մասնակից պետություն առավելագույն չափով, որը հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ է լինել բռնագրավման հնարավորությունն ապահովելու համար՝բ) գույքի, սարքավորման և այլ միջոցների, որոնք օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»*:

Այսինքն, ըստ Կոնվենցիայի,ենթադրվում է, որ հանցագործության ընթացքում օգտագործված գույքը և սարքավորումները պետք է ենթարկվեն բռնագրավման: Հայաստանում գույքի բռնագրավումը կարգավորվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ով: Համաձայն այս հոդվածի 1-ին մասի, «Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության»: Ուստի, ըստ օրենսդրի, բռնագրավումը կարող է տարածվել միայն դատապարտյալի սեփականություն համարվող գույքի վրա, մինչդեռ Կոնվենցիան նման պայման չի նախատեսում:

Այնուամենայնիվ, Կոնվենցիայի պահանջին ավելի համահունչ է բռնագանձման ինստիտուտը, որը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 103.1-ով: Սակայն այստեղ ևս առկա է անհամապատասխանություն: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածի 1-ին մասի, «Հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված ցանկացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, այնպիսի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները և միջոցները, որի կատարման արդյունքում ստացվել է գույք, ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, սույն օրենսգրքի 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաները, իսկ դրանց բացակայության դեպքում դրանց համարժեք գույքը, բացառությամբ բարեխիղճ երրորդ անձի գույքի, տուժողին և քաղաքացիական հայցվորին հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման համար անհրաժեշտ գույքի, ենթակա է բռնագանձման՝ հօգուտ պետության»:

Այսինքն, ըստ բռնագանձման ինստիտուտի, բռնագանձումը կիրառվում է որպեսզի տուժողին և քաղաքացիական հայցվորին հատուցվի հանցագործության պատճառված վնասը: Բացի այդ, պարտադիր է, որպեսզի հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների և միջոցների արդյունքում ստացված լինի գույք: Մինչդեռ, ըստ Կոնվենցիայի, նման պահանջ առկա չէ: Հետևաբար, բռնագանձման ինստիտուտը ևս ամբողջությամբ չի համապատասխանում Կոնվենցիայի պահանջին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն մարտահրավերը ևս դիտարկվում է «**չիրականացված**»:

Մարտահրավեր 7
Բանկային գաղտնիքի մասին իրավական ակտերից բխող խոչընդոտներն արդյունավետորեն հաղթահարվում են

7-րդ մարտահրավերը 2015թ. գնահատվել էր որպես «Մասնակիորեն իրականացված», քանի որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում տեղի էր ունեցել փոփոխություն, ըստ որի բանկային գաղտնիքը կարող է տրամադրվել իրավապահ մարմնին միայն հիմնավորված պահանջի դեպքում: 2016թ. ընթացքում ևս տեղի է ունեցել դրական տեղաշարժ այս

կապակցությամբ, որը հիմք է տալիս գնահատելու այս մարտահրավերը որպես «**մասամբ իրականացված**»: Դրական տեղաշարժը վերաբերում է նույն օրենքում 06.12.2016թ.-ին ՀՕ-213-Ն օրենքով կատարված լրացմանը: Համաձայն այս լրացման՝ օրենքը լրացվել է հոդված 13.3-ով, որը վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա պետության արժեթղթերի շուկայի վերահսկողության մարմիններին բանկային գաղտնիքի տրամադրմանը: Ըստ լրացման, տեղեկատվության փոխանակման շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա պետությունների արժեթղթերի շուկայի վերահսկողության մարմիններին տրամադրել բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն:

Մարտահրավեր 8
Վկաների պաշտպանության ծրագրի պրակտիկ իրականացում և դրա իրականացման համար պատշաճ ֆինանսավորում

ԹԻՀԿ գրասենյակային ուսումնասիրությունները և ՀՀ արդարադատության նախարարության կողմից ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանում ոչինչ առկա չէ այս մարտահրավերի մասով: Այդ իսկ պատճառով սույն մարտահրավերը գնահատվում է որպես«**չիրականացված**»:

Մարտահրավեր 9
Իրավապահ մարմինների և քաղաքացիների միջև համագործակցության ուժեղացում

Առկա չէ որևէ տեղեկատվություն առ այն, որ այս մարտահրավերի կապակցությամբ դիտարկվող ժամանակահատվածում որևէ էական տեղաշարժ է եղել: Այդ իսկ պատճառով սույն մարտահրավերը ևս գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 10
Էքստրադիցիայի և փոխադարձ իրավական աջակցության ուղեցույցի ընդունում

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանի, չնայած էքստրադիցիայի և փոխադարձ իրավական օգնության ուղեցույց չի ընդունվել, սակայն նախատեսվում են ոլորտը կարգավորող լուրջ օրենսդրական բարեփոխումներ: Մինչ օրս «Քրեական գործերով իրավական փոխօգնության» մասին օրենքի նախագիծը գտնվում է քննարկման փուլում:

Դիտարկվող ժամանակահատվածում դրական զարգացումներ տեղի չեն ունեցել, որը հիմք է տալիս գնահատելու այս մարտահրավերը որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 11
Ունենալ գործերի կառավարման համակարգ՝ հիմնված վիճակագրության օգտագործման վրա՝ ուղղված փոխօգնության և էքստրադիցիայի հարցերի բարելավմանը

11-րդ մարտահրավերի կապակցությամբ պետք է նշել, որ 2015թ.-ին ԹԻՀԿ-ն այն գնահատել էր որպես «Մասնակիորեն իրականացված», քանի որ ՀՀ արդարադատության նախարարությունը վարում էր էքստրադիցիայի վերաբերյալ վիճակագրություն: Այս մարտահրավերի կապակցությամբ դիտարկվող ժամանակահատվածում ևս տեղի է ունեցել

դրական փոփոխություն: Մասնավորապես, 2016թ. հուլիսից ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծվել է «Իրավական փոխօգնության վարչությունը», որը ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական գործերով համակարգում է իրավական օգնության տրամադրումը: Այս քայլը դիտարկվում է որպես էական, քանի որ սրանով ստեղծվում է փոխօգնության տրամադրման կառույց, որն ամբողջությամբ նվիրված է այդ խնդրին: Այդ իսկ պատճառով այս մարտահրավերը դիտարկվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Մարտահրավեր 12
Էքստրադիցիայի գործընթացների արագացում և ապացուցողական պահանջների պարզեցում՝ կապված ցանկացած հանցագործության հետ, որի առնչությամբ կիրառելի է Կոնվենցիան

Սույն մարտահրավերը ևս ԹԻՀԿ կողմից գնահատվել է որպես «Չիրականացված» 2015թ.-ին: Չնայած այն հանգամանքին, որ այն սերտորեն առնչվում է մարտահրավեր 10-ի առումով տեղի ունեցած սահմանափակ զարգացմանը՝ կապված «Քրեական գործերով իրավական փոխօգնության» մասին օրենքի նախագծման հետ, սակայն դրա բովանդակության անհայտ լինելու պատճառով, ինչպես նաև այն հանգամանքով, որ մարտահրավերը ենթադրում է արդեն իսկ ուժի մեջ գտնվող կառուցակարգեր, սույն մարտահրավերը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մարտահրավեր 13
Քաղաքական հանցագործությունները պետք է տեղ չունենան էքստրադիցիայի մասին պայմանագրերում

Այս մարտահրավերը 2015թ.-ին ԹԻՀԿ գնահատմամբ դիտարկվել է որպես «Իրականացված» և այդ պատճառով այստեղ այլևս չի դիտարկվում:

Մարտահրավեր 14
Քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրության 30.1 հոդվածին

Այս մարտահրավերը 2015թ.-ին ԹԻՀԿ գնահատմամբ դիտարկվել է որպես «Իրականացված» և այդ պատճառով այստեղ այլևս չի դիտարկվում:

Մարտահրավեր 15
Շարունակել ուսումնասիրել երկկողմանի էքտրադիցիաների մասին պայմանագրերի կնքման հնարավորությունները

Համաձայն ԹԻՀԿ-ին ուղղված ՀՀ արդարադատության նախարարության պատասխանի՝ Հայաստանի Հանրապետությունը Քուվեյթի և Չինաստանի հետ արդեն իսկ ունի համաձայնեցված տեքստեր հանձման պայմանագրեր կնքելու կապակցությամբ: Այդ իսկ պատճառով սույն մարտահրավերը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Մարտահրավեր 16
Ուսումնասիրել հնարավորությունները՝ կնքելու երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կամ կառուցակարգեր, որոնք հատուկ կերպով կծառայեն Կոնվենցիայի հոդված 46-ի նպատակներին

Կրկին, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանի, 23.03.2016թ.-ին Երևանում Քուվեյթի հետ ստորագրվել է «Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության» պայմանագիրը, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 26.10.2016թ.-ին: Նույն օրը նաև վավերացվել է Չինաստանի հետ «Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության» պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 19.11.2016թ.-ին: Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ սույն մարտահրավերը գնահատվում է «**մասամբ իրականացված**»:

Մարտահրավեր 17
Ուսումնասիրել Կոնվենցիային անդամ այլ պետությունների համապատասխան մարմինների հետ հաղորդակցման ավելի շատ միջոցներ սահմանելու հնարավորությունները

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության՝ 2016թ.-ին ՀՀ պատվիրակությունն այցելել է Շվեդիա՝տեղի դատախազության ներկայացուցիչների հետ քննարկելով կոռուպցիոն գործերով համագործակցության հարցեր: Սույն հանգամանքը հաշվի առնելով՝ սույն մարտահրավերի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Մարտահրավեր 18
Ուսումնասիրել լրացուցիչ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը՝ ուժեղացնելու իրավապահ մարմինների համագործակցությունը խնդրանքներ կատարելու հարցում կոռուպցիայի դեմ Կոնվենցիայով սահմանված հանցագործությունների առնչությամբ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս առնչությամբ ոչինչ չի տեղեկացրել ՀՀ արդարադատության նախարարությունը, ինչպես նաև կատարելով գրասենյակային հետազոտություններ, սույն մարտահրավերը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔ-Մարտահրավեր 19
Ուսումնասիրել հնարավորությունը՝ ուժեղացնելու Կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «գ» կետի[32] իրականացումը

Նման հոդված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում պարզապես առկա չէ, ինչը հանդիսանում է տեխնիկական սխալ գնահատող թիմի կողմից: Այդ իսկ պատճառով այս մարտահրավերն այստեղ չի գնահատվում:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի գնահատման զեկույցից հստակ երևում է, որ և՛ այս, և՛ հաջորդ՝ Մարտահրավեր 20-ի դեպքում, գնահատող թիմը նկատի է ունեցել Կոնվենցիայի նշված 46-րդ հոդվածի **3-րդ** մասի համապատասխանաբար «գ» (Մարտահրավեր 19-ի դեպքում) և «ե» (Մարտահրավեր 20-ի դեպքում) կետերը, որոնք Կոնվենցիայում առկա են և զեկույցում վերլուծության են ենթարկված[33]: Այսպիսով, քաղաքական կամքի առկայության պարագայում ՀՀ կառավարությունը կարող էր, ելնելով

[32] Հայաստանի առաջին փուլի գնահատման զեկույցում տեղ է գտել տեխնիկական վրիպակ, և այս մարտահրավերը ձևակերպվել է որպես Կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «գ» կետի իրականացում (subparagraph 1(c) of article 46), էջ 14, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/CountryVisitFinalReports/Armenia_UNCAC_Implementation_Report.pdf

[33] Համաձայն ՄԱԿԿԴԿ 46-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի՝ փոխադարձ իրավական աջակցություն կարող է տրամադրվել խուզարկության անցկացման, գույքի վրա կալանք դնելու, ինչպես նաև գործառնությունները կասեցնելու (սառեցնելու) նպատակով, իսկ համաձայն նույն մասի «ե» կետի՝ այդպիսի աջակցություն կարող է տրամադրվել նաև տեղեկատվություն, իրեղեն ապացույցներ և փորձագետների գնահատականներ ստանալու նպատակով:

զեկույցի դրույթներից, մատնանշել ՄԱԿ ԹՀՊԳ-ին զեկույցում տեղ գտած վրիպակների մասին և ձեռնամուխ լինել այս և հաջորդ մարտահրավերների պահանջների կատարմանը:

ՀԱՏՈՒԿ ԴԵՊՔ-Մարտահրավեր 20
Ուսումնասիրել հնարավորությունը՝ ուժեղացնելու Կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «ե» կետի իրականացումը[34]

Նման հոդված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում պարզապես առկա չէ, ինչը հանդիսանում է տեխնիկական սխալ գնահատող թիմի կողմից: Այդ իսկ պատճառով այս մարտահրավերն այստեղ չի գնահատվում:

Մարտահրավեր 21
Ուսումնասիրել հնարավորությունը՝ շարունակելու երկկողմ կամ բազմակող համաձայնագրերի կամ կառուցակարգերի կնքումը՝ օգտագործելու հատուկ քննչական ծառայության մեթոդները միջազգային համագործակցության մակարդակում

Սույն մարտահրավերի կապակցությամբ ևս թե՛ կատարված ուսումնասիրությունը և թե՛ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պատասխանը բովանդակային զարգացման մասին չի վկայել և, այդ իսկ պատճառով, այս մարտահրավերը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Ամփոփում

Այսպիսով,հրապարակման մեջ ընդհանուր 21 մարտահրավերներից դիտարկվել են 17-ը: 2 մարտահրավեր այլևս չեն դիտարկվել,քանի որ 2015թ.-ին դրանք արդեն իսկ գնահատվել են որպես «**իրականացված**», իսկ մնացած 2-ը չեն դիտարկվել ՄԱԿԿԴԿ վերանայող թիմի կողմից թույլ տրված տեխնիկական սխալի պատճառով: Դիտարկված 17 մարտահրավերներից 7-ի կատարողականը կարելի է գնահատել որպես «**մասամբ իրականացված**», իսկ 12-ը՝ «**չիրականացված**»: Նման ցուցանիշը ենթադրում է, որ անհրաժեշտ է լրացուցիչ լուրջ քայլեր ձեռնարկել մարտահրավերների բովանդակային և արդյունավետ իրականացման ուղղությամբ:

ԳՐԵԿՈ

2004թ. հունվարի 20-ից Հայաստանը անդամակցում է ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետությունների հատուկ խմբին՝ ԳՐԵԿՈ-ին: ԳՐԵԿՈ-ն փուլ առ փուլ գնահատում է անդամ երկրների հակակոռուպցիոն միջոցառումների և ԵԽ «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի մասին» կոնվենցիայի ու «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի մասին» կոնվենցիայի պահանջների միջև համապատասխանությունը[35]:

[34] Հայաստանի առաջին փուլի գնահատման զեկույցում տեղ է գտել տեխնիկական վրիպակ, և այս մարտահրավերը ձևակերպվել է որպես Կոնվենցիայի հոդված 46-ի 1-ին մասի «ե» կետի իրականացում (subparagraph 1(e) of article 46), էջ 14, https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/CountryVisitFinalReports/Armenia_UNCAC_Implementation_Report.pdf

[35] ԵԽ «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի մասին» կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 15.03.2003թ. և վավերացրել է 08.06.2004թ., որն ուժի մեջ է մտել 10.07.2004թ.: 17.02.2004թ.-ին

Տվյալ երկրի համար յուրաքանչյուր փուլ սկսվում է այդ երկրի կառավարության և այլ պետական մարմինների կողմից ԳՐԵԿՈ-ի քարտուղարության կողմից տվյալ փուլի համար պատրաստված ինքնագնահատման հարցաշարի հարցերին պատասխանելով: Այնուհետև կայանում է ԳՐԵԿՈ-ի փորձագետների ճանաչողական այցն այդ երկիր, որի ընթացքում նրանք հանդիպումներ են ունենում տվյալ երկրի պատկան մարմինների, քաղաքացիական հասարակության և գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ: Ելնելով ինքնագնահատման հարցաշարի պատասխաններից և ճանաչողական այցի արդյունքներից՝ ԳՐԵԿՈ-ի փորձագետները պատրաստում են երկրի գնահատման զեկույցը (Evaluation report), որում ներառված են նաև հանձնարարականները: Գնահատման զեկույցը հաստատվում է ԳՐԵԿՈ-ի առաջիկա հերթական պլենար նիստին, որից հետո հանձնարարականների իրականացման համար տրվում է 18 ամիս, որի ընթացքում անդամ-պետությունը պետք է իրականացնի միջոցառումներ հանձնարարականների կատարման ուղղությամբ: Այդ ժամկետի լրանալուց հետո ԳՐԵԿՈ-ի փորձագետներն ուսումնասիրում են, թե ինչպես են կատարվել այդ հանձնարարականները, և այդ ուսումնասիրության հիման վրա կազմվում է տվյալ երկրի համապատասխանության զեկույցը (Compliance report)[36]: Զեկույցը պատրաստելուց հետո ԳՐԵԿՈ-ի առաջիկա հերթական պլենար նիստում այն հաստատվում է և այնուհետև հրապարակվում ԳՐԵԿՈ-ի պաշտոնական կայքէջում: Եթե համապատասխանության զեկույցը եզրակացնում է, որ տվյալ երկիրը կատարել է իր ստանձնած բոլոր պարտավորությունները, ապա համապատասխանության զեկույցի հրապարակումով ավարտվում է գնահատման տվյալ փուլը: Հակառակ դեպքում որոշվում է երկարացնել պարտավորությունների իրականացման վերջնաժամկետը, որի ավարտին ԳՐԵԿՈ-ի փորձագետները պատրաստում են Գնահատման զեկույցի հավելված, որով գնահատվում է հանձնարարականների կատարման ընթացքը: Պրակտիկայում կարող է լինել համապատասխանության զեկույցի մինչև երկու հավելված:

Ներկայումս Հայաստանը գտնվում է ԳՐԵԿՈ-ի գնահատման 4-րդ փուլում: Այդ փուլի Հայաստանի գնահատման զեկույցն ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 69-րդ պլենար նիստում (2015թ. հոկտեմբերի 12-16), և հրապարակվել է 2016թ. փետրվարի 25-ին[37]: Համաձայն գնահատման զեկույցի՝ Հայաստանը պետք է զեկույցում նշված հանձնարարականները կատարի մինչև 2017թ. ապրիլի 30-ը:

ԳՐԵԿՈ-ի 4-րդ գնահատման հանձնարարականները բաժանվում են 4 խմբի՝ ընդհանուր 18 հանձնարարականով, որոնցից՝

- 1-ին խումբ հանձնարարականները (I-IV) վերաբերում են պատգամավորներին
- 2-րդ խումբ հանձնարարականները (V-XI) վերաբերում են դատավորներին
- 3-րդ խումբ հանձնարարականները (XII-XV) վերաբերում են դատախազներին
- 4-րդ խումբ հանձնարարականները (XVI-XVIII) վերաբերում են վերը նշված պաշտոնյաների բոլոր խմբերին:

Ըստ հանձնարարականների խմբերի կատարողականի, «Դատավորներ» խմբի դեպքում 7 հանձնարարականներից 6-ի կատարողականը գնահատվել է որպես «**մասամբ իրականացված**», իսկ 1-ի դեպքում՝ «**չիրականացված**»: «Պատգամավորներ» խմբի դեպքում 4 հանձնարարականներից 1-ը չի իրականացվել, իսկ մյուս 3-ը մասամբ են իրականացվել: «Դատախազներ» խմբի դեպքում 2 հանձնարարական մասամբ իրականացվել է, իսկ 2-ը՝ չի

ՀՀ-ն ստորագրել և 08.12.2004թ.-ին վավերացրել է ԵԽ «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի» կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 22.01.2005թ.-ին:

[36] http://www.coe.int/en/web/greco/about-greco/how-does-greco-work

[37] http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/Eval%20IV/GrecoEval4Rep(2015)1_Armenia_EN.pdf

իրականացվել: Ամենացածր կատարողականը գրանցվել է «Պաշտոնյաների բոլոր երեք խմբերին վերաբերող հարցեր» խմբի առումով.բոլոր 3 հանձնարարականներն էլ չեն իրականացվել:

«Պատգամավորներ» խմբի դրական ցուցանիշները հիմնականում պայմանավորված են օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակում փոփոխությունների իրականացման կամ մշակման հետ: «Դատավորներ» խմբի դրական արդյունքները մեծամասամբ պայմանավորված են 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում դատական իշխանության ինստիտուցիոնալ համակարգի վերափոխմամբ:

«Դատախազներ» խմբի դեպքում հանձնարարականների մի մասի մասամբ իրականացված լինելը պայմանավորված է սահմանադրական փոփոխություններով և դատախազների համար դասընթացների կազմակերպմամբ:

Ինչ վերաբերում է «Պաշտոնյաների բոլոր երեք խմբերին վերաբերող հարցեր» խմբի բոլոր երեք հանձնարարականների իրականացված չլինելուն, ապա այն պայմանավորված է նրանով, որ գույքի հայտարարագրերի, նվերների կանոնակարգերի և Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մանդատի առնչությամբ վերաբերելի փոփոխություններ չեն գրանցվել դիտարկվող ժամանակահատվածում:

Պատգամավորներ.	**Հանձնարարական 1**
Ապահովել և բարելավել Ազգային ժողովի օրինաստեղծ գործընթացի թափանցիկությունը՝ ա. երաշխավորելով, որ օրենքի նախագծերի առնչությամբ հանրային քննարկումների անցկացման պահանջը պահպանվի պրակտիկայում և նախագծերը և դրանց լրացումները բացահայտվեն ժամանակին, բ.. ձեռնարկելով պատշաճ միջոցներ՝ ապահովելու հանձնաժողովների նիստերի բովանդակության և դրանց մասնակիցների մասին տեղեկատվության բացահայտումը, ինչպես նաև հանձնաժողովների կողմից խորհրդարանական լսումների առավել ակտիվ կազմակերպումը:	

Օրենքի նախագծերի հրապարակման առումով իրավիճակը հետևյալն է. օրակարգում ընդգրկվածները ժամանակին հրապարակվում են: ԹԻՀԿ-ն դիմել էր ՀՀ արդարադատության նախարարություն՝ տեղեկատվություն հայցելով, թե 2016թ. ընթացքում որքան հանրային քննարկումներ են անցկացվել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի առնչությամբ, և պարզվել է, որ նման վիճակագրություն չի վարվում: Ավելի կոնկրետ, առկա չէ որևէ պետական մարմին, որը կվարեր այս վիճակագրությունը, այդ իսկ պատճառով այս հանձնարարականի 1-ին բաղադրիչի կապակցությամբ (օրենքի նախագծերի հանրային քննարկումների անցկացում և ժամանակին դրանց հրապարակում) հնարավոր չէ գնահատական տալ:

Սույն հանձնարարականի 2-րդ մասի կապակցությամբ (հանձնաժողովների նիստերի բովանդակության և մասնակիցների մասին տեղեկատվության բացահայտում և առավել ակտիվ խորհրդարանական լսումների անցկացում) իրավիճակը փոքր առաջընթաց է ապրել: Խորհրդարանի նախկին նստաշրջանի ընթացքում 12 մշտական հանձնաժողովներից միայն 5-ն են կազմակերպել խորհրդարանական լսումներ[38]: Լսումների ընդհանուր քանակը եղել է 6-ը, իսկ 9-րդ նստաշրջանի (2016թ. գարնանային նստաշրջան) ընթացքում իրավիճակը մի փոքր բարելավվել է. 7 մշտական հանձնաժողովներ կազմակերպել են 7 լսումներ: 10-րդ

[38] http://parliamentmonitoring.am/docs/Monitoring_of_NA_8_session.pdf

նստաշրջանի ընթացքում (2016թ. աշնանային նստաշրջան) ևս առկա է եղել առաջընթաց. 5 հանձնաժողովների կողմից կազմակերպվել են 8 լսումներ:

	8-րդ նստաշրջան	9-րդ նստաշրջան	10-րդ նստաշրջան
Լսումների քանակը	6	6	8
Հանձնաժողովների թիվը	5	7	5

Պետք է նշել նաև, որ 8-ից 10-րդ նստաշրջանների ընթացքում ընդունված օրենքների քանակը ևս ցույց է տալիս դրական դինամիկա:

	8-րդ նստաշրջան	9-րդ նստաշրջան	10-րդ նստաշրջան
Ընդունված օրենքների քանակը	116[39]	112[40]	166[41]

Բացի այդ, հանձնաժողովների նիստերի բովանդակության և դրանց մասնակիցների հրապարակայնության հետ կապված ԹԻՀԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ ԱԺ-ից ստացվել է պատասխան (24.02.2017թ.), ըստ որի նախատեսվում է փոփոխությունների իրականացում հանձնաժողովների կանոնակարգերում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Պատգամավորներ.	**Հանձնարարական 2**
Ա. Ընդունել խորհրդարանի անդամների համար վարքագծի կանոնագիրք, որը հասանելի կլինի հանրության համար ու կսահմանի հստակ ուղենիշներ շահերի բախման և դրա հետ կապված ոլորտների առնչությամբ, ներառյալ՝ նվերների և այլ առավելությունների ընդունման, սահմանափակումների, լրացուցիչ գործունեության և ֆինանսական շահերի, տեղեկատվության և հանրային միջոցների չարաշահման, երրորդ անձանց, ինչպես, օրինակ, լոբբիստների հետ շփումների առումով: Բ. Կազմակերպել դրա կիրառման համար անհրաժեշտ գործնական միջոցառումներ, ինչպես, օրինակ, հատուկ դասընթացները, խորհրդատվության տրամադրումը և իրազեկության բարձրացումը:	

Այս հանձնարարականի 1-ին բաղադրիչի կապակցությամբ (խորհրդարանի անդամների վարքագծի կանոնագրքի ընդունում) պետք է նշել, որ խորհրդարանի կայքում առկա է ուղեցույց խորհրդարանական էթիկայի կանոնների վերաբերյալ[42], իսկ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը մշակել է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնագիրք», որը, սակայն, դեռևս չի ընդունվել:

Սույն հանձնարարականի 2-րդ մասը պայմանավորված է այն ենթադրությամբ, որ արդեն իսկ պետք է ընդունված լինի կանոնագիրք պատգամավորների համար, որի արդյունավետության բարձրացման համար պետք է անցկացվեն գործնական միջոցառումներ, ինչպես, օրինակ, պատգամավորների համար դասընթացները: Չնայած այն հանգամանքին, որ նման կանոնագիրք չի ընդունվել, այնուամենայնիվ, ԹԻՀԿ-ը հարցմամբ դիմել էր ՀՀ ԱԺ-ին,

[39] https://parliamentmonitoring.am/docs/PM_report_8_2015.pdf
[40] http://www.parliamentmonitoring.am/docs/Monitoring_of_the_NA_9th_session.pdf
[41] http://www.parliamentmonitoring.am/docs/PM_infographics.pdf
[42] http://www.parliament.am/committee_docs_5/Etika/Ethics_Guidebook_Arm.pdf

որպեսզի պարզի, թե 2016թ. ընթացքում պատգամավորների համար անցկացվել է արդյոք որևէ խորհրդատվություն կամ դասընթաց: ՀՀ ԱԺ-ից ստացված պատասխան գրությամբ պարզ է դառնում, որ նման խորհրդատվություններ կամ դասընթացներ չեն անցկացվել, քանի որ, ըստ ԱԺ-ից ստացված պատասխանի, ԳՐԵԿՈ-ն նման տեսակի խորհրդատվությունները և դասընթացները դիտարկել է զուտ որպես օրինակներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականի կատարողականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Պատգամավորներ.	**Հանձնարարական 3**
Ձեռնարկել պատշաճ միջոցներ՝ կանխելու խորհրդարանի անդամների կողմից առևտրային ընկերություններում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումները շրջանցելը:	

Այս առնչությամբ պետք է նշել, որ ոչ մի էական փոփոխություն տեղի չի ունեցել, ինչն անհնարին կդարձներ պատգամավորների բիզնեսով զբաղվելը: Միակ զարգացումը, որն անուղղակի կերպով առնչվում է այս խնդրին, ապօրինի հարստացման քրեականացումն է(16.12.2016թ.), որի դիսպոզիցիայի անորոշ և անհստակ լինելու պատճառով տվյալ միջոցառման արդյունավետությունը կարող է գնահատվել միայն ապագա պրակտիկայում: Հստակ չէ, թե եկամուտների ավելացումը և կամ պարտավորությունների նվազումը պետք է հայտնաբերել միայն և բացառապես նրանց ներկայացրած հայտարարագրերից, թե այլ աղբյուրներից ևս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ գերիշխող տեսակետի, տվյալ հարցը պարզելը կատարվելու է միայն հայտարարագրերով, ապա այս դեպքում ապօրինի հարստացման քրեականացումը հնարավոր չէ դիտարկել որպես հանձնարարականի մասամբ իրականացում, և այդ պատճառով սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Պատգամավորներ.	**Հանձնարարական 4**
Էապես ուժեղացնել խորհրդարանի անդամների կողմից էթիկայի և վարքագծի չափորոշիչներին հետևելու մոնիտորինգի մեխանիզմը, որպեսզի ապահովվի՝ ա. անկախ, շարունակական և պրոակտիվ վերահսկողություն էթիկայի կանոնների և սահմանափակումների և երկրորդական գործողությունների, շահերի բախման և նվերների կանոնների առումով,բ.կանոնների գործադրում համապատասխան սանկցիաների միջոցով:	

16.12.2016թ.-ին ընդունվեց «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը, որով զգալիորեն հստակեցվեց և բարձրացվեց ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի դերակատարությունը պատգամավորի կողմից ՀՀ Սահմանադրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջները խախտելու կապակցությամբ. տվյալ դերակատարությունը հստակ ուրվագծվեց նշված օրենքի հոդված 157-ում: Մասնավորապես, ըստ հոդված 157-ի կարգավորումների, եթե ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում Ազգային ժողով առ այն, որ որևէ պատգամավոր խախտել է ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները, ապա հարցը դրվում է Ազգային ժողովի խորհրդի նիստին: ՀԺ խորհուրդն, ի դեպ, ըստ նույն օրենքի հոդված 27-ի 1-ին մասի, կազմված է Ազգային ժողովի նախագահից, նրա երեք տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից և մշտական հանձնաժողովների նախագահներից: Խորհրդի նիստի

քննարկման արդյունքում քվեարկության է դրվում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու հարցը:

Բացի այդ, ըստ 157 հոդվածի կարգավորումների, եթե ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ներկայացրել է եզրակացություն պատգամավորի կողմից ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի պահանջները խախտելու մասին, ապա Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ը կարող է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ պատգամավորի լիազորությունների դադարեցնելու խնդրանքով:

Մինչև վերոնշյալ սահմանադրական օրենքը, ուժի մեջ գտնվող «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը ժամանակին լրացվել էր կարգազանց պատգամավորներին (ովքեր խանգարում են նիստերը և քվեարկում են այլ պատգամավորների փոխարեն կամ չեն թողնում այլ պատգամավորներին քվեարկել) վերաբերվող դրույթով, որի առավելագույն սանկցիան նման վարքագծի համար Ազգային ժողովի նիստերի դահլիճում գտնվելու արգելքն էր 6 օր ժամկետով[43]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականի կատարողականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	**Հանձնարարական 5**
Շարունակել դատական համակարգի ինքնակառավարման մարմինների բարեփոխումները՝ նպատակ ունենալով ուժեղացնել դատական իշխանության անկախությունը, ապահովել բոլոր մակարդակների դատավորների պատշաճ ներկայացվածությունն ինքնակառավարման մարմիններում և նվազեցնել դատարանների նախագահների, և առաջին հերթին Վճռաբեկ դատարանի նախագահի, դերակատարումն այդ մարմիններում:	

2015թ. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում ՀՀ դատական իշխանության համակարգը պետք է ենթարկվի զգալի փոփոխությունների: Արդեն իսկ սահմանադրական փոփոխություններով որոշակի փոփոխություններ ներդրվել են: Մասնավորապես՝

- Փոփոխվել են դատական իշխանության առանցքային դերակատարների նշանակման և ընտրության մեխանիզմները և կարգերը.
- Սահմանվել է խորհրդարանի դերակատարությունը դատական համակարգի առանցքային պաշտոնների ընտրության և նշանակման հարցերում.
- Զգալիորեն բարելավվել է դատավորների ընդհանուր ժողովի դերակատարությունը:

Այս առնչությամբ ամենից առաջնային փոփոխությունը Բարձրագույն դատական խորհրդի ներդրումն է, որն անկախ մարմին է և երաշխավորում է դատարանների ու դատավորների անկախությունը[44]: Բարձրագույն դատական խորհուրդը պետք է կազմված լինի 10 անդամից[45], որից 5-ին (կեսին) ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը դատավորների կազմից. վերջիններս պետք է ներկայացնեն բոլոր ատյանների դատարանները, սակայն նրանք չեն կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: Սրանով էապես երաշխավորվում է դատարանի նախագահների հնարավոր

[43] ՀՀ օրենքը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություն եվ լրացում կատարելու մասին, ՀՕ-33-Ն, 16.03.2016թ.
[44] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 173
[45] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 174

բացասական ազդեցության կանխումը դատական համակարգի վրա և բարձրացվում է դատավորների ընդհանուր ժողովի դերը: Մնացած 5 անդամներին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբաններից[46]: Խորհրդի լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածով:

Մասնավորապես, Խորհրդին է վերապահված դատավորների թեկնածուների (ներառյալ՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների) ցուցակների կազմումը և հաստատումը, և Խորհուրդն առաջարկում է ՀՀ Նախագահին նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա, դատավորների թեկնածուներին: Այլ կարևոր լիազորություններից է հանդիսանում նաև այն, որ Խորհուրդն առաջարկում է Վճռաբեկ դատարանի թեկնածուներին նշանակման համար, ինչպես նաև ինքն է լուծում դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը: Բացի այդ, Խորհուրդն է դատարանների ծախսերի նախահաշիվները ներկայացնում կառավարություն պետական բյուջեի նախագծում օրենքով սահմանված կարգով ընդգրկելու համար: Խորհուրդը ձևավորում է իր աշխատակազմը:

Պետք է նաև նշել, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում դերակատարություն է տրվել նաև Դատավորների ընդհանուր ժողովին Սահմանադրական դատարանի ձևավորման հարցում: Սահմանադրական դատարանի 9 անդամներից 3-ին այսուհետ առաջադրելու է Դատավորների ընդհանուր ժողովը, որոնց քվեարկությամբ պետք է հաստատի Ազգային ժողովը:

Սահմանադրական փոփոխություններում առկա են նաև երկու կարևոր թերություններ: Այսպես, Խորհրդի գործունեության ժամկետը սահմանվել է 5 տարի, ինչը համընկնում է Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի հետ[47]: Սա ստեղծում է ռիսկ Խորհրդի անկախության համար, քանի որ փաստացիորեն ստացվում է, որ իշխանության երեք ճյուղերը գործում են հավասար ժամկետով: Երկրորդ թերությունն այն է, որ Սահմանադրությունը չի սահմանում որևէ պահանջ, այլ միայն նախատեսում է, որ Խորհրդի անդամների անհամատեղելիության պահանջները կարող են սահմանվել ՀՀ դատական օրենսգրքով[48]: Բացի այդ, Սահմանադրությունը չի նախատեսում իմպերատիվ պահանջ Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման առումով, այլ միայն հնարավորություն, որը կարող է նախատեսվել ՀՀ դատական օրենսգրքով[49]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	**Հանձնարարական 6**
Վերացնել դատարանների/դատավորների ծանրաբեռնվածության կամ դատարաններում դատավորների թվաքանակի պակասի պատճառով դատարանների նախագահների կողմից դատավորներին ժամանակավորապես և առանց իրենց համաձայնության այլ դատարան գործուղելու հնարավորությունը:	

[46] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 174
[47] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 90
[48] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 174, մաս 5
[49] Նույն տեղում, մաս 6

Ինչպես արդեն նշվել է,ըստ ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի, դատավորին այլ դատարան գործուղելու հարցը համարվելու է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունը: Բարձրագույն դատական խորհուրդը կկազմավորվի Դատական օրենսգրքի համապատասխան դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո Հանրապետության Նախագահի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ[50]: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	Հանձնարարական 7
Բարեփոխել դատավորների աշխատանքի ընդունման, առաջխաղացման և ազատման ընթացակարգերը՝ ա. ուժեղացնելով դատական իշխանության դերակատարությունը այս գործընթացներում՝ կրճատելով Հանրապետության Նախագահի դերակատարությունը և իր որոշումների համար պահանջելով գրավոր հիմնավորումների տրամադրում, բ. ապահովելով, որպեսզի այս գործընթացներում ցանկացած որոշում հնարավոր լինի բողոքարկել դատական կարգով:	

Ինչպես նշվել է 5-րդ հանձնարարականի առնչությամբ, ամբողջությամբ վերափոխվել են դատավորների նշանակման, առաջխաղացման և ազատման կառուցակարգերը և էապես կրճատվել է Նախագահի դերակատարությունը: Այնուամենայնիվ, նախատեսվում է մանրամասների կարգավորում ապագայում ընդունվելիք ՀՀ Դատական օրենսգրքով: Ինչ վերաբերում է հանձնարարականի երկրորդ մասին՝ կապված որոշումների դատական կարգով բողոքարկման հետ, ապա ոչինչ չի փոխվել: Այս ամենը հաշվի առնելով՝ այս հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	Հանձնարարական 8
Ա. Վերանայել արդարադատության նախարարության դերակատարումը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու գործում, բ. Ներդնել պատշաճ երաշխիքներ, ներառյալ՝ դատավորների կողմից կարգապահական որոշումների դատական կարգով բողոքարկումը, որպեսզի կարգապահական վարույթները չօգտագործվեն դատավորների դեմ որպես ազդեցության կամ վրեժի գործիք:	

Այս հանձնարարականի առումով պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում օրենսդրությունում տեղի չեն ունեցել փոփոխություններ: Սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Դատավորներ.	Հանձնարարական 9
Ներդնել արդյունավետ կանոններ և մեխանիզմներ՝ պարզելու արդարադատության իրականացման ժամանակ դատավորի գործունեությանն անպատշաճ միջամտությունը և սանկցիաների ենթարկելու այն դատավորներին, ովքեր գործադրում կամ հետամուտ են լինում նման միջամտություն ստանալուն:	

Դիտարկվող ժամանակահատվածում խնդրին առնչվող օրենսդրական փոփոխությունները վերաբերում են միայն սույն հանձնարարականի 1-ին մասին, այն է՝արդարադատություն իրականացնելիս դատավորի գործունեությանն անպատշաճ միջամտությունը պարզելու ուղղությամբ մեխանիզմների ներդրումը: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածը վերախմբագրվել է 21.12.2015թ.-ին ՀՕ-17-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 23.01.2016թ.-ին: Այս հոդվածը վերաբերում է դատավորի պաշտոն զբաղեցնող անձի վարքագծին:

[50] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 214, մաս 1

Մասնավորապես, այս հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ դատարանում ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է զերծ մնալ օրենսդիր և գործադիր մարմինների պաշտոնատար անձանց ու քաղաքացիների, մասնավոր շահերի, հասարակական կարծիքի և այլ կողմնակի ազդեցություններից, ճնշումներից, սպառնալիքներից և այլ միջամտությունից, ազատ լինել քննադատության մտավախությունից և անկախ մարդու համբավ ձեռք բերել անկողմնակալ դիտորդի մոտ:

Դրական է, որ նույն ՀՕ-17-Ն օրենքով 88-րդ հոդվածը լրացվել է նոր բովանդակությամբ, համաձայն որի դատավորի գրավոր հարցման հիման վրա Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը պարզաբանում է տալիս դատավորի վարքագծի կանոնի կիրառության վերաբերյալ: Այս լրացումը միջնորդավորված կարգով վերաբերելի է քննարկվող հանձնարարականին, քանի որ խորհրդատվություն հայցելու հնարավորություն է ընձեռում դատավորին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	Հանձնարարական 10
Սահմանափակել դատավորների անձեռնմխելիությունը միայն արդարադատություն իրականացնելիս կատարած գործողությունների առումով (ֆունկցիոնալ անձեռնմխելիություն):	

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս հանձնարարականը դարձել է իրականություն: Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 164-րդի 2-րդ մասի՝դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: Ըստ նույն հոդվածի 4-րդ մասի՝*«Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը»:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Դատավորներ.	Հանձնարարական 11
Իրականացնել հատուկ քաղաքականություն՝ միտված դատավորների հանդեպ անպատշաճ ազդեցության կանխմանը, շահերի բախմանը և դատարանում կոռուպցիայի դեմ պայքարին, որը կներառի՝ ա. էթիկայի և վարքագծի, դատական անկողմնակալության և անկախության, շահերի բախման և կոռուպցիայի վերաբերյալ բոլոր դատավորների անընդհատական դասընթացների կազմակերպում, որոնք պետք է անցկացվեն դատական իշխանության լուրջ ներգրավմամբ, բ. կոնֆիդենցիալ խորհրդատվության տրամադրում դատական համակարգի ներսում, որպեսզի բարձրացվի դատավորների իրազեկությունը և խորհրդատվություն տրամադրվի այն ոլորտների առնչությամբ, որոնք նշված են «ա» կետում:	

Այս հանձնարարականի կապակցությամբ ԹԻՀԿ-ի հարցմանն ի պատասխան ՀՀ դատական դեպարտամենտը պատասխանել է, որ Արդարադատության ակադեմիայում 2016թ. ընթացքում դատավորների համար կազմակերպվել է «Դատավորների մասնագիտական էթիկա» դասընթաց, որին մասնակցել է 91 դատավոր: Ինչ վերաբերում է խորհրդատվությունների տրամադրմանը, ապա պետք է նշել, որ, ըստ նույն պատասխանի,2016թ. ընթացքում գրանցվել է պատասխանի տրամադրման ընդամենը 1 դեպք, այն է՝ դատավորի գրավոր հարցման հիման վրա (դատավորի վարքագծի կանոնի կիրառելիության վերաբերյալ) ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի իրականացումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**», քանի որ իրականում առկա չէ շահերի բախմանը, կոռուպցիայի կանխարգելմանը և ազդեցությունից պաշտպանությանը նվիրված առանձին քաղաքականություն:

Դատախազներ.	Հանձնարարական 12
Ձեռնարկել պատշաճ միջոցներ՝ ներառելու մասնագիտական և ոչ քաղաքական փորձառությունը ՀՀ գլխավոր դատախազի ընտրության, նշանակման և ազատման գործընթացներում՝ բարձրացնելու թափանցիկությունը և նվազեցնելու անպատշաճ քաղաքական ազդեցությունը:	

Այս հանձնարարականի մասամբ իրականացված լինելը պայմանավորված է 2015թ.սահմանադրական փոփոխություններով: Եթե նախկինում գլխավոր դատախազին նշանակում էր Ազգային ժողովը ՀՀ Նախագահի առաջարկությամբ, ապա սահմանադրական փոփոխությունների արդյունքում գլխավոր դատախազն ընտրվում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով[51]: Սակայն այս հանձնարարականն, այնուամենայնիվ չի կարելի համարել իրականացված, որովհետև դեռևս ներդրված չէ ապաքաղաքական և արհեստավարժ փորձագիտության ներառումը ընտրության և ազատման գործընթացներում: Միակ դրական տեղաշարժն այն է, որ խորհրդարանն է ընտրում իր իսկ մշտական հանձնաժողովի ներկայացրած թեկնածուին:

Ելնելով վերոգրյալից՝ տվյալ հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Դատախազներ.	Հանձնարարական 13
Էթիկայի հանձնաժողովի կազմը լրացնել, որպեսզի ուժեղացվի դատախազության անկախությունը անպատշաճ քաղաքական ազդեցությունից՝ ապահովելով, որպեսզի՝ ա. այն կազմված լինի մեծամասնաբար դատախազներից, և բ. դատախազների թվից մի մասն ընտրված լինի հենց դատախազ-գործընկերների կողմից:	

ԹԻՀԿ-ի հարցմանը ՀՀ գլխավոր դատախազության պատասխանից ստացվում է, որ Էթիկայի հանձնաժողովի 7 հոգուց 4-ը ՀՀ Նախագահի կողմից նշանակված անձինք են՝ ըստ օրենքի պահանջի: Ներկայումս դատախազ անդամների նշանակման կարգը մնացել է անփոփոխ:

[51] ՀՀ Սահմանադրություն (2015թ.-ի փոփոխություններով), հոդված 177

Պետք է նշել, որ 2015թ.սահմանադրական փոփոխությունները առաջացրեցին օրենսդրության համապատասխանեցման խնդիր, որը ցայսօր դեռևս շարունակվում է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի գնահատականն է «**չիրականացված**»:

Դատախազներ.	Հանձնարարական 14
Դատախազների նշանակման և առաջխաղացման գործընթացների բարեփոխում, ներառյալ՝ ա. որակավորման հանձնաժողովում որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը բարձրացնելով, ՀՀ գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունները սահմանափակելով և նրանից պահանջելով գրավոր հիմնավորման տրամադրում իր որոշումների համար և բ. թույլատրելով նվազ հաջողակ թեկնածուներին բողոքարկել դատարան՝ հատուկ և ամբողջական իրավական դրույթների հիման վրա:	

ԳՐԵԿՈ-ի այս հանձնարարականը պայմանավորված է ՀՀ գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունների առկայությամբ դատախազների նշանակման հարցում: ԳՐԵԿՈ-ն իր զեկույցում մանրամասն նկարագրել է դատախազների նշանակման և առաջխաղացման գործընթացները և վերլուծել ՀՀ ներպետական օրենսդրությունը: Օրենսդրության հիմնական վերլուծությունը հիմնված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և այլ վերաբերելի օրենսդրական ակտերի վրա:

Կատարված ուսումնասիրությունը վեր հանեց, որ ԳՐԵԿՈ-ի կողմից զեկույց կազմելուց մինչև 13.12.2016թ. չեն եղել վերաբերելի փոփոխություններ համապատասխան իրավական ակտերում: Այս իսկ պատճառով սույն հանձնարարականի գնահատականն է «**չիրականացված**»:

Դատախազներ.	Հանձնարարական 15
Իրականացնել դատախազների հանդեպ անպատշաճ ազդեցության կանխման, շահերի բախման և դատախազությունում կոռուպցիայի դեմ պայքարի հատուկ քաղաքականություն, որը կներառի՝ ա. բոլոր դատախազների համար անընդհատական դասընթացների անցկացում էթիկայի և վարքագծի, դատական անկողմնակալության և անկախության, շահերի բախման և կոռուպցիայի մասին, բ. կոնֆիդենցիալ խորհրդատվության տրամադրում դատախազության ներսում, որպեսզի բարձրացվի դատախազների իրազեկությունը և խորհրդատվություն տրամադրվի՝ կապված այն ոլորտների հետ, որոնք նշված են սույն Հանձնարարականի ա. կետում:	

Գնահատվող ժամանակահատվածում միայն վերաբերելի և հիշատակման արժանի տեղեկատվությունն այն է, որ ըստ ՀՀ գլխավոր դատախազության, 31 դատախազներ անցել են դասընթացներ Արդարադատության ակադեմիայում «Դատախազի մասնագիտական էթիկան» և «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի արդի հարցեր» թեմաներով: Հաշվի առնելով սույն տեղեկատվությունը՝ այս հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Պաշտոնյաների բոլոր երեք խմբերին վերաբերող հանձնարարականներ.	Հանձնարարական 16

Առավել կատարելագործել խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների կողմից նվերների ընդունման վերաբերյալ կանոնները, որպեսզի հստակ սահմանումների միջոցով որպես նվերներ ներառվեն ցանկացած օգուտները, ներառյալ՝ բնական տեսքով տրամադրվող օգուտները և այն օգուտները, որոնք տրվում են իրենց հետ փոխկապակցված անձանց: Սահմանել նվերները համապատասխան մոնիտորինգային մարմնին հայտարարագրելու պարտավորություն, իսկ դատավորների դեպքում նաև նվազեցնել հայտարարագրվելիք նվերների առավելագույն արժեքը:

Այս հանձնարարականի ձևավորման հիմք էր հանդիսացել ԳՐԵԿՈ-ի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ դատական օրենսգրքի վերլուծությունը: Վերլուծելով այս իրավական ակտերում առկա դրույթները՝ ԳՐԵԿՈ-ն հանգել էր այն եզրակացության, որ դրանք պետք է բարելավվեն, քանզի առկա կարգավորումները նվերների ստացման առումով ունեն մի շարք թերություններ և պարունակում են ռիսկեր:

Հաշվի առնելով, որ դիտարկվող ժամանակահատվածում տեղի չեն ունեցել վերաբերելի փոփոխություններ և լրացումներ վերոնշյալ իրավական ակտերում, այս հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Պաշտոնյաների բոլոր երեք խմբերին վերաբերող հանձանարարականներ.	**Հանձնարարական 17**
Ավելի կատարելագործել գույքի հայտարարագրերի գործող ռեժիմը խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների առնչությամբ՝ օրենքում սահմանելով այն տվյալները, որոնք ենթակա են հրապարակման և բացառելով միայն այն տվյալները, որոնց պաշտպանվածությունը հստակորեն պահանջվում է անձնական կյանքի գաղտնիության պատճառներով: Բացի այդ, ընդլայնել հայտարարագրերի ռեժիմի կիրառելիությունը՝ տարածելով այն բոլոր դատախազների վրա:	

ԳՐԵԿՈ-ն այս հանձնարարականի տրամադրման համար հիմք է ընդունել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝ կապված գույքի հայտարարագրերի հետ: Մասնավորապես, ըստ ԳՐԵԿՈ-ի, խնդրահարույց է այն, որ անձին նույնացնող կամ գույքի տվյալները չեն հրապարակվում: Խնդրահարույց է նաև, որ հրապարակման ենթակա տվյալների ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ և ոչ թե օրենքով: ԳՐԵԿՈ-ի կարծիքով փոքր էր նաև հայտարարագիր ներկայացնող դատախազների թիվը:

Դիտարկվող ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոփոխություններ վերաբերելի օրենսդրությունում, և այդ պատճառով այս հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Պաշտոնյաների բոլոր երեք խմբերին վերաբերող հանձանարարականներ.	**Հանձնարարական 18**
Պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների առումով կիրառելի գույքի հայտարարագրման կանոնների արդյունավետ վերահսկողությունը և գործադրումը, հատկապես ուժեղացնելով Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի օպերատիվ անկախությունը՝հանձնաժողովին տրամադրելով հստակ մանդատ, լիազորություններ և պատշաճ միջոցներ՝ ներկայացրած հայտարարագրերը խորությամբ ստուգելու, խախտումները քննելու և վարույթներ հարուցելու համար և	

կանոնների խախտման դեպքերում սահմանելու արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ բնույթի սանկցիաներ:

ԳՐԵԿՈ-ն սույն հանձնարարականը տալու համար հիմք էր ընդունել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի սեփական վերլուծությունը, որում անդրադարձել էր և՛ հայտարարագրման կանոններին, և՛ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորություններին ու գործառույթներին: Հանձնարարականը կարող էր համարվել «**մասամբ իրականացված**», եթե վերոնշյալ օրենքում սահմանվեին համապատասխան փոփոխություններ: Ելնելով այն հանգամանքից, որ դիտարկվող ժամանակահատվածում վերաբերելի փոփոխություններ չեն գրանցվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Ամփոփում

Ըստ էության, ԳՐԵԿՈ հանձնարարականների կատարման հարցում առաջխաղացում ապահոված հիմնական գործոնը հանդիսանում են 2015թ. սահմանադրական փոփոխությունները, որոնք իրենց ազդեցությունը թողեցին բոլոր հանձնարարականների վրա՝ բացառությամբ բոլոր երեք խմբերին վերաբերող հանձնարարականների: Երկրորդական դերակատարում ունեցան սահմանափակ թվով փոփոխությունները և լրացումները տարբեր իրավական ակտերում: Բացի այդ, իրենց դերը խաղացին նաև որոշակի,սահմանափակ թվով պրակտիկ գործողությունները, ինչպես, օրինակ, դատախազների համար դասընթացների անցկացումը և Ազգային ժողովում հանրային լսումների մի փոքր ավելի հաճախակի կազմակերպումը:

ՏԶՀԿ (OECD)

2003թ.-ից Հայաստանը ներգրավված է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնված «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում, որը կոչված է բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից իրականացվող մոնիտորինգի արդյունքում մշակված հանձնարարականների հիման վրա: 2014թ. հոկտեմբերին ՏՀԶԿ երրորդ փուլի մոնիտորինգային զեկույցում ներկայացվել է հանձնարարականների հերթական խումբը. այն ներառում է 23 հանձնարարական: 2016թ. ՏՀԶԿ հանձնարարականների կատարման վերաբերյալ առաջընթացի զեկույցն ընդունվել է 15.09.2016թ.-ին՝ Փարիզում կայացած ՏՀԶԿ Ստամբուլի գործողությունների ծրագրի 17-րդ նիստում:

Ստորև ներկայացվում են 23 հանձնարարականների կատարման մոնիտորինգի արդյունքները, որոնք վերաբերում են 15.09.2016-31.12.2016թթ. ընկած ժամանակահատվածի զարգացումներին:

Հանձնարարական 1. Հակակոռուպցիոն քաղաքականություն
Կազմակերպել իմաստալից քննարկումներ նոր ռազմավարության վերաբերյալ պետական իշխանությունների և ոչ կառավարական գործընկերների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների հետ, ապահովելու համար, որպեսզի ռազմավարությունը սևեռված

լինի ճիշտ առաջնահերթությունների վրա և ձևավորի հասարակական աջակցություն ռազմավարության իրականացման համար:

Ապահովել, որպեսզի նոր ռազմավարությունը ունենա համակարգման և մոնիտորինգի ուժեղ մեխանիզմ, ներառյալ՝ մի շարք ցուցիչներ կատարողականի ստուգման առումով, և օգտագործվեն ուսումնասիրությունները և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից բերվող նպաստը:

Մշակել բյուջե ռազմավարության իրականացման համար, որը կերաշխավորի բավարար մակարդակի մարդկային և ֆինանսական միջոցներ և ապահովել անհրաժեշտ ֆինանսավորում պետական բյուջեից:

Որպես կանոն, հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման, այդ թվում՝ առաջնահերթությունների վերաբերյալ, շահագրգիռ կողմերի քննարկումներ չեն լինում: Համաձայն 2016թ. «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի» տվյալների, կոռուպցիայի մակարդակը կրճատելու ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը շատ արդյունավետ կամ արդյունավետ է համարում հարցվածների միայն 14 տոկոսը, այն դեպքում, երբ այդ քայլերն անարդյունավետ կամ շատ անարդյունավետ է համարում հարցվածների 65 տոկոսը[52]: Այս թվերը վկայում են այս բաղադրիչի ոչ արդյունավետ իրականացման մասին:

Ինչ վերաբերում է համակարգման և մոնիտորինգի գործառույթներին, ապա նոր զարգացումներ չեն նկատվել գնահատվող ժամանակահատվածում: 2016թ. պետական բյուջեում որոշակի հակակոռուպցիոն գործողություններ իրականացնելու համար գումարներ նախատեսված չեն եղել: Հաշվի առնելով այս ամենը՝հանձնարարականը կարելի է համարել որպես «**չիրականացված**»:

Հանձնարարական 2. Ուսումնասիրություններ
Ընդհանուր ուսումնասիրություններից զատ ուսումնասիրություններ պատվիրել նաև հատուկ և բարձր ռիսկայնության ոլորտների համար, որպեսզի դրանով օժանդակություն տրվի հակակոռուպցիոն քաղաքականության և միջոցների մշակմանը և մոնիտորինգին: **Աջակցել ՀԿ-ներին կոռուպցիայի վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացման հարցում: Օգտագործել կառավարության կողմից պատվիրված և ՀԿ-ների կողմից իրականացված ուսումնասիրությունները նոր ռազմավարության մշակման և դրա իրականացման մոնիտորինգի համար: Հրապարակել դրանք հակակոռուպցիոն խորհրդի կայքում:**

Ուսումնասիրությունների առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը ԹԻՀԿ-ի հարցմանը տեղեկացրեց, որ ԵԱՀԿ ֆինանսավորմամբ ներգրավված փորձագետները օժանդակել են կոռուպցիայի քրեականացման հարցերում 2016թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ինչ վերաբերում է ՀԿ-ների աջակցությանը և ՀԿ-ների ուսումնասիրությունների օգտագործմանը, ապա դրանց մասով իրավիճակը շարունակում է մնալ բավարար: Պետք է սակայն նշել, որ այդ ուսումնասիրությունները չեն հրապարակվում ՀՀ կառավարության

[52] https://transparency.am/hy/gcb/2016

կայքի հակակոռուպցիոն խորհրդի կայքէջում: Վերոգրյալի հիման վրա սույն հանձնարարականի գնահատականն է հանդիսանում «**մասամբ իրականացված**»-ը:

Հանձնարարական 3. ՀԿ-ների մասնակցություն և իրազեկության բարձրացում
Տրամադրել ավելի լայն հնարավորություններ ՀԿ-ներին՝ մասնակցելու Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատանքներին: **Նոր ռազմավարության մեկնարկի ընթացքում կազմակերպել հանրային իրազեկման ծրագիր, որպեսզի կառավարության կողմից քաղաքացիներին հղվի վճռական ուղերձ կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության վերաբերյալ:** **Աջակցել նոր ռազմավարության իրականացմանը պարբերական հանրային տեղեկատվական քարոզարշավներով՝ կապված գործնական լուծումների հետ, և կոռուպցիային առերեսվելու դեպքում՝ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների հետ:**

29.12.2016թ.-ին ընդունվեց ՀՀ կառավարության 1383-Ն որոշումը, որով փոփոխություններ կատարվեցին ՀՀ կառավարության «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N165-Ն որոշման մեջ: Դրանով, մասնավորապես, սահմանվեցին նաև այն չափանիշները, որոնց պետք է բավարարեն հասարակական կազմակերպությունները, որպեսզի ընդգրկվեն Խորհրդի կազմի մեջ: Մասնավորապես, այժմ ՀԿ-ները ոչ թե պետք է ունենան հակակոռուպցիոն ոլորտում գործունեության փորձ վերջին 5 տարում, այլ վերջին 5 տարվա ընթացքում առնվազն 3 տարվա փորձ: Նշված փոփոխությունների արդյունքում ընդլայնվեց նաև Խորհրդում ոչ պետական կառույցների ներկայացուցչությունը: Այժմ քաղաքացիական հասարակությունը Խորհրդում ունի 4, նախկին 2-ի փոխարեն, ընդ որում, երկու նոր անդամները ներկայացնելու են մասնավոր հատվածի հասարակական կազմակերպությունները: Բացի այդ, ևս մեկ ներկայացուցիչ ունենալու է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան:

Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ բաղադրիչներին, ապա զարգացումներ տեղի չեն ունեցել: Այս, իսկ պատճառով այս հանձնարարականը ևս գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 4. Հակակոռուպցիոն մարմիններ
Ապահովել, որպեսզի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը առաջնորդի հակակոռուպցիոն ռազմավարության և դրա մոնիտորինգի համակարգումը, պետական կառույցներին և հանրությանը տեղեկությունների պարբերաբար հաղորդումը ռազմավարության առաջընթացի և դրա իրականացման ընթացքում առաջացած մարտահրավերների մասին, ինչպես նաև ռազմավարության իրականացման արդյունավետությանը միտված միջոցների ձեռնարկումն ըստ անհրաժեշտության: **Հակակոռուպցիոն ռազմավարության համակարգման և մոնիտորինգի մշտական քարտուղարությանը տրամադրել հստակ մանդատ կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության համակարգման և մոնիտորինգի համար, ինչպես նաև անհրաժեշտ**

մարդկային և ֆինանսական միջոցներ արդյունավետ և անկախ գործունեության համար:

Հզորացնել պետական մարմինների կարողությունները՝ մշակելու և իրականացնելու ոլորտային հակակոռուպցիոն միջոցառումներ, տրամադրել նրանց վերլուծական և մեթոդաբանական աջակցություն, ապահովել հակակոռուպցիոն կոնտակտային անձանց, պետական մարմինների էթիկայի հանձնաժողովների և իրավապահ մարմինների միջև համակարգումը:

Սահմանել դոնորների համակարգման մեխանիզմ՝ ապահովելու դոնորների արդյունավետ աջակցությունը հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն, օրինավորության և արդյունավետ կառավարման այլ ծրագրերին:

Դիտարկվող ժամանակահատվածում այս հանձնարարականի առնչությամբ տեղի չի ունեցել որևէ նկատելի զարգացում: Հաշվի առնելով զարգացումների բացակայությունը՝ սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Հանձնարարական 5. Կոռուպցիայի քրեականացում
Առանց լրացուցիչ ուշացումների ներդնել իրավաբանական անձանց պատասխանատվությունը կոռուպցիոն հանցագործությունների համար (քրեական, վարչական կամ քաղաքացիական)՝ համահունչ միջազգային ստանդարտներին, և աջակցել իրավապահ մարմիններին՝ արդյունավետորեն հետաքննելու իրավաբանական անձանց ընդգրկող կոռուպցիոն գործերը: **Ազդեցության չարաշահման հանցակազմը ամբողջությամբ համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:** **Մշակել դասընթացների ծրագիր և կազմակերպել դասընթացներ քննիչների և դատախազների համար՝ կապված կաշառակերության դեպքերի հայտնաբերման, քննման և դատապնդման հետ, այն դեպքերում,երբ կաշառքը պարզապես առաջարկվել է կամ նման խոստում է տրվել, ինչպես նաև ազդեցության չարաշահման դեպքում: Մշակել նաև ուղեցույցներ քննիչների, դատախազների և դատավորների համար այս հանցակազմերի կիրառման առումով:** **Սատարել նոր ներդրված դրույթների և նախկինում գոյություն ունեցող կոռուպցիոն հանցագործությունների նոր տարրերի բացահայտմանը և քննմանը հետևյալ եղանակներով՝ ա. ավելացնելով իրավապահ մարմինների և դատախազության նախաձեռնողականությունը, հատկապես վերլուծական գործիքների ավելի լայն օգտագործմամբ, բ. ավելի ակտիվ կիրառելով բացահայտման այլ գործիքները որպես հիմք քննություն սկսելու համար՝ ի լրումն իրավապահ մարմինների կողմից հավաքված հետախուզական տեղեկատվության, ինչպես, օրինակ, լրատվամիջոցների զեկույցները, այլ երկրներից ստացված տեղեկատվությունը, հարկային տեսուչների, աուդիտորների, ֆինանսական վերահսկողության մարմինների (ՖՎՄ) կողմից ստացված ուղղորդումները, կառավարության կայքերից և թեժ գծերից ստացված բողոքները, ինչպես նաև բողոքների այլ մեխանիզմներից հավաքագրված տեղեկատվությունը:**

Իրավաբանական անձանց պատասխանատվության ներդրման առնչությամբ դիտարկվող ժամանակահատվածում զարգացումներ տեղի չեն ունեցել: Ազդեցության չարաշահման

հանցակազմի համապատասխանեցման կապակցությամբ առկա է զարգացում, որը դրսևորվում է օրենքի նախագիծը մշակելով և կառավարություն ներկայացնելով:

Ինչ վերաբերում է քննիչների և դատախազների համար դասընթացների անցկացմանը, ապա, ըստ ՀՀ դատախազության,Արդարադատության ակադեմիայում 2015թ.-ից սկիզբ առած դասընթացների շարքը կրում է շարունակական բնույթ: Մասնավորապես՝ 2016թ. ընթացում ակադեմիայում «Դատավորների մասնագիտական էթիկա» անվանմամբ դասընթաց է անցկացվել, որին մասնակցել է 84 դատավոր: Բացի այդ, կազմակերպվել է նաև դասընթաց «Հանրային ծառայությունում կոռուպցիայի դեմ պայքարի ժամանակակից հարցերը» անվանմամբ, որին մասնակցել են ինչպես գործող դատախազներ, այնպես էլ քննիչներ, իսկ 31 դատախազներ անցել են նաև «Դատախազների մասնագիտական էթիկա» խորագրով դասընթացը: Ինչ վերաբերում է պրոակտիվությանը, դրա մասին առկա չէ վերաբերելի և ամբողջական տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 6. Անձեռնմխելիություն
Ապահովել, որպեսզի անձեռնմխելիության ընթացակարգերը չխոչընդոտեն կոռուպցիոն գործերի քննությանը և դատապնդմանը:

Քանի որ գնահատվող ժամանակահատվածում անձեռնմխելիությամբ օժտված որևէ պաշտոնատար անձի հանդեպ քրեական հետապնդման իրականացման որևէ դեպք չի արձանագրվել, ապա սույն հանձնարարականը 2016թ. համար հնարավոր չէ գնահատել:

Հանձնարարական 7. Բանկային գաղտնիք և բարդ ֆինանսական գործեր
Ուսումնասիրել ֆինանսական քննությունների ընթացքում կիրառելի բանկային գաղտնիքի հրապարակման և ֆինանսական և առևտրային գրառումների հասանելիության կանոնները և այն կարգը, համաձայն որի դրանք այժմ կիրառվում են՝ ապահովելու համար, որպեսզի գործընթացը լինի պարզ և հետևողական կերպով իրականացվի և որպեսզի այն խոչընդոտ չհանդիսանա քննիչների և դատախազների համար բարդ կոռուպցիոն հանցագործություններով վարույթի իրականացման համար: **Վերապատրաստել քննիչներին և դատախազներին բարդ ֆինանսական գործերի քննման և հետապնդման նպատակով և քայլեր ձեռնարկել, որպեսզի նման քննություններն անցկացվեն ըստ անհրաժեշտություն և տրամադրվեն պատշաճ մարդկային և ֆինանսական միջոցներ, ներառյալ՝ դատա-հաշվապահական և տեղեկատվական տեխնոլոգիաների փորձաքննությունը:**

ՀՀ արդարադատության նախարարությունն ի պատասխան ԹԻՀԿ-ի հարցմանը հայտնել է, որ կազմել է ներքին օգտագործման տեղեկանք, սակայն այս տեղեկատվությամբ հնարավոր չէ դատել, թե այս դեպքում որքանով կա առաջընթաց:

Ինչ վերաբերում է դասընթացների անցկացմանը, ապա վերաբերելի տեղեկատվություն առկա չէ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Հանձնարարական 8. Կոռուպցիայի հետաքննումը և նախաքննումը

Իրավապահ և դատախազական մարմինների ներսում ուժեղացնել հակակոռուպցիոն մասնագիտացումը:

Աջակցել իրավապահ մարմինների և հսկիչ մարմինների միջև համագործակցությանը կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների բացահայտման, քննման և դատապահման նպատակով:

Խրախուսել քրեական հետապնդման և դատախազական մարմիններին, որպեսզի նրանք ավելի թիրախային և նախաձեռնողական լինեն կոռուպցիոն երևույթների նկատմամբ՝ նշանառելով բարձրաստիճան պաշտոնյաներին, հանրային կառավարման և տնտեսության առավել ռիսկային ոլորտները:

Գնահատվող ժամանակահատվածում առաջին մասի հետ կապված զարգացումներ տեղի չեն ունեցել: Երկրորդ մասի առնչությամբ միակ զարգացումն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը հրապարակայնորեն ՀՀ վերահսկիչ պալատից պահանջել է քրեաիրավական բնույթի խախտումների վերաբերյալ վերահսկողության ընթացքում կազմված արձանագրությունները և ընթացիկ հաշվետվություններն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն[53]: Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին, ապա դիտարկվող ժամանակահատվածում ևս զարգացումներ տեղի չեն ունեցել բարձրաստիճան պաշտոնյաների քրեական հետապնդման առումով: Ինչպես երևում է «2016թ. վիճակագրություն և վերլուծություն» բաժնում ներկայացված նյութից, կոռուպցիայի հանդեպ քրեաիրավական պայքարը ևս դրական զարգացում չի ապրել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականի գնահատականն է «**չիրականացված**»-ը:

Հանձնարարական 9. Վիճակագրություն

Ապահովելու համար կոռուպցիոն հանցագործությունների ամբողջական վիճակագրությունը՝ կառավարությունը պետք է հասանելի դարձնի տեղեկատվությունը, ինչը հնարավոր է դարձնում պարզել հետևյալ հանգամանքները՝

- **կասկածյալի/մեղադրյալի/դատապարտյալի պաշտոնը/դասային աստիճանը/զբաղմունքը կամ աշխատանքը**
- **յուրաքանչյուր հանցագործության դեպքում քննությունների, դատարանում մեղադրանքի ներկայացման և դատապարտման թիվը,**
- **կիրառված սանկցիաները,**
- **հանցագործի կողմից պատճառված վնասի չափը և/կամ կաշառքի չափը,**
- **առգրավված և բռնագրավված գույքի չափը:**

Գնահատվող ժամանակահատվածում մշակվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որով որպես դատախազության պարտականություն նախատեսվում է հավաքագրել և ներկայացնել առավել մանրակրկիտ վիճակագրություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիտարկվող ժամանակահատվածում մշակվել է այդ նախագիծը, գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

[53] http://www.prosecutor.am/am/mo/4200/

Հանձնարարական 10. Էթիկայի հանձնաժողով
Օժտել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին իրավունքով և կարողություններով՝ գույքի հայտարարագրերը ստուգելու և կեղծ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն տրամադրելու կամ հայտարարագիր չներկայացնելու դեպքում օրենսդրությամբ սանկցիաներ սահմանել և դրանք կիրառել առումով: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին տրամադրել անկախ բյուջե, ինչը կապահովի անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական միջոցներ: Սահմանել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը կամ մեկ այլ մարմինը որպես այնպիսին, որը խրախուսում և վերահսկում է հանրային ծառայության ընդհանուր չափանիշները և պրակտիկան հանրային կառավարման ողջ համակարգում:

28.09.2016թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունվեց «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը լրացվում էր 2 նոր հոդվածներով՝ հոդված 38.1-ով, որը կարգավորում է հանձնաժողովի աշխատակազմը և հոդված 41.1-ով, որով կարգավորվում է հանձնաժողովի ֆինանսավորումը: Դրանով նաև նախատեսվում է հանձնաժողովի լիազորությունների ավելացում՝ հայտարարագրերը ուշ ներկայացնելու, չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու առնչությամբ: Այնուամենայնիվ, մինչև 2016թ. ավարտն օրենքն ընդունված և ուժի մեջ մտած չէր:

Բացի այդ, 16.12.2016թ.-ին «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարվեց, ըստ որի գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պարտավոր են դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել բացառապես անկանխիկ ձևով, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 11. Պետական կառույցներում էթիկայի հանձնաժողովները
Ապահովել, որպեսզի պետական կառույցներում էթիկայի հանձնաժողովները գործեն պատշաճ կերպով, սահմանել նրանց իրավասությունները, նրանց ստեղծման և գործունեության կանոնները, նրանց դերակատարումը շահերի բախման կապակցությամբ, հանրային ծառայողների սահմանափակումները և պատժի ենթարկումը, և պարտավորեցնել նրանց ներկայացնելու սեփական գործունեության մասին զեկույցներ համակարգող մարմնին և հանրությանը:

Սահմանել էթիկայի հանձնաժողովների գործունեության համակարգման մարմին դրանց մեթոդաբանական ուղղորդում և վերապատրաստում տրամադրելու նպատակով, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովների մոնիտորինգի և արդյունավետության գնահատման համար:

Ստեղծել էթիկայի հանձնաժողովների միջև համակարգման մեխանիզմ, մարդկային միջոցների կառավարման բաժիններ և հակակոռուպցիոն կոնտակտային հասցեներ յուրաքանչյուր պետական կառույցում:

Այս հանձնարարականի առնչությամբ միակ զարգացումն այն է, որ ՀՀ Նախագահի կողմից ստեղծվել են 2 աշխատանքային խմբեր՝ քննարկելու թե՛ հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի հարցը և թե՛ հանրային ծառայության մարտահրավերները ընդհանրապես[54]: Դիտարկվող ժամանակահատվածում, սակայն, դրանից զատ այլ զարգացումներ չեն եղել: Այդ իսկ պատճառով սույն հանձնարարականի գնահատականն է «**չիրականացված**»:

Հանձնարարական 12. Էթիկայի կանոնագիրք

Հանրային ծառայության մասին օրենքով սահմանված կարգով մշակել էթիկայի կամ վարքագծի կանոնագրքեր հանրային ծառայողների հատուկ կատեգորիայի անձանց համար (հոդված 4):

Վերանայել և թարմացնել հանրային ծառայողների հատուկ կատեգորիաների վարքագծի կանոնագրքերը, որպեսզի վերացվեն օրենսդրությունում առկա տարաձայնությունները և համաձայնեցվի այն Հանրային ծառայության մասին օրենքի հետ:

Վերապատրաստել հանրային պաշտոնյաներին էթիկայի կանոնագրքի գործնական կիրառման առումով:

Դիտարկվող ժամանակահատվածում առաջին մասի առնչությամբ զարգացումներ տեղի չեն ունեցել: Նույնը վերաբերում է երկրորդ մասին: Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին, ապա 2016թ.-ին էթիկայի դասընթացներով վերապատրաստումներ են անցել 139 քաղաքացիական ծառայողներ: Նույն ժամանակահատվածում ՀՀ պետական կառավարման ակադեմիայում վերապատրաստվել են 574 քաղաքացիական ծառայողներ, որոնք անցել են դասընթացներ, որտեղ առկա է եղել էթիկայի բաղադրիչ: Հիմք ընդունելով տեղի գտած և վերևում ներկայացված զարգացումները՝ սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 13. Արժանիքների վրա հիմնված աշխատանքի տեղավորում

Մշակել պարզ կանոններ այն պաշտոնների առնչությամբ, որոնք պետք է դիտարկվեն որպես արժանիքների վրա հիմնված, ապահովել դրանց իրականացումը գործնականում և գրավոր արձանագրել այդպիսի նշանակումները:

[54] ՀՀ Նախագահի 20.12.2016 թ.-ի ՈՆԿ-262-Ա կարգադրություն «Կոռուպցիայիդեմպայքարիոլորտումինստիտուցիոնալհամակարգիբարեփոխումներիապահովմանաշխատանք այինխումբստեղծելումասին»: Նույն օրը ստեղծվել է նաև հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ. http://www.president.am/hy/press-release/item/2017/06/21/President-Serzh-Sargsyan-met-with-Vache-Gabrielyan-and-working-group-members/ : Պետք է նշել, որ այս կարգարդրությունը ՀՀ Նախագահի պաշտոնեական կայքում հասանելի չէ:

Ապահովել, որպեսզի թափուր տեղերի մեծամասնությունը լրացվի մրցակցությամբ, և սահմանել մարմին, որը պատասխանատու կլինի թափուր տեղերի լրացման գործընթացի համակարգման և մոնիտորինգի համար:

Մշակել ընտրության գործընթացում օրինավորության և էթիկական հատկանիշների գնահատման ուղեցույցներ:

Առաջին բաղադրիչի հետ կապված դիտարկվող ժամանակահատվածում զարգացումներ տեղի չեն ունեցել: Ինչ վերաբերում է թափուր տեղերի լրացման գործընթացի համակարգմանը և մոնիտորինգին, ապա ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը զբաղվում է միայն քաղաքացիական ծառայողներով, մինչդեռ ՀՀ-ում առկա է 22 ծառայություն: Դիտարկվող ժամանակահատվածում չի սահմանվել համակարգող մարմին: Զարգացում առկա չէ նաև երրորդ մասի առնչությամբ, և այդ իսկ պատճառով գնահատվում է այս հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Հանձնարարական 14. Շահերի բախում
Մշակել հստակ իրավական նորմեր հանրային ծառայողների տարբեր կատեգորիաների կողմից շահերի բախման և հայտարարագրման ընթացակարգերի վերաբերյալ, այդ թվում բարձր ռիսկայնության ոլորտներում աշխատող հանրային ծառայողների համար, ինչպիսիք են, օրինակ, պետական գնումների գործընթացում ներգրավված ծառայողները և այն հանրային ծառայողները, ովքեր չունեն վերադաս: **Առանց հապաղելու վերլուծել «Հանրային ծառայության մասին» օրենքի իրականացումը և պարզել անհամապատասխանությունները տարբեր օրենքներում, ինչպես, օրինակ, Քաղաքացիական ծառայության մասին օրենքը, ԱԺ կանոնակարգ օրենքը, Համայնքային ծառայության մասին օրենքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Դատական օրենսգիրքը, Դատախազության մասին օրենքը, և վերհանված թերությունները վերացնելու նպատակով վերանայել օրենսդրությունը:**

Ինչպես ՏՀԶԿ-ն է նշել իր վերջին առաջընթացի զեկույցում[55], այս հանձնարարականն իրենից ենթադրում է օրենսդրական փոփոխություններ: Առաջին բաղադրիչի առնչությամբ 2016-ին օրենսդրական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա 2016թ. նոյեմբերի 20-ին ՀՀ Նախագահի ՆԿ-262-Ա կարգադրությամբ ստեղծված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբն անդրադառնալու է նաև այս խնդրին: Ինչևիցե, հիմք ընդունելով վերոգրյալը և ՏՀԶԿ կողմից այս հանձնարարականի կատարողականի վերաբերյալ գնահատականը, այս հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Հանձնարարական 15. Ազդարարում
Ստեղծել հատուկ խողովակներ յուրաքանչյուր հանրային կառույցում կոռուպցիայի մասին ահազանգելու համար, որը դուրս կլինի աստիճանակարգված շղթայից, և սկսել իրազեկման արշավ այս միջոցների մասին հանրային ծառայողների շրջանում: **Ընդունել օրենսդրություն և պրակտիկ մեխանիզմներ ազդարարների պաշտպանության առումով:**

[55] https://www.oecd.org/corruption/acn/Armenia-ACN-Progress-Update-Oct-2016-ENG.pdf

Առաջին բաղադրիչի առնչությամբ զարգացումներ տեղի չեն ունեցել: Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, ապա դիտարկվող ժամանակահատվածում մշակվել է «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթ, և այն շրջանառվել է պետական մարմիններում: Սա հիմք է տալիս գնահատելու այս հանձնարարականը որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 16. Էթիկայի դասընթացներ
Դասընթացներ անցկացնել կոռուպցիայի դեմ պայքարի և էթիկայի մասին (էթիկայի կանոնագրքերի մասին իրազեկության ձևավորման հետ կապված) բոլոր հանրային ծառայողների կամ նրանց մեծ մասի համար. հանրային ծառայողների տարբեր կատեգորիաների (օրինակ՝ նոր հանրային ծառայողներ, էթիկայի հանձնաժողովների անդամներ և ներքին աուդիտորներ), ինչպես նաև բարձր ռիսկայնության ոլորտների, օրինակ, պետական գնումների պաշտոնյաների համար պետք է մշակվեն տարբեր ծրագրեր,տրամադրել նաև խորհրդատվություններ բարձրաստիճան և քաղաքական պաշտոնյաներին: Ներառել կատարողականի չափելի ցուցիչներ (որակական և քանակական) կոռուպցիայի դեմ պայքարի, շահերի բախման և էթիկայի դասընթացների մասով,այդ թվում՝ հանրային կառավարման մեջ էթիկայի չափանիշների վրա ազդեցության գծով հակակոռուպցիոն նոր ռազմավարությունում, և սահմանել պատասխանատու մարմին դասընթացների համակարգման և մոնիտորինգի համար:

Առաջին բաղադրիչի մասով 2016թ., ըստ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի, վերապատրաստումների են մասնակցել, ընդհանուր առմամբ, միայն քաղաքացիական ծառայողներ: Վերապատրաստումները հատուկ թիրախավորված չեն եղել էթիկայի և հակակոռուպցիոն թեմաներով, սակայն ունեցել են նման բաղադրիչներ: Համաձայն Քաղաքացիական ծառայության խորհրդի տվյալների՝ նույն թվականի ընթացքում 139 քաղաքացիական ծառայողներ անցել են հենց էթիկայի վերաբերյալ վերապատրաստումներ: Երկրորդ բաղադրիչի մասով զարգացումներ տեղի չեն ունեցել: Հետևաբար, այս հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 17. Հանրային կառավարման թափանցիկությունը և հայեցողականությունը
Ապահովել կարգավորման ազդեցության պատշաճ գնահատում մինչև օրենսդրության ընդունումը և հնարավորինս կայուն (հաճախակի չփոխվող) օրենսդրական դաշտ՝ ի շահ Հայաստանի մասնավոր հատվածի: Շարունակել էլեկտրոնային կառավարման գործիքների ներդնումը՝ միտված կառավարության բյուրոկրատիայի հետ սպառողների շփման կրճատմանը և կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Բաց կառավարության գործընկերության (ԲԿԳ) ազգային հարթակը վերածել գործուն և արդյունավետ հարթակի՝ քննարկելու քաղաքականության նախաձեռնությունները և մոնիտորինգի ենթարկելու էլեկտրոնային կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության նախաձեռնությունները: Ավարտել տեսչական բարեփոխումները առնչվող շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

Ավարտել հարկային և մաքսային բարեփոխումները և ապահովել դրանց գործնական իրականացումը:

Կարգավորման ազդեցության գնահատման առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ չի տիրապետում վիճակագրության: ՀՀ արդարադատության նախարարությունը նաև չի հայտնել, թե ով է նման վիճակագրություն վարում: Գրասենյակային հետազոտությունները ևս վեր չեն հանել որևէ մարմին, որը կտիրապետեր նման վիճակագրությանը: Այդ իսկ պատճառով հնարավոր չէ գնահատել, թե այս առնչությամբ իրավիճակն ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել:

Իրավիճակի բարելավում է արձանագրվել իրավական ակտերի նախագծերի էլեկտրոնային հարթակի ստեղծմամբ և գործարկմամբ: E-draft կայքը տարեվերջին սկսվեց գործարկվել պիլոտային ձևով: Այս ուղղությամբ գրանցվել է մեկ այլ դրական առաջընթաց. 09.08.2016թ.-ին տրված հանձնարարականների շրջանակում հանրապետական գործադիր մարմիններն ուսումնասիրել են ՀՀ կառավարության 30.08.2012թ.-ի 1104-Ն որոշման պահանջները և «e-gov.am» կայքի, ինչպես նաև ծանուցումներով իրականացվող լիցենզիաների տրամադրման մեխանիզմների և նույն կայքում առկա կարգավորումների համապատասխանությունը: Արդյունքում 11 պետական մարմինների կողմից ներկայացվել են 20 առաջարկություններ:

Բիզնես համայնքին առնչվող՝ ընդունված օրենսդրության կայունության կապակցությամբ պետք է նշել, որ որպես 2016թ.սեպտեմբերին ձևավորված նոր կառավարության գործունեության առանցք հռչակվել է բիզնես համայնքի համար հնարավորությունների ստեղծումը: Այս առնչությամբ Ֆրիդոմ Հաուզը «Անցումային երկներ 2017թ.» զեկույցում նշում է. «Նոր կառավարությունը հիմնականում կենտրոնացված է տնտեսական բարեփոխումների և արդյունավետ կառավարման, իսկ մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը հատկացնում է շատ փոքր ուշադրություն»[56]: Պետք է նշել, որ սկիզբ առած բարեփոխումները դիտարկվող ժամանակահատվածում ավարտուն տեսքի չեն հասել, որպեսզի հնարավոր լինի այժմ խոսել դրանց կայունության մասին:

Ինչ վերաբերում է հարկային բարեփոխումների փուլն ավարտելուն, ապա 2016թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց նոր Հարկային օրենսգիրքը, որն ուժի մեջ կմտնի 2018թ. հունվարի 1-ին:

Բաց կառավարման գործընկերության պլատֆորմի կապակցությամբ պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքային խումբն անց է կացրել մեկ հանդիպում, որը տեղի ունեցել նոյեմբերի 18-ին[57]: Հանդիպման ընթացքում ներկայացվել է երկրորդ գործողությունների ծրագրով հանձնարարականների կատարողականը և հստակեցվել հանձնարարականների ավարտի ժամկետները և պատասխանատուների գործառույթները: Առաջարկվել է նաև գործողությունների երրորդ ծրագրի պատասխանատուներին ներկայացնել հանձնարարականների ընթացքը և առաջիկա գործողությունների միջանկյալ ժամկետները: Քննարկվել է նաև Փարիզի հռչակագրին միանալու հարցը և ներկայացվել է առաջարկություն, որպեսզի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մինչև նոյեմբերի 30-ը ներկայացնեն առաջարկություններ հռչակագրին միանալու կապակցությամբ:

[56] https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia
[57] http://www.ogp.am/hy/news/item/2016/11/18/WG_November/

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ այս հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 18.Հանրային ֆինանսների հսկողություն և աուդիտ
Ապահովել, որպեսզի Վերահսկիչ պալատը իր կողմից անցկացվող աուդիտների ընթացքում ուշադրություն դարձնի «խարդախություն» և «կոռուպցիոն դեպքեր» երևույթներին: **Բարելավել Վերահսկիչ պալատի մեխանիզմը՝ իրավապահ մարմիններին կոռուպցիայի մասին կասկածանքների վերաբերյալ ահազանգելու առումով:** **Ապահովել, որպեսզի Վերահսկիչ պալատի փորձը օգտագործվի հանրային ծառայողների համար վերապատրաստումների մշակման ընթացքում և որպեսզի պալատը համագործակցի նոր ներքին աուդիտի միավորների հետ:** **Շարունակել միջոցներ ձեռնարկել, որպեսզի հանրային կառավարման մեջ ներդրվեն ֆինանսական հսկողության և ներքին աուդիտի արդյունավետ համակարգեր՝ համաձայն ռազմավարության և Հանրային ներքին ֆինանսական հսկողության համակարգի 2011-2013թթ. Գործողությունների, հատուկ ուշադրություն դարձնելով ֆինանսական հսկողության նախագծմանը, գոյությանն և անընդհատությանը և թերությունների մասին թափանցիկ կերպով զեկուցմանը:** **Շարունակել բավականաչափ մարդկային միջոցների տրամադրումը հանրային կառավարման մարմիններին կենտրոնական և տեղական մակարդակներում ներքին աուդիտ իրականացնելու համար,բարելավել ներքին աուդիտորների որակավորման ծրագիրը,ապահովել, որպեսզի անցկացվեն օրենսդրության գծով լավ որակի համապատասխանության ստուգումներ:** **Շարունակել դասընթացների անցկացումը կենտրոնական և տեղական ինքնակառավարման վարչական մարմինների ղեկավարների և ֆինանսական կառավարման անձնակազմերի շրջանում կոռուպցիայի կանխարգելման առումով:**

Հանձնարարականի առաջին մասի առնչությամբ հիմնական խնդիրը հանդիսանում է համագործակցության մեխանիզմների ներդրումը, ինչը 2016-ին չի կատարվել:

2016թ.-ին օրենսդրության մեջ փոփոխություն է կատարվել, որով սահմանափակվել են ռազմավարական և տարեկան ներքին աուդիտի պլանում աուդիտի փոփոխությունները. առավելագույնը կարող է փոփոխվել 10 տոկոսի չափով, բայց ավելացումներ անելու հնարավորությամբ: Երկրորդ վերաբերելի փոփոխությունն այն է, որ սահմանվել է, որ պլանավորվածի 90 տոկոսը պետք է իրականացվի: Ստեղծվել է նաև համակարգային աուդիտի ձեռնարկ, որը անցել է պիլոտավորում, և այն կներդրվի արդեն 2017թ.-ին: Պիլոտավորումը կատարվել է ՀՀ դատական դեպարտամենտում 2016թ. երկրորդ կիսամյակի ընթացքում: Այս մարմնի ընտրությունը պայմանավորված է եղել նրանով, որ այն,ըստ ՀՀ ֆինանսների նախարարության,հանդիսանում է ամենից ցածր միավոր գրանցածը:

Ինչ վերաբերում է որակավորման ծրագրերին, ապա ՀՀ ֆինանսների նախարարության հետ ԹԻՀԿ ներկայացուցչի հանդիպման ընթացքում պարզաբանվել է, որ ամեն տարի պարտադիր անց են կացվում շարունակական մասնագիտական վերապատրաստումներ: Թեմաներն ընտրում են վերապատրաստվողները: Տվյալ մարմինն ինքնագնահատում է անցկացնում և

դրա հիման վրա նշում է, թե ինչ կարիքներ են առկա աշխատակիցների մոտ: Գնահատվող ժամանակահատվածում բարդացվել է համակարգը. տարեկան կտրվածքով վերապատրաստումը 30 ժամից պակաս չի կարող լինել, և ով չի անցնում այդ 30 ժամը, զրկվում է որակավորումից: Այժմ առկա են մոտավորապես 300 որակավորված աուդիտորներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի գնահատականն է «**մասամբ իրականացված**»:

Հանձնարարական 19.Հանրային գնումներ
Ավարտել էլեկտրոնային գնումների համակարգի վերանայումը և բարելավումը՝ ապահովելով, որպեսզի այն արտացոլի միջազգային լավագույն փորձը, ներառյալ՝ գնումների գործընթացի յուրաքանչյուր փուլի էլեկտրոնային անցկացումը ընդհուպ մինչև պայմանագրի շնորհում, և տարածել էլեկտրոնային գնումների պարտադիր օգտագործումը բոլոր պետական մարմինների վրա: **Ապահովել բոլոր վերաբերելի գնումների ընթացակարգերի մասին ծանուցումների, տվյալների և վիճակագրության ժամանակին հրապարակումը կառավարական գնումներին նվիրված կայքում և՛ հայերենով, և՛ անգլերենով:** **Ապահովել, որպեսզի գնումների համակարգողները և հանրային գնումների համակարգի ցանկացած այլ աշխատակիցներ և խորհրդատուներ անցնեն պատշաճ վերապատրաստումներ (ներառյալ՝ գնումների ընթացակարգերի և կանոնների գործնական կիրառությունը):** **Ներդնել լրացուցիչ երաշխիքներ (օրինակ՝մրցութային փաստաթղթերի ընտրողական վերանայումը Գնումների աջակցման կենտրոնի (ԳԱԿ) մասնագետների և/կամ գնումների մասնագետների կողմից)՝ ապահովելու տեխնիկական բնութագրերի և մրցույթի պահանջների անկողմնակալությունը:** **ԳԱԿ մասնագետների, Գնումների բողոքարկման խորհրդի անդամների, մրցույթները գնահատողների, գնում իրականացնող մարմինների ղեկավարների և պետական գնումների գործընթացներում ընդգրկված այլ անհատների համար ներդնել շահերի բախման պաշտոնական հայտարարագրման պարտադիր պահանջ: Ապահովել այդ հայտարարագրերի ստուգումը և հրապարակումը, ներդնել սանկցիաներ շահերի բախման հայտարարագրերի խախտումների համար:** **Ուժեղացնել մրցակցությունը կիսամոնոպոլ/օլիգոպոլ ոլորտներում: Էապես կրճատել մեկ անձից կատարվող գնումները և առանց ծանուցման բանակցային գործընթացի կիրառումը:**

Գնումների ոլորտում 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Գնումների մասին» նոր օրենք, որն ուժի մեջ է մտնելու 2017թ. ապրիլի 25-ին: Նոր օրենքը չի պարունակում դրույթներ, որոնք կպահանջեին ներդնել մեխանիզմներ կամ ընթացակարգեր, որոնք երաշխիք կհանդիսանային կողմնակալ տեխնիկական առաջադրանքների սահմանման կամ մրցույթների կողմնակալ պահանջների համար: Հին օրենքը պահանջում էր, որպեսզի Գնումների աջակցման կենտրոնը ընտրողական կարգով ստուգեր տեխնիկական առաջադրանքները և մրցույթների պահանջները, մինչդեռ նոր օրենքը չի նախատեսում ԳԱԿ-

ի կամ նման կառույցի գոյություն, այսպիսով ԳԱԿ-ին առնչվող հանձնարարականները այսուհետ վերաբերելի չեն:

Նախկին օրենքի պես նորը սահմանում է Գնումների բողոքարկման խորհրդի անդամների կողմից շահերի բախման հայտարարագրերի պարտադիր տրամադրում մրցույթների գնահատման հանձնաժողովների կողմից: Միևնույն ժամանակ, ի տարբերություն հին օրենքի, այս հայտարարագրերը պետք է հրապարակվեն գնումների պաշտոնական տեղեկագրում: Այնուամենայնիվ,ինչպես նախկին օրենքում, նախատեսված չէ որևէ սանկցիա շահերի բախման խախտման դեպքում: Պետք է նշել նաև, որ նոր օրենքով Գնումների բողոքարկման խորհուրդ ընդհանրապես սահմանված չէ: Ինչ վերաբերում է այլ պաշտոնյաների, որոնք ընդգրկված են գնումների գործընթացում,նրանց նկատմամբ հայտարարագրեր ներկայացնելու պահանջ սահմանված չէ:

Դասընթացների առումով՝ 2016թ.-ին վերապատրաստվել են 515 մասնագետներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այս հանձնարարականի գնահատականն է հանդիսանում «**մասամբ իրականացված**»-ը:

Հանձնարարական 20. Տեղեկատվության ազատություն
Վերլուծել և այնուհետև վերանայել Տեղեկատվության ազատության մասին /ՏԱՄ/ օրենքը միջազգային չափանիշներին համահունչ դարձնելու, գոյություն ունեցող կարգավորումների հստակությունը ապահովելու և առկա թերությունները վերացնելու և ի թիվս այլ հարցերի՝ հանրային շահի վերլուծությունները և էլեկտրոնային հարցումները արտացոլելու նպատակով,ընդունել անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր ՏԱՄ օրենքի կիրարկման համար: Ապահովել տեղեկատվության պրոակտիվ հրապարակումը պետական մարմինների կողմից, պարզաբանել գրառումների կառավարման և դասակարգման համակարգը և ներդնել պետական մարմինների հանրային տեղեկատվության ռեգիստրներ: Դիտարկել տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական կայքի ստեղծումը: Ապահովել տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ հսկողություն և վերահսկողություն, ինչպես նաև պատշաճ լիազորություններ և միջոցներ՝պարտադիր կատարման ենթակա որոշումներ ընդունելու նպատակով, և ապահովել յուրաքանչյուր կառույցում ՏԱ պատասխանատու պաշտոնյաների նշանակումը, ինչպես որ պահանջվում է օրենքի 13-րդ հոդվածով: Բարձրացնել իրազեկությունը հանրային պաշտոնյաների շրջանում կառավարության ներսում թափանցիկության և բաց լինելու մշակույթը խրախուսելու ուղղությամբ և անցկացնել պարբերական դասընթացներ տեղեկատվության պատասխանատուների և այլ հանրային պաշտոնյաների հետ, ովքեր առնչվում են տեղեկատվության հարցերին: Ապահովել պետական միջոցներ օգտագործող կառույցների թափանցիկությանը վերաբերող դրույթների գործնական իրականացումը (օրենքի հոդված 1.2):

2016թ. նոյեմբերի 30-ին ներկայացվել է նոր՝ թվով արդեն 3-րդ հայեցակարգը տեղեկատվության ազատության ոլորտում: Բացի այդ, կատարվել է նաև միջազգային փորձի

ուսումնասիրություն և գնահատվող ժամանակահատվածում մշակվել է օրենքի նախագիծ: Այդ իսկ պատճառով սույն հանձնարարականը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»[58]:

Հանձնարարական 21. Քաղաքական կոռուպցիա
Ապահովել կուսակցությունների կողմից իրենց ֆինանսական տեղեկատվության, ներառյալ՝ բանկերից ստացված վարկերի և հիմնադրամների, ասոցիացիաների և դրանց հետ կապված այլ մարմինների հետ պայմանագրերի հրապարակումը: **Ապահովել նախընտրական քարոզչության ֆինանսավորման էական և անկախ մոնիտորինգը և կուսակցությունների ֆինանսավորման մոնիտորինգը այնպիսի անկախ մարմնի կողմից, որն ունի անհրաժեշտ աշխատակազմ, նյութական միջոցներ և լիազորություններ՝ պրոակտիվ եղանակով նման ֆինանսավորումը հսկելու համար, քննելու քաղաքական ֆինանսավորման կարգավորումների ենթադրյալ խախտումները և սահմանելու պատիժներ: Նվազագույնը Վերահսկիչ և վերստուգիչ ծառայությունը պետք է ստանա լիազորություններ և համապատասխան գործիքներ՝ գնահատելու և ստուգելու հայտարարագրերի վավերականությունը:** **Ընտրված և այլ քաղաքական պաշտոնյաների համար ապահովել շահերի բախման կանխարգելման և էթիկայի վարքագծի հստակ կանոններ: Խրախուսել դրանց համապարփակ կիրառումը և գործադրումը: Ներդնել պատշաճ պատիժներ այդ կանոնների խախտման համար:** **Համախմբել գույքի հայտարարագրերի, շահերի բախման և անհամատեղելիությունների օրենսդրությունը՝ համապարփակ ձևով կարգավորելով Էթիկայի հանձնաժողովի իրավասությունը:**

Դիտարկվող ժամանակահատվածում ընդունվեց «Կուսակցությունների մասին» ՀՀ նոր օրենքը, որով, սակայն, էապես չփոփոխվեց կուսակցությունների գործունեության ինստիտուցիոնալ դաշտը, ինչը սերտորեն փոխկապակցված է ՀՀ ընտրական օրենսգրքի հետ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը շարունակում է մնալ ոչ լիարժեք անկախ և գործնականում դրսևորում է այն նույն գործելաոճը, ինչ մինչև փոփոխությունը:

Ինչ վերաբերում է հանձնարարականի մնացած բաղադրիչներին, ապա այդ ամենի առնչությամբ 20.12.2016թ.-ին ՀՀ Նախագահի ՆԿ-262-Ա կարգադրությամբ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումների ապահովման աշխատանքային խումբ ստեղծվեց, որը պետք է զբաղվի հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդրման աշխատանքներով: Ինչևիցե, հիմք ընդունելով վերոգրյալը, այս հանձնարարականի գնահատականն է հանդիսանում «**մասամբ իրականացված**»-ը:

Հանձնարարական 22. Դատական իշխանություն
Շարունակել սահմանադրական բարեփոխումները և ապահովել դրանց պատշաճ իրականացումը՝ սահմանելով իշխանությունների ճյուղերի ավելի հստակ

[58] 2016թ. կտրվածքով սույն հանձնարարականի կատարողականը գնահատվել է «մասամբ իրականացված», սակայն սույն զեկույցի պատրաստման ընթացքում տեղի են ունեցել բացասական զարգացումներ, որոնց անդրադարձ կկատարվի 2017թ. զեկույցում:

տարանջատում և դատական իշխանության անկախություն՝ ներառյալ բարելավելով դատավորների թեկնածուների առաջադրման և նշանակման ընթացակարգերը:

Ապահովել գործնականում դատական իշխանության պատշաճ ֆինանսավորումը:

Սահմանել մեխանիզմ, որը կապահովի դատավորների հավասար մասնակցությունը ինքնակառավարման մարմիններում: Հստակեցնել այդ մարմինների իրավասությունները, ինչպես նաև հստակեցնել դատարանների նախագահների դերակատարումը:

Ապահովել, որպեսզի գործերի ավտոմատ բաշխումը դատավորների շրջանում հիմնված լինի օբյեկտիվ չափանիշների վրա և ապահովել, որպեսզի գործերի բաշխման վերաբերյալ տեղեկատվությունը բաց լինի դատավորների, կողմերի և հանրության համար, լինի ներդրված և գործող:

Ապահովել, որպեսզի դատական համակարգի անկախությունը ներառի նաև անկախություն այլ դատավորների կողմից միջամտությունից և, եթե նման դեպքեր են տեղի ունենում, ապա դրանք ենթակա լինեն կարգապահական միջոցների ընդդեմ այն դատավորների, ովքեր մասնակցություն են ունեցել նման գործունեության մեջ:

Ձևափոխել դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը՝ սահմանելով միջազգային չափանիշների և լավագույն փորձին համահունչ հստակ և ամբողջական չափանիշներ, և ապահովել, որպեսզի օրենքն արտացոլի այն փաստը, որ կարգապահական պատասխանատվությունը պահանջում է կարգապահական իրավախախտում և որ կարգապահական ընթացակարգից տարբերվող՝ աշխատանքից հեռացման ընթացակարգ պետք է դիտարկվի այն դատավորների համար, ովքեր թերացել են իրենց պարտականությունները կատարելիս:

Ապահովել, որպեսզի կարգապահական վարույթները համապատասխանեն արդար դատաքննության երաշխիքներին և առանձնացնելով քննության, դատապնդման և որոշումների ընդունման վարույթները՝ դատավորներին տրամադրել պատշաճ միջոցներ իրենց պաշտպանելու համար:

Օրենսդրական մակարդակում դիտարկված ժամանակահատվածում փոփոխություններ չեն իրականացվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հանձնարարականի իրականացման համար առաջնային մակարդակում անհրաժեշտ է օրենսդրական/ենթաօրենսդրական իրավական բազայի ստեղծում, սակայն նման փոփոխություններ տեղի չեն ունեցել, գտնում ենք, որ այս հանձնարարականի առնչությամբ դիտարկվող ժամանակահատվածում գնահատականն է«**չիրականացված**»-ը:

Հանձնարարական 23. Բիզնեսի օրինավորություն
Իրականացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատում՝ ներառելով մասնավոր հատվածին: Գործարար համայնքի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ վեր հանել բիզնեսի օրինավորության միջոցներ և ընդգրկել դրանք հակակոռուպցիոն ռազմավարության մեջ կամ մեկ այլ քաղաքականության փաստաթղթում և ապահովել այս միջոցների իրականացման մոնիտորինգը: **Ընդգրկել գործարար ոլորտի ներկայացուցիչներին նոր հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված հակակոռուպցիոն մարմինների կազմի մեջ:**

Այս հանձնարարականի առնչությամբ պետք է նշել, որ, չնայած բիզնեսին աջակցություն ցուցաբերելու նպատակով վարչապետի ակտիվ ջանքերին, այնուամենայնիվ, ֆորմալ առումով, ոչ մի բաղադրիչ չի կատարվել: Հետևաբար, այս հանձնարարականը գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Ամփոփում

ՏՀԶԿ հանձնարարականների կատարողականի առումով պատկերը հետևյալն է՝ 14 հանձնարարական գնահատվել է որպես «**մասամբ իրականացված**»,8-ը՝ որպես «**չիրականացված**», իսկ 1-ի դեպքում գնահատել հնարավոր չի եղել՝ դեպքերի բացակայության պատճառով: Պետք է նշել, որ ՏՀԶԿ հանձնարարականների առումով դիտարկվող ժամանակահատվածը այս ուսումնասիրության շրջանակում էապես ավելի նեղ է, քան մյուս միջազգային պարտավորությունների կամ հանձնարարականների դեպքում՝ ընդամենը ոչ լրիվ 3 ամիս: Այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում 15 հանձնարարականների առնչությամբ հնարավոր է եղել ապահովել «**մասամբ իրականացված**» գնահատականը, ինչը կարող է վկայել հանձնարարականների կատարմանը պատշաճ հետամուտ լինելու վերաբերյալ:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

«Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» հայեցակարգի հիման վրա 2015թ.հոկտեմբերի 25-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց ՀՀ հակակոռուպցիոն երրորդ ռազմավարությունը[59] և 2015-2018թթ. միջոցառումների ծրագիրը[60]: Միջոցառումների ծրագիրը բաղկացած է թեմատիկ 10 խմբից, որոնցից 4-ը ոլորտային, իսկ 6-ը՝ ոչ ոլորտային: Ոլորտային խմբերն են.

1. Պետական եկամուտների հավաքագրման ոլորտ
2. Ոստիկանության ոլորտ՝ քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասով
3. Կրթության ոլորտ
4. Առողջապահության ոլորտ

Ոչ ոլորտային խմբերն են.

1. Օրինավոր և բարեխիղճ հանրային դասի ձևավորում
2. Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում
3. Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում
4. Մասնակցային կառավարման համակարգի ձևավորում
5. Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության միջոցների սահմանում
6. Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու գործուն միջոցների ձեռնարկում:

Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով վերոնշյալ 10 թեմաներով նախատեսված է 54 միջոցառում՝ կոնկրետ ժամանակացույցով և ակնկալվող արդյունքներով:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջանկյալ կամ վերջնական ակնկալվող արդյունք սահմանված է եղել 42(54-ից) միջոցառումների համար, և այդ արդյունքները գնահատվել են որպես «իրականացված», «մասամբ իրականացված» կամ «չիրականացված»: Բոլոր 42 միջոցառումների ընդհանուր կատարողականի պատկերը ներկայացված է ստորև՝Պատկեր 1-ում:

[59] ՀՀ կառավարության 24.10.2015թ.-ի N 1141-Ն որոշում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին:
[60] Առաջին՝ 2003-2007թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա իրականացման միջոցառումների ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2003թ.նոյեմբերի 6-ի N1522-Ն որոշմամբ, իսկ երկրորդը՝ 2009-2012թթ.համար, ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի N1272-Ն որոշմամբ:



Ինչպես կարելի է տեսնել միջոցառումների մեծամասնությունը որոշ չափով իրականացվել է: «Իրականացված» միջոցառումները (թվով 13) կազմում են 31%, իսկ «մասամբ իրականացված»-ները՝ 47%(կամ թվով 19): Այսինքն՝ ընդհանուր առմամբ 33 միջոցառում (կամ 79%-ը) որոշակի չափով իրականացվել է: Մեկ միջոցառման դեպքում (31-րդ միջոցառումը) գնահատումը վերաբերելի չէ, քանի որ սույն զեկույցի պատրաստման ժամանակ տեղ գտան զարգացումներ, որոնց արդյունքում այդ միջոցառման իրականացումը կորցրեց իր իմաստը (մանրամասները տե՛ս ստորև):

Թվով 42 միջոցառումներից 34-ի դեպքում ակնկալվող արդյունքներին հասնելու համար տրված էր 2015-2016թթ.ժամանակահատվածը, իսկ 8-ի դեպքում ակնկալվող արդյունքին հասնելու ժամանակահատվածը սահմանված է 2016թ. հունվարի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ը:



Պատկեր 2-ում ներկայացված է նշված 42 միջոցառումների կատարողականը ըստ ոչ ոլորտային խմբերի (հակակոռուպցիոն քաղաքականության բաղադրիչների), որից երևում է, որ բոլոր խմբերով էլ իրականացված միջացառումների թիվը դեռևս բավականին փոքր է, չնայած նրան, որ, ըստ միջոցառումների ժամանակացույցի, դրանք մինչև 2016թ. ավարտը պետք է իրականացված լինեին: Առավել վատ է իրավիճակը «Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում» (12 միջոցառումից իրականացվել է միայն 1-ը) և «Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում» (9-ից իրականացվել է միայն 2-ը) բաժինների միջոցառումների դեպքում: Այդ նույն բաժինների դեպքում զգալի է նաև չիրականացված միջոցառումների քանակը (թվով համապատասխանաբար 3 և 5):

Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում

Այս բաժնի ներքո առկա են 12 միջոցառումներ, որոնցից 3-ի դեպքում ակնկալվող արդյունքի ժամանակահատվածը եղել է 01.01.2016-31.12.2016թ.-ը, իսկ մնացած 9-ի դեպքում՝ 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածը:

Ստորև ներկայացվող 12 միջոցառումներից 1-ը (11-րդ միջոցառում) գնահատվել է որպես «**իրականացված**», 8-ը՝ որպես «**մասամբ իրականացված**» (միջոցառումներ 6, 7, 10, 13, 14, 15, 16, 17), իսկ 3-ը գնահատվել են որպես «**չիրականացված**» (միջոցառումներ 8, 9, 12):

Ստորև կարելի է գտնել յուրաքանչյուր միջոցառման մասին վերլուծություն տրված գնահատականի շուրջ:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
6. ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում, ճյուղային օրենքներով էթիկայի սկզբունքների և վարքագծի կանոնների սահմանում	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին առաջարկությունները ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ, անհրաժեշտության դեպքում օրենսդրական ակտերում կատարվել են փոփոխություններ ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել է համապատասխան փոփոխություն

Համաձայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, համապատասխան առաջարկությունը ներկայացվել է աշխատակազմ 23.11.2016թ.-ին: Սակայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում վերաբերելի փոփոխություն չի կատարվել: Այսինքն՝ ստացվում է, որ երկու բաղադրիչներից մեկն իրականացվել է, իսկ մյուսը՝ ոչ:Այս միջոցառումը գնահատվել է որպես «**մասամբ իրականացված**», քանի որ միայն առաջին մասն է իրականացվել:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
7. Հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցով պատասխանատուներ) ձևավորում, դրանց ձևավորման և գործունեության նորմերի սահմանում, պատշաճ գործունության ապահովում, վերջիններիս գործունեությունը համակարգող մարմնին և հանրությանը հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պարտականության սահմանում	Հանրային ծառայության ընտրված ոլորտներում ստեղծվել են վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներ: Վերջիններիս համար սահմանվել է համակարգող մարմնին և հանրությանը հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պարտականություն: Օրենսդրական ակտերով հստակեցվել են վարքագծի կանոնների խախտման համար կիրառվող պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը

Միջոցառմամբ նախատեսված երեք բաղադրիչներից ոչ մեկի կապակցությամբ ավարտուն քայլեր չեն իրականացվել 2016թ.-ի ընթացքում: Այնուամենայնիվ, երկրորդ և երրորդ բաղադրիչների կապակցությամբ առկա է զարգացում, ինչը պայմանավորված է «Կոռուպցիայի կանխարգելման և էթիկայի հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմամբ և դրա հետ կապված այլ իրավական ակտերում առաջարկվող փոփոխություններով[61]: Այս փաթեթի մշակումը սկիզբ է առել 20.12.2016թ.-ին՝ ՀՀ Նախագահի կողմից աշխատանքային խմբի ստեղծմամբ: Այդ իսկ պատճառով այս միջոցառման գնահատականը հանդիսանում է «**մասամբ իրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
8. Հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) գործունեության համակարգման մարմնի նշանակում: Տվյալ մարմնի կողմից վերջիններիս մեթոդական ուղեցույցների տրամադրում և դրանց վերապատրաստման իրականացում	Նշանակված է մարմին, որը համակարգում է հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) գործունեությունը:

Միջոցառում 8-ի ակնկալվող արդյունքը 2016թ. համար հանդիսանում էր ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող մարմինների նկատմամբ համակարգող մարմնի նշանակված լինելը: Այս միջոցառման առումով չկա առաջընթաց: Հետևաբար՝ այս միջոցառման գնահատականն է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
9. Յուրաքանչյուր պետական մարմնում հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով	Մշակել գործուն մեխանիզմ յուրաքանչյուր պետական մարմնում հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ), անձնակազմի կառավարման ստորաբաժանումների և հակակոռուպցիոն ծրագրերի

[61] https://www.e-draft.am/projects/18/about

պատասխանատուներ), անձնակազմի կառավարման ստորաբաժանումների և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման համար պատասխանատուների միջև համագործակցության գործուն մեխանիզմների ներդնում	իրականացման համար պատասխանատուների միջև համագործակցությունն ապահովելու համար

Այս դեպքում ևս չկա առաջընթաց, և այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվել է որպես ՀՀ Նախագահի 20.12.2016թ.-ին ստեղծված «Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման» աշխատանքային խմբի իրավասության ներքո դիտարկվող հարց: Հետևաբար՝ այս միջոցառման գնահատականը ևս հանդիսանում է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
10. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքների տրամադրում	Կատարվել են անհրաժեշտ ուսումնասիրություններ: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին տրամադրվել են հանրային ծառայության ընտրված ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքներ

Ակնկալվող արդյունքը ևս բաղկացած է երկու մասից: Այս միջոցառման առումով առկա է առաջընթաց այն պատճառով, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից 23.11.2016թ.-ին հրապարակված առաջարկությունները[62] առնչվում են ակնկալվող արդյունքին, և առաջարկությունների տեքստի ուսումնասիրությունը հուշում է, որ իրականացվել է ԵՄ և ՏՀՁԿ փաստաթղթերի ուսումնասիրություն[63]: Վերոնշյալ պատճառներով այս միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
11. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության գործընթացի վերանայման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է:

Միջազգային փորձի ուսումնասիրության առնչությամբ պետք է նշել, որ հանձնաժողովը ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանում հստակ նշել է, որ հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է միջազգային փորձը, սակայն համապատասխան ուսումնասիրությունը չի ներկայացվել: Այնուամենայնիվ, ՀՀ արդարադատության նախարարության հետ անցկացված հանդիպման ընթացքում ներկայացվել են համապատասխան նյութեր կատարված

[62] http://ethics.am/u_files/file/Ardir_Arajarkutyunner_.pdf
[63] Նույն տեղում, էջ 1

ուսումնասիրության վերաբերյալ՝ թեև արված աշխատանքային մակարդակում: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է Սերբիայի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Ուկրաինայի, Քենիայի, Եթովպիայի և ԱՄՆ փորձը: Այս իսկ պատճառով այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է որպես «**իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
12. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին միջոցներով համալրման ապահովում	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին տրամադրվել է առանձին տարածք: Հանձնաժողովն ունի աշխատակազմ, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում:

Մինչև 2016թ. ավարտը հանձնաժողովը չի ունեցել առանձին տարածք, առանձին բյուջետային ֆինանսավորում և աշխատակազմ: Վերոնշյալ պատճառներով այս միջոցառումը դիտարկվում է որպես «**չիրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
13. Շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգերի և օրենսդրական դաշտի ձևավորում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Օրենսդրությամբ սահմանվել են շահերի բախման կանխարգելման մասին դրույթներ: Ստեղծվել են շահերի բախումը կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգեր:

Այս միջոցառումը իրականացվել է միայն միջազգային ուսումնասիրության մասով: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է ԵԽ մոդելային օրենքը, Ռուսաստանի, Բելառուսի, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի և Պորտուգալիայի փորձը: Այս իսկ պատճառով այս միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
14. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ընդունում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է:

Այս միջոցառման երկու բաղադրիչներից կրկին միայն միջազգային փորձի ուսումնասիրությունն է կատարվել սահմանված ժամկետում, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը 2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս մշակված չէր: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
15. Էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին վերապահվել են հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման,

սահմանափակումների բացահայտման գործառույթների վերապահում	անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման, դրանց չեզոքացման գործառույթներ:

Այս միջոցառման առումով ևս միջազգային ուսումնասիրությունն իրականացվել է (ուսումնասիրվել է ԵԽ մոդելային օրենքը), իսկ համապատասխան օրենսդրական փոփոխությունները՝ ոչ: Այդ իսկ պատճառով 15-րդ միջոցառումը ևս դիտարկվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
16. Հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Իրականացվել են գործուն քայլեր հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման համակարգի բարելավման նպատակով:

Առաջին մասի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունն անց է կացվել: Երկրորդ բաղադրիչն իրենից ենթադրում է էական քայլերի ձեռնարկում թե՛ օրենսդրական մակարդակում և թե՛ գործնական մակարդակում: Երկրորդ բաղադրիչի կապակցությամբ այդպիսի քայլեր չեն դիտարկվել գնահատվող ժամանակահատվածում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
17. Հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացում՝ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը	Միջազգային փորձն ուսումնասիրված է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է: Նախագծով սահմանվել են ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

17-րդ միջոցառումը ևս «**մասամբ իրականացված**» է, քանի որ միջազգային ուսումնասիրության բաղադրիչն է միայն կատարվել՝ ուսումնասիրվել է Լատվիայի, Նորվեգիայի, Ռուսաստանի և ԱՄՆ փորձը:

Արդյունավետ հանրային կառավարման համակարգի ձևավորում

Այս բաժնի ներքո առկա են 11 միջոցառումներ, որոնցից միայն 8-ն ունեն ակնկալվող արդյունքներ 2016թ.-ի կամ 2015-2016թթ.-երի համար: Այս 8 միջոցառումներից 2-ի դեպքում ակնկալվող արդյունքի ժամանակահատվածը եղել է լոկ 2016թ.-ը, իսկ մնացած 6-ի դեպքում՝ 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածը:

Ներքոնշյալ 8 միջոցառումներից 3-ը գնահատվել են որպես «**իրականացված**» (միջոցառումներ 22, 23, 25), իսկ 5-ը՝որպես «**մասամբ իրականացված**» (միջոցառումներ 18,19, 20, 21, 24):

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
18. Հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Մշակվել և հաստատվել է հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագիրը:

Այս միջոցառումն իրենից ներկայացնում է երեք բաղադրիչների համակցություն: ՀՀ արդարադատության նախարարությունը ԹԻՀԿ-ին է տրամադրել «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն հիմնադրամի» կողմից կազմված «Հանրային ծառայության ոլորտում վարչարարության պարզեցման համալիր ծրագրի» նախագիծը, որից ակնհայտ է դառնում, որ ուսումնասիրվել է Արևմտյան Եվրոպայի երկրների փորձը: Այս միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**», քանի որ ծրագիրը 2016թ. դրությամբ մնացել է միայն նախագծային փուլում և չի հաստատվել:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
19. Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագիրը մշակվել է:

Առաջին բաղադրիչի հետ կապված ՀՀ կառավարության աշխատակազմը միայն նշել է երկրների անուններ, որոնց փորձն ուսումնասիրվել է: Աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվել են համապատասխան փաստաթղթեր, որոնք վկայում են, որ ուսումնասիրվել է Մերձբալթյան երկրների և Վրաստանի փորձը: Երկրորդի հետ կապված նշվել է ՀՀ կառավարության N1093-ն (31.08.2015թ.) որոշումը, որը վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության (compatibility) և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելուն: Մինչդեռ, պետք է նշել, որ այս որոշումն իրենից չի ենթադրում էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագիր. դրանք բովանդակությամբ իրարից տարբեր են: ՀՀ կառավարության աշխատակազմի ներկայացրածը վերաբերում է անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական պահանջներին միայն: Վերոգրյալն ի նկատի ունենալով՝ այս միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
20. Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտության վերաբերյալ ուսումնասիրություններն իրականացված են

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը ենթադրում է, որ 2016թ. ավարտին պետք է առկա լինեին արդեն իսկ ավարտուն տեսք ունեցող ուսումնասիրություններ, որոնք կվերաբերեին պետության կողմից մատուցվող ծառայությունների ժամկետների ողջամտությանը: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության՝ այս տեղեկատվությունը հավաքագրվել և փոխանցվել է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնին» ուսումնասիրություն իրականացնելու համար, որը դեռևս ընթացքի մեջ է: Քանի որ դեռևս չկա ավարտուն տեսքի ուսումնասիրություն, ապա այս միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
21. Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդնում	Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդրման ծրագիրը մշակված է:

ԹԻՀԿ-ի հարցմանը ՀՀ կառավարության աշխատակազմը պատասխանել է, որ կառավարությունը նախաձեռնել է պետական հատվածի բարեփոխումների լայն գործընթաց, որի աջակցությանն է ուղղված Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիրը (ՊՀԱԾ 3): Ծրագրի երկրորդ բաղադրիչով նախատեսված են ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման տարբեր լուծումներ, որոնցից մեկն ուղղված է քաղաքացի-կառավարություն շփման ոլորտում հետադարձ կապի մեխանիզմների ներդրմանը՝ քաղաքացիների և բիզնեսի համար կառավարության ծառայությունների հասանելիությունը խթանելու, բողոքներին արձագանքելու և հաճախորդների գոհունակությունը մոնիտորինգի ենթարկելու համար:

Տվյալ առաջադրանքով նախատեսվում է մշակել էլեկտրոնային ծառայությունների միասնական կայք, որը կզուգակցվի ինտեգրված հավաքագրման և վերլուծության մոդուլով՝ մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի մասին տեղեկություններ հավաքելու համար, և ստեղծել տեղեկատվական թեժ գիծ, որը կդյուրացնի քաղաքացիների հարցերին և բողոքներին շուրջօրյա արագ պատասխանը շաբաթվա բոլոր օրերին (24/7) և օպերատորներին կտա առցանց լուծում ապահովելու հնարավորություն:

Բացի այդ, նաև նշվել է, որ արդեն իսկ 2016թ.-ին նման համակարգեր ներդրվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրում: Այս պատճառով միջոցառման ակնկալվող արդյունքը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»՝ առանց անդրադարձ կատարելու դրանց արդյունավետությանը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
22. Պետական մարմինների կողմից լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրման խթանում՝ դիտարկելով էլեկտրոնային եղանակով լիցենզիաների (առնվազն պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ) տրամադրման հնարավորությունը	Պետական մարմիններում իրականացվել են ուսումնասիրություններ: Պետական մարմիններում իրականացվել է տեխնիկական պայմանների ապահովումը: Օրենսդրության մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՀՀ կառավարության աշխատակազմը ԹԻՀԿ-ին ուղղված իր պատասխանում նշել է, որ 09.08.2016թ.-ին հանձնարարական է տրվել բոլոր հանրապետական գործադիր մարմիններին ուսումնասիրել ՀՀ կառավարության N1104-ն որոշման պահանջները և «e-

gov.am» կայքի, ինչպես նաև արդեն ծանուցումներով իրականացվող լիցենզիաների տրամադրման մեխանիզմների և նույն կայքում առկա կարգավորումների համապատասխանությունը:

ՀՀ կառավարության 27.10.2016թ.-ի N1109-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին նախագիծ է մշակվել, որով նախատեսվում է մի շարք լիցենզիաների էլեկտրոնային եղանակով հայցելու գործառույթները պատվիրակել պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Նշվում է նաև, որ նախագծի ընդունմամբ կկարգավորվեն իրավաբանական անձանց բացառապես էլեկտրոնային եղանակով լիցենզիաներ տրամադրելու խնդիրները:

Այս ամենը հաշվի առնելով՝ակնկալվող արդյունքը կարելի է գնահատել որպես«**մասամբ իրականացված**»՝ հաշվի առնելով միջոցառման ֆորմալ իրականացումը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
23. Պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման ոլորտում վարչարարության նվազեցման նպատակով պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծում և վարում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Պետական մարմինների կողմից լիցենզիաների տրամադրման ոլորտում վարչարարության նվազեցման նպատակով պետական միասնական գրանցամատյանը մշակվել է:

Միջազգային փորձի ուսումնասիրության հետ կապված պատասխանատու մարմինը նշել է, որ ուսումնասիրությունը կատարվել է, սակայն չի կիսվել որևէ փաստաթղթով, որը կվկայեր ուսումնասիրության անցկացված լինելու մասին: Այնուամենայնիվ, աշխատանքային հանդիպման ընթացքում տրամադրվել է համապատասխան փաստաթուղթը ծանոթացման համար, որը վկայում է կատարված ուսումնասիրության մասին: Մասնավորապես, ուսումնասիրվել է Ղազախստանի փորձը: Ինչ վերաբերում է երկրորդ մասին, ապա ՀՀ արդարադատության նախարարության ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանի համաձայն,Եվրոպական միության հետ տարված բանակցությունների արդյունքում մշակվել է համապատասխան ծրագրային ապահովում: Սակայն մասնավորեցված չեն դրա հատկանիշները և թե այն ինչ հնարավորություններ է ընձեռելու: Այնուամենայնիվ, ՀՀ արդարադատության նախարարության հետ աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվել են համապատասխան աշխատանքային փաստաթղթերը, որոնք վկայում են գրանցամատյանի մշակված լինելու մասին: Հետևաբար, այս միջոցառման ակնկալվող արդյունքը ևս գնահատվում է «**մասամբ իրականացված**»՝ հաշվի առնելով դրա ֆորմալ իրականացումը և բովանդակության մասին տեղեկատվության բացակայությունը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
24. Լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայում բոլոր ոլորտներում՝ լրացուցիչ պահանջների հնարավորինս պարզեցում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Պետական և մասնավոր հատվածների համագործակցությամբ ստեղծված է աշխատանքային խումբ: Իրականացվում են քննարկումներ բոլոր ոլորտներում լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայման վերաբերյալ:

Առաջին հանձնարարականի հետ կապված ՀՀ կառավարության աշխատակազմը ԹԻՀԿ-ին ուղղված իր պատասխանում նշել է, որ ուսումնասիրվել է Մերձբալթյան երկրների փորձը (Լատվիա, Լիտվա), ինչի մասին հանդիպման ընթացքում ներկայացվել են նյութեր: Բացի այդ 03.08.2016թ.-ին բոլոր հանրապետական գործադիր մարմիններին հանձնարարվել է կատարել լիցենզիաների տրամադրման չափանիշների ու պայմանների վերանայում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ՝ ստեղծելով աշխատանքային խմբեր: Համաձայն կառավարության աշխատակազմի 15.08.2016թ.-ին թվով 15 լիցենզիա տրամադրող պետական մարմին մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ ստեղծել են համապատասխան աշխատանքային խմբեր և սկսել քննարկումներ լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայման վերաբերյալ, ինչի արդյունքում ներկայացվել է 38 առաջարկություն: Ելնելով վերոգրյալից՝ այս միջոցառման ակնկալվող արդյունքը հանդիսանում է «**մասամբ իրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
25. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի էլեկտրոնային գրանցման համակարգի վերանայում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Իրականացվում են քննարկումներ:

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը ևս հանդիսանում է միջազգային փորձի ուսումնասիրությունը և քննարկումների անցկացումը: Առաջինի հետ կապված կրկին ՀՀ արդարադատության նախարարության կողմից անց է կացվել համապատասխան ուսումնասիրություն, որը ներկայացվել է ԹԻՀԿ-ին: Ուսումնասիրված երկրների շարքում են Լիտվան, Էստոնիան, Դանիան, Նիդեռլանդները, Չինաստանը: Երկրորդ մասի հետ կապված նշվում է, որ բանակցություններ են տարվում Եվրոպական միության հետ: Այդ իսկ պատճառով այս միջոցառումը ևս գնահատվում է որպես «**իրականացված**»:

Թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգի ձևավորում

Այս բաժնի ներքո առկա են 10 միջոցառումներ, որոնցից միայն 9-ն ունեն ակնկալվող արդյունքներ 2016թ. կամ 2015-2016թթ. համար: Այս 9 միջոցառումներից 1-ի դեպքում ակնկալվող արդյունքի ժամանակահատվածը եղել է լոկ 2016 թվականը, իսկ մնացած 8-ի դեպքում 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածը:

Ներքոնշյալ 9 միջոցառումներից 5-ը գնահատվել են որպես «**չիրականացված**», 1-ը որպես «**մասամբ իրականացված**»,ևս 2-ը՝ «**իրականացված**»: Եվս մեկ միջոցառման դեպքում սույն զեկույցի պատրաստման ժամանակ տեղ գտան զարգացումներ, որոնց արդյունքում դրա նպատակը կորցրեց իր իմաստը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
29. Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետների վերանայում	Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետները վերանայված են: Ներկայացված է առաջարկություն պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման

	ժամկետների վերաբերյալ օրենսդրական փոփոխություններ կատարելու մասին:

Պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ժամկետները պետք է սահմանվեն ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, որը չի ընդունվել: Այս միջոցառման գնահատականը հանդիսանում է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
30. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերլուծություն, անհրաժեշտության դեպքում դրանում լրացումների և փոփոխությունների կատարում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին	Միջազգային փորձն ուսումնասիրվել է: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը վերլուծվել է: Անհրաժեշտության դեպքում ներկայացվել է առաջարկություն դրանում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ օրենքը համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին

Միջազգային փորձի ուսումնասիրության հետ կապված՝ աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվել են նյութեր, որոնք վկայում են, որ ուսումնասիրվել է Էստոնիայի, Գերմանիայի, Լատվիայի, Չեխիայի, Իսրայելի, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Կանադայի, ԱՄՆ, Չիլիի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Նիդերլանդների, Մեքսիկայի, Ֆրանսիայի և Իռլանդիայի փորձը: Այդ իսկ պատճառով գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»՝ հիմք ընդունելով միջազգային փորձի ուսումնասիրած լինելը, որի ապացույցը ներկայացվել էԹԻՀԿ:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
31. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում[64]	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը մշակված են: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերը հաստատված են:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
33. Հանրային ծառայողների վերապատրաստում՝ կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/ բարեվարքության (ինթեգրիթի) ձևավորման և տեղեկատվության	Ուսուցումներն ավարտվել են: 200 հանրային ծառայող վերապատրաստվել է:

[64]Հաշվի առնելով, որ ներկայումս գործընթացներ են գնում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» նոր օրենքի մշակման ուղղությամբ, այս միջոցառումը պետք է դիտարկել նոր օրենքի համատեքստում: Հետևաբար, այս միջոցառման ակնկալվող արդյունքի գնահատումը «Տեղեկատվության ազատության մասին» ներկա օրենքի համատեքստում դառնում է իմաստազուրկ, եթե նոր օրենքն ընդունվի մինչև հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի ավարտը, այսինքն՝ մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

ազատության օրենսդրության կիրառման հմտություններ թեմաներով	

Այս միջոցառման ակնկալվող արդյունքի համար որպես պատասխանատու մարմին հանդես է գալիս Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, որը ԹԻՀԿ-ին ուղղված իր պատասխանում նշել է, որ թվով 495 հանրային ծառայող անցել է վերապատրաստում կոռուպցիայի դեմ պայքարի, օրինավորության/բարեվարքության (ինթեգրիթի) ձևավորման և տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման հմտությունների թեմաներով: Այս միջոցառումը գնահատվում է որպես «**իրականացված**»՝ հիմք ընդունելով տրամադրված պաշտոնական պատասխանը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
34. Պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցների մշակում և հաստատում	Մշակված են ուղեցույցներ, որոնք թույլ են տալիս գնահատելու պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը: Պետական ծառայողների ընտրության գործընթացում էթիկայի կանոնների պահպանումը գնահատելու ուղեցույցները հաստատված են

Ակնկալվող արդյունքում նշված ուղեցույցները չեն մշակվել 2015-2016թթ. ընթացքում, հետևաբար այս միջոցառման ակնկալվող արդյունքը գնահատվում է «**չիրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
35. Պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման լրացուցիչ չափանիշների ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Ներկայացված են առաջարկություններ պետական ծառայողների ընտրության և առաջխաղացման լրացուցիչ չափանիշների ներդրման վերաբերյալ:

Այս միջոցառման հետ կապված ՀՀ արդարադատության նախարարությունն իր պատասխանում նշել է, որ կարծում է, որ այս միջոցառումը ՀՀ Նախագահի 20.12.2016թ.-ի ՆՆԿ-263-Ա հրամանագրով կազմավորված աշխատանքային խմբի իրավասության առարկա է: Քանի որ 2015-2016թթ. ընթացքում նման առաջարկություններ չեն ներկայացվել, ապա այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է որպես «**չիրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
36. Մրցութային կարգով թափուր պաշտոնների համալրման մեխանիզմների ներդնում այն պետական մարմիններում, որոնց թափուր պաշտոններն առանց մրցութային կարգի են համալրվում, և թափուր պաշտոնների լրացման գործընթացը համակարգող և մոնիտորինգ իրականացնող իրավասու մարմնի նշանակում	Ներկայացվել է առաջարկություն պետական մարմիններում մրցութային կարգով թափուր պաշտոնների համալրման մեխանիզմների ներդրման վերաբերյալ

Այս միջոցառման առնչությամբ ևս ՀՀ արդարադատության նախարարությունը գտել է, որ սրա կատարողականը գտնվում է ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված աշխատանքային խմբի իրավասության ներքո: Սակայն 2016թ. ընթացքում ակնկալվող արդյունքի առնչությամբ ոչ մի առաջարկություն հրապարակային չի ներկայացվել: Այդ իսկ պատճառով այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է որպես «**չիրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
37. Քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացված են առաջարկություններ քաղաքական որոշումներ կայացնողների գործունեության հրապարակայնության նվազագույն չափանիշների սահմանման վերաբերյալ:

Սույն միջոցառման ակնկալվող արդյունքի երկու բաղադրիչներից և ոչ մեկի դեպքում ոչինչ արված չէ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այդ իսկ պատճառով գնահատականն է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
38. Որոշակի չափանիշներին համապատասխանող պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի մշակում և իրականացում	Որոշակի չափանիշներին համապատասխանող պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություն-ների պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագիրն իրագործվում է

Սույն միջոցառմամբ ակնկալվող արդյունքը պետք է հանդիսանար պարտադիր անկախ աուդիտ անցնելու ծրագրի իրագործումը այն կազմակերպություններում, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից: Համաձայն պատասխանատու մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարության) ԹԻՀԿ-ին ուղղված պատասխանի՝ այս ծրագիրը կմշակվի հաշվապահական հաշվառման ու աուդիտորական գործունեության քաղաքականության հայեցակարգի վերանայման շրջանակում, որն այժմ մշակման փուլում է: Հետևաբար՝ այս միջոցառման ակնկալվող արդյունքը 2016թ.-ի համար գնահատվում է որպես «**չիրականացված**»:

Մասնակցային կառավարման համակարգի ձևավորում

Այս բաժնի ներքո առկա են 7 միջոցառումներ, որոնցից միայն 5-ն ունեն ակնկալվող արդյունքներ 2016թ. կամ 2015-2016թթ. համար: Այս միջոցառումներից 1-ի դեպքում ակնկալվող արդյունքի ժամանակահատվածը եղել է լոկ 2016 թվականը, իսկ մնացած 4-ի դեպքում՝ 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածը:

Ներքոնշյալ 5 միջոցառումներից 1-ը գնահատվել է որպես «**չիրականացված**» (միջոցառում 40), 2-ը՝«**մասամբ իրականացված**» (միջոցառումներ 42 և 45), ևս 2-ը՝ «**իրականացված**» (միջոցառումներ 39 և 44):

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016

39. Հանրային լսումների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի օրենսդրորեն կարգավորում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացված է առաջարկություն հանրային լսումների, քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի և ձևաչափերի վերաբերյալ:

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է մեծամասամբ իրականացված: Առաջին մասի առումով ՀՀ արդարադատության նախարարության հետ աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվել են համապատասխան աշխատանքային փաստաթղթեր, որոնք վկայում են միջազգային փորձն ուսումնասիրած լինելու մասին: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է Ռուսաստանի և Բելառուսի փորձը: Ակնկալվող արդյունքի երկրորդ մասը ամբողջությամբ իրականացվել է, քանի որ ՀՀ կառավարության 02.09.2016թ.-ին 296-Ն որոշման մեջ կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնցով որպես պարտադիր պահանջ նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի նախագիծը մշակող մարմինների կողմից դրանց տեղադրում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Այս իսկ պատճառով այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է «**իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
40. Էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքների ներդնում	Անցկացվում են տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ

Ակնհայտ է, որ այս միջոցառման ակնկալվող արդյունքն է հանդիսանում էլեկտրոնային ժողովրդավարության առանձին գործիքների ներդրման կապակցությամբ տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումների անցկացումը: Այս առումով ՀՀ կառավարության աշխատակազմի պատասխան նամակում ոչինչ ասված չէ նման քննարկումների անցկացման կապակցությամբ: Հետևաբար՝ այս միջոցառման ակնկալվող արդյունքի վերաբերյալ գնահատականն է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
42. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելու վերաբերյալ առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի ներկայացում	Պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են: Պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելու վերաբերյալ իրավական ակտերը մշակված և ներկայացված են:

ՀՀ կառավարության աշխատակազմը ԹԻՀԿ-ին ուղղված իր պատասխան նամակում նշել է, որ13.12.2016թ.-ին կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող անկախ փորձագիտական հանձնախումբը ներկայացրել է միօրինակ միասնական մոնիտորինգային կանոնների (մեխանիզմ) ընդհանուր տվյալների հավաքագրման և զեկուցման՝ գնահատման ուղեցույցի նախնական տարբերակ:Սակայն հարկ է նշել, որ այդ փաստաթուղթը 2016թ.չի ներկայացվել և առկա չեն տվյալներ այն մասին, թե որքանով է տվյալ գործիքը մշակվել

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Այդ իսկ պատճառով գնահատականը հանդիսանում է «**չիրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
44. Պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծում	1. Անցկացվում են տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ 2. Հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստեղծվել են իրավական հիմքեր 3. Իրականացվում է գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցում

Այս միջոցառումը գտնվում է անմիջական կապի մեջ վերոնշյալ 39-րդ միջոցառման հետ, և «e-draft» համակարգի գործարկումը հիմք է տալիս համարելու այս միջոցառման ակնկալվող արդյունքը գործնականում և, ըստ էության, կատարված: Գերատեսչությունների մասնագետների ուսուցման կապակցությամբ, ըստ ՀՀ արդարադատության նախարարության, 2016թ. դեկտեմբերին անց են կացվել ուսուցումներ: Հետևաբար՝ այս միջոցառման ակնկալվող արդյունքը գնահատվում է որպես «**իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2016
45. Հայաստանի 20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի ստեղծում, թարմացում, համայնքային իշխանության կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակում, ավագանու նիստերի, հանրային քննարկումների և լսումների վերաբերյալ ծանուցում և ավագանու նիստերի առցանց հեռարձակում	20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային տեղեկատվական կայքերը ստեղծված են՝հանրային մեկնաբանությունների հնարավորությամբ: Համայնքների համապատասխան աշխատողների համար կազմակերպվել են դասընթացներ:

Այս միջոցառման առաջին մասի առնչությամբ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության համաձայն՝ 20,000 բնակչությամբ քաղաքները թվով 17-ն են և բոլորն էլ ունեն կայքեր: Սակայն պատասխան նամակում ոչինչ նշված չէ վերապատրաստումների, հետադարձ կապի, ավագանու նիստերի հեռարձակման և այլնի մասին:

Միևնույն ժամանակ, Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից 2016թ. անցկացված՝ Հայաստանի 17 ամենախոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկության մոնիտորինգը վեր հանեց այն իրողությունը, որ այդ համայնքներում, չնայած ֆորմալ առումով առկա են և՛ նրանց համացանցային կայքերը, և՛ ավագանու նիստերի առցանց հեռարձակման համար անհրաժեշտ սարքավորումները,ոչ բոլոր կայքերում է տեղադրված միջոցառմամբ նախատեսված տեղեկատվությունը: Բացի այդ, միայն Երևան, Գյումրի, Կապան, Հրազդան, Էջմիածին, Գավառ և Արարատ համայնքներում է իրականացվել ավագանու նիստերի և հանրային լսումների համացանցային հեռարձակում, ընդ որում, Արարատ համայնքում եղել է ընդամենը

մեկ հեռարձակում[65]: Ելնելով դրանից՝այս միջոցառման գնահատականն է «**մասամբ իրականացված**»-ը:

Կոռուպցիոն վարքագծի համարպատասխանատվության համարժեք միջոցների սահմանում

Այս բաժնի ներքո առկա են 5 միջոցառումներ, որոնք բոլորն էլ ունեն ակնկալվող արդյունքներ 2016թ. կամ 2015-2016թթ. համար: Այս միջոցառումներից բոլորի դեպքում ակնկալվող արդյունքի ժամանակահատվածը եղել է 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածը:

Ներքոնշյալ 5 միջոցառումներից 4-ը գնահատվել են որպես «**իրականացված**», իսկ 1-ը՝ «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
46. Կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործող տեսակների վերաբերյալ վերլուծության իրականացում՝ համադրելով միջազգային փորձի հետ	Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Իրականացվել է վերլուծություն կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործող տեսակների վերաբերյալ: Վերլուծությունն իրականացվել է՝ համադրելով միջազգային փորձի ուսումնասիրությունների հետ:

Այս միջոցառման առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է, որ ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ ուսումնասիրվել է միջազգային փորձը և կցել է համապատասխան փաստաթուղթը, որը վկայում է միջազգային փորձի ուսումնասիրության մասին: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Լեհաստանի, Մոլդովայի, ԱՄՆ-ի և Հոնկոնգի փորձը:

Բացի այդ, նշվել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբի հետ միասին կմշակվի վերլուծության նախագիծ: Քանի որ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վերլուծության նախագիծը առկա չէր, ապա սույն միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
47. Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծության իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Անցկացվում են քննարկումներ:

[65] Տե՛ս Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի «Հայաստանի 17 ամենախոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկության մոնիտորինգ» 2016թ. զեկույց, էջ 56-66, http://www.asparez.am/wp-content/uploads/2017/05/10.5.2017-LSG-JCA-OSF-Armenia-general-17-cities-transparency-monitoring.pdf

Այս միջոցառումն ամբողջությամբ կատարվել է: Ապօրինի հարստացումը քրեականացվել է 16.12.2016թ. և այժմ ներառված է ՀՀ քրեական օրենսգրքում: Գնահատականն է «**իրականացված**»-ը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
48. Կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգերը գործարկելուն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Անցկացվում են քննարկումներ:

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ կատարում է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգերի վերաբերյալ վերլուծություն: ՀՀ արդարադատության նախարարության հետ հանդիպման ընթացքում տեղեկացվեց նաև, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը անց է կացվել Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից ֆինանսավորված ծրագրի շրջանակում ԵԱՀԿ փորձագետների կողմից: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարել Եվրոպայի խորհրդի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հավաքված նյութերին: Այս միջոցառումը գնահատվում է որպես «**իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
49. Կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը հստակ տարանջատելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացվել է առաջարկություն կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը հստակ տարանջատելու հնարավորության և նպատակահարմարության վերաբերյալ: Առաջարկությունը ներկայացնելիս հաշվի են առնվել ինչպես այդ հանցանքների բնույթը, այնպես էլ դրանց կատարման մեջ մեղադրվող անձանց առանձնահատկությունները:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության՝ ԵԱՀԿ փորձագետների կողմից իրականացվել է ուսումնասիրություն և տրվել նախարարությանը: Մասնավորապես՝ դիտարկվել է Բուլղարիայի, Խորվաթիայի, Ռումինիայի և Սլովակիայի փորձը: Հետևաբար՝սույն միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
50. Կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկայի մշակում	Միջազգային փորձն ուսումնասիրված է: Ներկայացվել է առաջարկություն կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման գիտականորեն հիմնավորված և

	միասնական մեթոդիկա մշակելու վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել է մշակված մեթոդիկայի նախագիծ, թեև ակնկալվում էր միայն առաջարկություն ներկայացնելը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ դրա գիտական և հիմնավորված լինելու մասին դատողություն անել հնարավոր չէ: Այս պատճառով սույն միջոցառումը գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**»:

Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար գործուն միջոցների ձեռնարկում

Այս բաժնի ներքո առկա են 4 միջոցառումներ, որոնցից միայն 3-ն ունեն ակնկալվող արդյունքներ 2015-2016թթ. համար: Ներքոնշյալ 3 միջոցառումներից երկուսը գնահատվել են որպես «**մասամբ իրականացված**»(միջոցառումներ 52 և 53), իսկ մեկը՝«**իրականացված**» (միջոցառում 51):

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
51. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց իրավական պաշտպանության երաշխիքների օրենքով սահմանում	Ուսումնասիրվել է միջազգային փորձը: Մշակված է օրենսդրական փաթեթ:

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը ևս գնահատվում է որպես «**մասամբ իրականացված**», քանի որ մշակված օրենսդրական փաթեթը 2016թ. դեռևս ավարտին չէր հասցվել: Միջազգային փորձի առնչությամբ՝ ուսումնասիրվել է Արևելյան Եվրոպայի (Ռումինիա, Սերբիա, Բոսնիա-Հերցեգովինա, Էստոնիա, Հունգարիա, Սլովակիայի, Ուկրաինա), Վրաստանի, Հարավային Կորեայի, Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի փորձը, ինչպես նաև ՏՀԶԿ-ի և Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից հրապարակված հետազոտական նյութերը:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
52. Կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար գործուն միջոցների ձեռնարկում	Հանրությունը պարբերաբար տեղեկացվում է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ: Հրապարակվում է ամփոփ տեղեկատվություն ձևավորված կարգապահական, վարչական և դատական պրակտիկայի վերաբերյալ: Հանրությանը պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում պետական ծառայողների պաշտոնանկության կամ տույժերի վերաբերյալ, հիմնավորումները հանրայնացվում են՝ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության և այլ երաշխիքների տրամադրման նկատառումները:

Հանրությունը շարունակում է ակնկալվող արդյունքում նշված տեղեկատվությունը ստանալ, սակայն, ելնելով ԿՀԲ 2016թ. տվյալներից, մասնավորապես, թե որքանով են քաղաքացիների կողմից կոռումպացված ընկալվում ոստիկանությունը և դատական համակարգը[66], ճիշտ չի լինի ասել, որ այդ արդյունքը նպաստել է նշված մարմինների նկատմամբ վստահության աճին, և հետևաբար, այս միջոցառման ակնկալվող արդյունքը ճիշտ կլինի գնահատել որպես«**մասամբ իրականացված**»:

Միջոցառում	Ակնկալվող արդյունք 2015-2016
53. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թթ միջոցառումների ծրագրի մոնիտորինգի ցուցանիշների համակարգի մշակում ու ներդնում	ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի մոնիտորինգի ցուցանիշների համակարգը մշակվել և ներդրվել է:

Այս միջոցառման ակնկալվող արդյունքը դիտարկվում է որպես «**չիրականացված**», քանի որ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մոնիտորինգի վերաբերյալ որևէ հրապարակային փաստաթուղթ առկա չի եղել[67]:

Ինչպես արդեն նշվել է, ռազմավարության իրականացման 2015-2018թթ. միջոցառումների ծրագրի մի շարք միջոցառումների համար սահմանված են եղել ակնկալվող միջանկյալ արդյունքներ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այդ միջոցառումները թվով 14-ն են, որոնցից 4-ի դեպքում (26, 27, 38 և 43-րդ միջոցառումները), համաձայն ԹԻՀԿ *Կոռուպցիայի իրավիճակի 2015թ. զեկույցի*, այդ արդյունքներն ամբողջովին իրականացված են եղել նշված ժամկետում: Մնացած 10 միջոցառումների 2015թ. ակնկալվող արդյունքներն, ըստ այդ զեկույցի, իրականացվել էին մասամբ կամ ընդհանրապես չէին իրականացվել, այդ թվում՝ ոլորտային 5 միջոցառումներից 4-ը (թիվ 1, 2 3 և 4-րդ միջոցառումներ)[68]:2015թ. այդ միջոցառումների համար նախատեսված ակնկալվող միջանկյալ արդյունքն էր այդ ոլորտներում (համապատասխանաբար պետական եկամուտների հավաքագրում, ոստիկանություն՝ քաղաքացիներին ծառայությունների մատուցման մասով, կրթություն և առողջապահություն) կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրված լինելը: Ծրագրով սահմանված պատասխանատու, ինչպես նաև այլ (ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարություն) պետական մարմինների պաշտոնական կայքերում որոնումը ցույց տվեց, որ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացակայում է այդ ուսումնասիրությունների մասին որևէ տեղեկատվություն: Նույն իրավիճակն է նաև 6, 8, 9 և 36-րդ միջոցառումների՝2015թ. համար ակնկալվող միջանկյալ արդյունքների պարագայում: Դրանցից առաջին երեքի դեպքում որպես 2015թ. համար ակնկալվող միջանկյալ արդյունք սահմանված է«Միջազգային փորձն ուսումնասիրված է» արդյունքը, իսկ թիվ 36 միջոցառման համար սահմանված է «Իրականացվել են ուսումնասիրություններ» արդյունքը: Այսպիսով, ելնելով

[66] Տե՛ս www.transparency.am/hy/gcb Համաձայն ԿՀԲ 2016թ. տվյալների՝ հարցման մասնակիցների 41%-ը գտնում է, որ բոլոր դատավորները կամ նրանց մեծ մասը ներքաշված է կոռուպցիայի մեջ: Ոստիկանների դեպքում այդպես է կարծում հարցվածների 40%-ը: Այս թվերը շատ քիչ են զիջում ամենավատ ցուցանիշներ արձանագրած պետական պաշտոնյաներին (45%), հանրապետության նախագահին/վարչապետին և նրանց աշխատակազմի անդամներին (44%) և հարկային մարմինների պաշտոնյաներին (43%):

[67] Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության միջոցառումների կատարողականի վերաբերյալ 2016թ. տարեկան հաշվետվությունը (հրապարակվել է 2017թ. հունիսի 15-ին) ևս հավաստում է, որ տվյալ միջոցառումը չի իրականացվել. http://gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/hashvetvutyun-15_06_17.pdf)

[68] Նշված ոլորտային միջոցառումներից մեկը, այն է՝ թիվ 5 միջոցառումը (Հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի ընդլայնման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում) չի դիտարկվել նախորդ զեկույցում, քանի որ դրա իրականացման սկիզբը, համաձայն միջոցառումների ծրագրի, նախատեսված էր 2016-ին: Այս զեկույցում այն նույնպես չի քննարկվել, քանի որ դրա իրականացման նախապայմանը 4 ոլորտային ծրագրերի ընդունումն է, որը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի իրականացվել (տե՛ս դրա մասին տեքստում):

վերը ասվածից, հնարավոր չէ գնահատել վերոնշյալ 8 միջոցառումների դեպքում 2015թ. համար ակնկալվող միջանկյալ արդյունքների կատարումը: Ինչ վերաբերում է 33-րդ և 45-րդ միջոցառումների համար սահմանված՝2015թ. համար ակնկալվող միջանկյալ արդյունքներին (համապատասխանաբար «Անցկացվել է 10 ուսուցում» և «Իրականացվել է տեխնիկական սարքավորումների և կայքերի պատրաստման ծառայությունների գնման գործընթաց»), ապա, ինչպես երևում է այդ միջոցառումների՝ 2016թ. համար սահմանված ակնկալվող միջանկյալ արդյունքների վերը բերված քննարկումից, դրանք լիովին իրականացվել են:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազի՝ 2008թ.նոյեմբերի 19-ի N82 հրամանով և լրամշակվել 2013թ. մարտի 19-ի N12 հրամանով: Ըստ այս հրամանի՝ կոռուպցիոն հանցագործություններ են համարվում ՀՀ քրեական օրենսգրքի թվով 31 հոդվածներով նախատեսված արարքները: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև՝ հիմք ընդունելով ՀՀ դատախազության պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունը[69] և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումը[70]:

2016թ. ընթացքում կոռուպցիոն գործերի քանակն աճել է՝ կազմելով 731 գործ: Դրա տեսակարար կշիռը ընդհանուր հանցագործությունների մեջ հասել է վերջին տարիների առավելագույնին՝4.05%: 2015թ. այն կազմել է 3.44%: Ավելի բարձր արդյունք գրանցվել է միայն 2008թ.՝ 4.3%:

Հետաքրքիր մի իրավիճակ է ստեղծվում, երբ համեմատում ենք հարուցված կոռուպցիոն գործերի քանակը և կարճված գործերի թիվը: Մասնավորապես՝ 2016թ. ընթացքում ավարտված 707 քրեական գործերից դատարան է ուղարկվել միայն 114-ը: 2016թ.առավել մեծ թվով քրեական գործեր (216) հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով (հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը)[71]: Նշված հոդվածին հաջորդում են 309-րդ (պաշտոնեական լիազորություններն անցնելը) և 308-րդ հոդվածները(պաշտոնեական լիազորությունների չարաշահելը)՝ համապատասխանաբար 100 և 98 գործ: Այս թվերը 2015թ. համեմատությամբ փոքր-ինչ ավելի քիչ են:

<u>Քրեական գործի հարուցման մերժման դեպքերը</u> գրեթե կիսով չափ ընկել են 2015թ. համեմատությամբ, ինչը դրական միտում է: Այսպես, 2015թ. 714 դեպքով մերժվել է քրեական գործի հարուցումը, իսկ 2016-ին՝ 393-ով:

<u>Քրեական գործերի կարճման դեպքերի առումով</u> 2015թ. 462-ի համեմատությամբ 2016թ. գրանցվել է նման 593 գործ, ինչը 2008թ.-ից սկսած ամենից բարձր արդյունքն է: Նշված 593 գործերից 517-ը կարճվել է արդարացման հիմքով, իսկ մնացած 93-ը՝ այլ, ոչ արդարացման, հիմքերով:

---

[69] http://www.prosecutor.am/myfiles/files/Korupcia%20dataran.pdf
http://www.prosecutor.am/myfiles/files/Korupcia%20naxaqnnutyun.pdf
[70] http://www.armstat.am/file/article/sv_12_16a_540.pdf
[71] Հարկ է նշել, որ, ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. հունվարի 19-ի N3 հրամանով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների նոր ցուցակով այս հանցագործությունն այլևս չի համարվում կոռուպցիոն հանցագործություն: Այս փոփոխությունը համահունչ է քաղաքակիրթ երկրների պրակտիկային, որտեղ այն նույնպես կոռուպցիոն հանցագործություն չէ:

Վիճակագրական այլ տվյալներից առավել ուշագրավ է հետևյալը.

- մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 114 գործ՝2015թ. 119-ի փոխարեն
- դատարան ուղարկված գործերով մարդկանց թիվը կազմել է 234, որն էապես չի փոխվել վերջին հինգ տարվա միջին ցուցանիշից
- դատարանում քննված գործերի քանակը կազմել է 77, ինչն ամենացածր ցուցանիշն է 2008թ.-ից սկսած
- մեղադրական դատավճռով ավարտված գործերի քանակը կազմել է 60, ինչը կրկին ամենացածր ցուցանիշն է 2008թ.-ից սկսած
- դատապարտյալների թիվը կազմել է 143, սակայն նրանցից միայն 41-ն են պաշտոնատար անձինք:

Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրությունը առավել մանրամասն ներկայացված է Հավելվածում:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Շահերի բախում

2016թ. դեկտեմբերի 14-ին «Հետք»-ը հանդես եկավ հրապարակմամբ, ըստ որի՝ նախորդ գումարման ՀՀԿ պատգամավոր Վարդան Այվազյանը, ով հանդիսանում էր Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, Վրաստանում ընկերություններ է հիմնել, ներդրումներ է կատարել, անշարժ գույք գնել, սակայն չի հայտարարագրել այդ ամենը[72]: Անհրաժեշտ է նշել, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը վարույթ չհարուցեց այս հրապարակման հիմքով: Պատճառաբանությունը հետևյալն էր՝ «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքն, ըստ էության, քրեական ընթացակարգի մասին է, որի շրջանակներում իրականացվող քննությունը կարող է վերաբերել հարցերի անհամեմատ ավելի մեծ ծավալի՝ լայն և էապես տարբերվող գործիքակազմով, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն առայժմ ձեռնպահ է մնում ուսումնասիրություն կատարելուց և հրապարակված փաստերին որևէ գնահատական տալուց»[73]: Հարկ է նշել, որ մինչև 2016թ. ավարտը Վ.Այվազյանի դեմ քրեական գործ՝ կապված այս հրապարակման հետ, չի հարուցվել:

2016թ. ապրիլի սկզբին Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումի (ICIJ) համատեղ նախագծի շրջանակներում մեկ տարի տևած հետաքննության արդյունքում, որին մասնացել էին 376 լրագրող և 109 լրատվական կազմակերպություն 76 երկրներից, գաղտնազերծվել էր օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների միջնորդ/գրանցող պանամական «Mossack Fonseca & Co.» ընկերության փաստաթղթաշրջանառությունը: Այդ գաղտնազերծման արդյունքում հանրությանը հասանելի դարձան Պանամայում, Բրիտանական Վիրջինյան կղզիներում, Սեյշելյան կղզիներում, Հանկ Կոնգում և մի քանի այլ վայրերում գրանցված միլիոնավոր օֆշորային ընկերությունների փաստաթղթերը (պանամական փաստաթղթեր): Փաստաթղթերում, որոնք առնչվում էին 200-ից ավելի երկրների և տարածքների, արծարծվում էին 12 երկրների ղեկավարների, «Ֆորբս»

[72] http://hetq.am/arm/news/73783/vardan-ayvazyani-tbilisyan-nerdrumnery-ansharzh-guyqn-u-ynkerutyunnery.html
[73] http://www.ethics.am/hy/news/item/2016/04/29/news51/

ամսագրում ընդգրկված 29 միլիարդատերերի, հայտնի սպորտսմենների, դերասանների և այլոց անուններ:

ICIJ-ի նշված նախագծին մասնակցել էր նաև հայաստանյան հետաքննող լրագրողների «Հետք» ընկերակցությունը, որն ապրիլի սկզբին հրապարակեց պանամական փաստաթղթերում եղած հայաստանյան իրավաբանական և ֆիզիկական անձանց անունները: Այդ անուններից առավել սկանդալայինը,թերևս,ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին պետ Միհրան Պողոսյանի անունն էր, ով դարձավ «պանամական փաստաթղթերի» սկանդալի «հերոս» ամենաբարձրաստիճան պաշտոնյան[74]: Հենց այդ բացահայտումը հանգեցրեց պարոն Պողոսյանի հրաժարականին դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պետի պաշտոնից: Բացի այդ, Հատուկ քննչական ծառայության (ՀՔԾ) կողմից նրա դեմ հարուցվեց քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով (Ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը)[75]: Հետաքրքրական էր Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մոտեցումն այս հարցում: Հետք լրագրողի հետ զրույցում Հանձնաժողովի նախագահ տիկին Սահակյանը նշեց, որ հանձնաժողովը, հաշվի առնելով նախկինում ընդունած իր դիրքորոշումը, իր նախաձեռնությամբ վարույթ չի հարուցում և նման դեպքերում վարույթ հարուցում է միայն դիմումի առկայության դեպքում[76]: Միևնույն ժամանակ, ի պատասխան ԹԻՀԿ-ի՝ այս հարցով վարույթ հարուցելու դիմումին, որը Հանձնաժողովին ուղարկվեց 2016թ. ապրիլի 7-ին «ԹԻ 16/56» նամակով, Հանձնաժողովը 2016թ. հունիսի 7-ի «Ե-442» պատասխան նամակով նշեց, որ «հանձնաժողովը 29.04.2016 թվականին հրապարակայնորեն հայտնել է, որ առայժմ ձեռնպահ է մնում բարձրացված հարցով ուսումնասիրություն կատարելուց և հրապարակված փաստերին որևէ գնահատական տալուց՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պանամայի օֆշորային գործարքների հետ կապված նյութերն ուսումնասիրվում են քրեական ընթացակարգի շրջանակներում, որի պարագայում քննությունը կարող է վերաբերել հարցերի անհամեմատ ավելի մեծ ծավալի՝ լայն և էապես տարբերվող գործիքակազմով»:

Հանրային միջոցների անբարեխիղճ օգտագործում կամ չարաշահում

Հրազդանի քաղաքապետ Արամ Դանիելյանը, ով, ըստ «Հայկական ժամանակ»-ի, բյուջեի հաշվին որոշել էր «լավություն» անել հրազդանցիներին՝ «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով, 2016 թվականիառաջինկիսամյակիհամարնախատեսվածպետականհատկացումներիկեսիցավելի ն 2 ամսում բաժանել է այսպես կոչված «անապահով» բնակիչներին[77]: Շուրջ 150 քաղաքացիներ այդ ծրագրով Արամ Դանիելյանից ստացել են 30-ից մինչև 250 հազար դրամ աջակցություն: Օգնություն ստացած քաղաքացիների ցանկի՝ օրաթերթի անցկացրած նախնական ուսումնասիրությունից պարզվել է, որ քաղաքապետի և Հրազդանի ավագանու որոշմամբ գումար են ստացել մարդիկ, որոնք չպետք է ստանային: Այսինքն՝ այդ ցանկում ընդգրկված քաղաքացիների մեծ մասը չեն համապատասխանում կառավարության

[74] http://hetq.am/arm/news/66918/panaman-nvatchats-hay-generaly%E2%80%A4-mihran-poxosyani-ofshorayin-ynkerutyunnery-ev-hashivnery-shveycarakan-bankerum.html
[75] 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ գործի նախաքննությունը դեռևս չէր ավարտվել: Այդ գործի հետ կապված զարգացումներ եղան 2017թ., ինչին ԹԻՀԿ-ը կանդրադառնա«Կոռուպցիոն իրավիճակի մասին» 2017թ. զեկույցում:
[76] http://hetq.am/arm/news/67106/dahk-tsarayutyan-peti-dem-varuyt-chi-harucvel-spasum-en-dimumi.html
[77] http://armtimes.com/hy/read/82446

սահմանած «անապահովության» չափորոշիչներին: Ավելին, այդ ցանկում կան նույնիսկ գործարարների անուններ:

Ըստ «Սիվիլնեթ»-ի՝ Վանաձորի ճանապարհները նորոգելու մրցույթում հաճախ հաղթում է Վանաձորի քաղաքապետ Ս.Դարբինյանի հետ կապ ունեցող «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն, որի հետ Վանաձորի քաղաքապետարանը կնքել է 70 մլն դրամի պայմանագիր փողոցների վերանորոգման համար, իսկ դրանից առաջ կնքել էր մոտ 10 մլն դրամի պայմանագիր[78]: Համայնքի կողմից պատվերներ են տրվել նաև «Արգիշտի 1» ՍՊԸ-ին, որը պատկանում է Դարբինյան ընտանիքին: Այդ ՍՊԸ-ի հետ նույն հասցեում գրանցված է նաև վերը նշված «Լոռիի ճանապարհների շահագործման և շինարարական» ՓԲԸ-ն, և «Սիվիլնեթ»-ի լրագրողի տրված հարցին ի պատասխան քաղաքապետ Ս. Դարբինյանը չի էլ հերքել, որ ինքն ունի բաժնեմաս այդ ՓԲԸ-ում:

Քաղաքապետերից զատ,աչքի է ընկել նաև Կոտայքի մարզպետարանը: Այսպես, ըստ նույն «Սիվիլնեթ»-ի, Կոտայքի մարզպետարանը 2007թ. արտադրության երկու և 2009թ. արտադրության մեկ ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման ծառայության ձեռքբերման համար «Մ-ԲԻ-Ր» ՍՊԸ-ի հետ կնքել է 19,429,900 դրամի կամ 40,905 ԱՄՆ դոլարի պայմանագիր: Ստացվում է, որ 5,000 և 12,000 դոլար շուկայական գներ ունեցող երեք մեքենաներից յուրաքանչյուրի սպասարկման վրա ծախսվելու է 14,000-ական դոլար,այսինքն՝ ավելին, քան դրանց շուկայական արժեքն է[79]:

«Սիվիլնեթ» լրատվամիջոցը 05.09.2016թ.-ին հանդես եկավ հրապարակմամբ, ըստ որի ռուսաստանաբնակ հայ մեծահարուստ գործարար Սամվել Կարապետյանի որդու հարսանիքի արարողությանը ՀՀ նախագահի մասնակցությունը պետական բյուջեին արժեցավ 15,378,000 ՀՀ դրամ[80]:

Ապրիլյան պատերազմի բացահայտումներ

2016թ. ապրիլի 2-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված քառօրյա պատերազմի օրերին ակնհայտ դարձան բանակում տիրող որոշ կոռուպցիոն երևույթներ, մասնավորապես, զինվորական տեխնիկայի ոչ պատշաճ պատրաստվածություն, անորակ վառելիքի մատակարարում և զինամթերքի մատակարարման խափանումներ[81]:

2016թ. մայիսի 18-ին իշխանությունը չարաշահելու համար մեղադրանք առաջադրվեց ՀՀ զինված ուժերի սպառազինության վարչության ավտոծառայության պետ, գնդապետ Դավիթ Աբրահամյանին: Վերջինս իրեն լիովին մեղավոր ճանաչեց, ցուցմունք տվեց և ամբողջովին վերականգնեց ՀՀ պաշտպանության նախարարությանը պատճառված վնասը:

2016թ. մայիսի 23-ին ՀՀ զինված ուժերի սպառազինության պետ-վարչության պետի պաշտոնից ազատվեց գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանը: Մոտ մեկ շաբաթ անց նա և գնդապետներ Արմեն Մարգարյանը և Միհեր Պապյանը ձերբակալվեցին: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության, ձերբակալված ՊՆ գեներալն ու գնդապետերը կասկածվում են իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, անգործության կամ

[78] https://www.youtube.com/watch?v=z4qHaRwQtCo
[79] https://www.youtube.com/watch?v=lUX4b2faZXI
[80] https://goo.gl/GipDJ1
[81] Այստեղ և այսուհետ տե՛ս «Տեղեկանք.Ապրիլյան պատերազմական գործողություններից մեկ տարի անց», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2017թ. էջ 34 և 25-26: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://goo.gl/imMrrV

ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք դրսևորելու մեջ: Հիմնական խնդիրները վերաբերում են գնումների գործընթացներին:

Էթիկայի կանոնների խախտում

ՀՀ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը 18.02.2016թ.-ին որոշեց պատժել միանգամից 7 պատգամավորների, ովքեր քվեարկել էին ուրիշի փոխարեն: Այդ պատգամավորներն էին Առաքել Մովսիսյանը, Սեյրան Սարոյանը, Համլետ Հարությունյանը, Արշակ Մխիթարյանը, Կարեն Սարիբեկյանը, Սպարտակ Մելիքյանն ու Բազմասեր Առաքելյանը[82]: Դիմումը ներկայացրել էր լրագրող Լիլիթ Լալայանը, ով ըստ «Հրապարակ» թերթի, աշխատում էր նաև ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի տիկնոջ պատկանող «www.henaran.am» կայքում, որտեղից Լ. Լալայանը հեռացվել է վերոնշյալ պատգամավորների մասին տեսանյութի հրապարակումից անմիջապես հետո: Ըստ «Հրապարակի», պատճառը, թերևս, հանդիսացել է հենց այդ տեսանյութը վերոնշյալ հանրապետական պատգամավորների մասին[83]:

Էթիկայի կանոնների ակնհայտ և կոպիտ խախտմամբ աչքի ընկավ նաև Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը, ով Բարեկամավանի գյուղապետ Գարիկ Աբազյանին անվանել էր «դուռակ լակոտ» այն պատճառով, որ վերջինս դեմ էր արտահայտվել համայնքների խոշորացմանը[84]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ իշխանությունների կողմից հակակոռուպցիոն հանձնարարականների իրականացման կապակցությամբ շարունակում է խնդրահարույց լինել օրենքների արդյունավետ կիրառումը: Իրավական ակտերի նախագծման և ընդունման կապակցությամբ կրկին ականատես ենք լինում բավականաչափ քաղաքական կամքի առկայության, սակայն օրենքների կիրարկումը էապես կաղում է: Սրա օրինակ է հանդիսանում հակակոռուպցիոն քարոզչական աշխատանքների չկատարումն այն մարմինների կողմից, որոնք ունեն նման գործառույթներ:

Հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018թթ. գործողությունների ծրագիրը կարիք ունի թարմացման արդյունավետություն ապահովելու տեսակետից, քանի որ, ինչպես ցույց տվեց մոնիտորինգը, չնայած նրան, որ մեծամասամբ արդյունավետ են իրականացվում միջոցառումները, սակայն կոռուպցիայի ընկալման առումով վիճակը վատթարանում է: Այս հանգամանքը կարող է նշանակել, որ անհրաժեշտ է նոր գործողությունների ծրագրի ընդունում և այնպիսի մոնիտորինգային ցուցիչների սահմանում, որոնք հնարավորություն կտան չափել իրական ազդեցությունը: Բացի այդ, պետք է սահմանել այնպիսի միջոցառումներ, որոնք թիրախավորում են հասարակությանը հուզող հարցեր և որոնք կարող են ապահովել շղթայական ռեակցիա հակակոռուպցիոն ոլորտում:

[82] http://armtimes.com/hy/read/79849
[83] http://www.hraparak.am/?p=101804&l=am/etikayi+handznagoxov+dimely%D5%9D+ashxatanqic+zrkvelu+patchr
[84] http://armtimes.com/hy/read/88030

ՀԱՎԵԼՎԱԾ

Գծապատկեր 1. Հարուցված կոռուպցիոն գործերի դինամիկան բոլոր քրեական գործերի նկատմամբ



Գծապատկեր 2. Կոռուպցիոն գործերով նախապատրաստված նյութերի քննության արդյունքներ



Գծապատկեր 3. Հարուցված կոռուպցիոն գործերով քննության արդյունքներ



Գծապատկեր 4. Կոռուպցիոն գործերի դատական քննության արդյունքներ



Գծապատկեր 5. Հարուցված քրեական գործերի դինամիկան՝ ըստ առավելագույն թիվ կազմող կոռուպցիոն 7 հանցատեսակների



Գծապատկեր 6. Դատարանում քննված գործեր՝ ըստ առավելագույն թիվ կազմող կոռուպցիոն 6 հանցատեսակների



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն
2. ԵԽ «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի մասին» կոնվենցիա
3. ԵԽ «Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի» կոնվենցիա
4. ՀՀ օրենքը «Վերահսկիչ պալատի մասին»
5. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք
6. ՀՀ կառավարություն 08.10.2009թ. N1272-Ն որոշում
7. ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N165-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 24.10.2015թ.-ի N1141-Ն որոշում
9. ՀՀ կառավարության 29.12.2016թ.-ի N1383-Ն որոշում
10. ՀՀ Նախագահի 20.12.2016թ. ՈՆԿ-262-Ա կարգադրություն
11. ՀՀ Նախագահի 18.07.2007թ. ՈՆՀ-174-Ն հրամանագիր

Համացանցային աղբյուրներ

1. https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016#regional
2. https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf
3. https://freedomhouse.org/report/nations-transit/2016/armenia
4. https://freedomhouse.org/report/nations-transit-methodology
5. http://www.prosecutor.am/myfiles/files/Cank.pdf
6. https://rm.coe.int/16806c2af1
7. http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3(2012)21_Armenia_EN.pdf
8. http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3(2014)26_Second_Armenia_EN.pdf
9. http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round3/GrecoRC3(2014)26_Second_Armenia_EN.pdf
10. http://www.coe.int/t/dghl/monitoring/greco/evaluations/round4/Eval%20IV/GrecoEval4Rep(2015)1_Armenia_EN.pdf
11. http://parliamentmonitoring.am/docs/Monitoring_of_NA_8_session.pdf
12. http://www.parliament.am/committee_docs_5/Etika/Ethics_Guidebook_Arm.pdf
13. https://www.unodc.org/unodc/treaties/CAC/country-profile/profiles/ARM.html
14. https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf
15. https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/CountryVisitFinalReports/Armenia_UNCAC_Implementation_Report.pdf
16. https://transparency.am/hy/gcb/2016
17. http://www.prosecutor.am/am/mo/4200/
18. http://www.president.am/hy/press-release/item/2017/06/21/President-Serzh-Sargsyan-met-with-Vache-Gabrielyan-and-working-group-members/
19. https://www.oecd.org/corruption/acn/Armenia-ACN-Progress-Update-Oct-2016-ENG.pdf
20. https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia
21. http://www.ogp.am/hy/news/item/2016/11/18/WG_November/
22. https://www.e-gov.am/protocols/item/359
23. https://www.e-draft.am/projects/18/about
24. http://ethics.am/u_files/file/Ardir_Arajarkutyunner_.pdf

25. http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_7255205152422_HayecakargPDF.pdf
26. http://www.prosecutor.am/myfiles/files/Korupcia%20dataran.pdf
27. http://www.prosecutor.am/myfiles/files/Korupcia%20naxaqnnutyun.pdf
28. http://www.armstat.am/file/article/sv_12_16a_540.pdf
29. https://goo.gl/imMrrV
30. http://hetq.am/arm/news/73783/vardan-ayvazyani-tbilisyan-nerdrumnery-ansharzh-guyqn-u-ynkerutyunnery.html
31. http://armtimes.com/hy/read/84823
32. http://armtimes.com/hy/article/93968
33. http://hetq.am/arm/news/66918/panaman-nvatchats-hay-generaly%E2%80%A4-mihran-poxosyani-ofshorayin-ynkerutyunnery-ev-hashivnery-shveycarakan-bankerum.html
34. http://hetq.am/arm/news/67106/dahk-tsarayutyan-peti-dem-varuyt-chi-harucvel-spasum-en-dimumi.html
35. http://armtimes.com/hy/read/79849
36. http://www.hraparak.am/?p=101804&l=am/etikayi+handznagoxov+dimely%D5%9D+ashxatanqic+zrkvelu+patchar
37. http://armtimes.com/hy/read/88030
38. http://armtimes.com/hy/read/82146
39. https://www.youtube.com/watch?v=z4qHaRwQtCo
40. https://www.youtube.com/watch?v=lUX4b2faZXI
41. http://armlur.am/600404/
42. http://armlur.am/619215/
43. https://goo.gl/GipDJ1